Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի
մատենաշար **2**

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ԿԱՊՈՅՏ ԳԻՐՔԸ

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ
(1915 - 1916)

ՀԵՂԻՆԱԿ՝
ԴԵՐԿՈՄՍ ՋԷՅՄՍ ԲՐԱՅՍ

ԲՈԼՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ՆԵՐԿԱՅԱՑՒԱԾ ԵՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ
ՆԱԽԱՐԱՐ ՖԱԼԵՏՈՆԻ ԴԵՐԿՈՄՍ ԳՐԷՅԻՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ ՋՈՐՋ Ե-Ի
ՀՐՈՎԱՐՏԱԿՈՎ

ՆԵՐԿԱՅԱՑՒԱԾ Է ՊԱՌԼԱՄԵՆՏԻՆ ԵՒ
ԼՈՐԴԵՐԻ ԺՈՂՈՎԻՆ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 1916

ԹԱՐԳՄԱՆԻՉ՝
ԲԵՆԻԱՄԻՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԷՆԻ ՎԵՐԱԾՈՒՄ՝
ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Թեհրան 2012

Կեղծիքն էլ իր չափն ունի

Հաւատարիմ մեր աւելի քան մէկուկէս միլիոն նահատակների անմահ յիշատակին՝ ահա հրատարակութեան ենք տալիս «Ապրիլեան մատենաշար»-ի երկրորդ հատորը, որը իր տեսակի մէջ իւրայատուկ է եւ անփոխարինելի:

Ներկայ հատորը դերկոմս Ջէյմզ Բրայսի ծաւալուն գործի 684-էջանոց ամփոփ քաղուածոն է, որը հեղինակը պատրաստել եւ ներկայացրել է իր երկրին՝ Անգլիական կառավարութեանը՝ Հայոց Մեծ Եղեռնի մասին (1915-1916) եւ որը հրատարակուել է «Կապոյտ գիրքը՝ Հայոց Մեծ Եղեռնի մասին» վերտառութեամբ:

Գիրքը օրուայ Ջորջ Ե թագաւորի հրովարտակով ներկայացուել է պառլամենտին եւ Լորդերի պալատին՝ 1916 թուականի հոկտեմբերին: Սոյն գիրքը հայերէնի է թարգմանել Բենիամին Պետրոսեանն ու այն տպել Կ. Պոլսում՝ 1919 թուականին:

Այս փոքրածաւալ գիրքը մի փոքրիկ յիշատակարան է այն ծաւալուն, փաստագրական-վաւերագրական, ականատեսների վկայութիւններով յագեցուած երկու հատորների՝ հրատարակուած 1916 թուականին՝ Լոնդոնում:

Այս երախտարժան գործը, ի չարս այլ բազմահարիւր, այլեւ բազմահազար գործերի, խօսուն վկայութիւնն է Հայոց Ցեղասպանութեան՝ գործադրուած Օսմանեան պետութեան կողմից, համաձայն նախօրօք պատրաստուած, լաւապէս ուսումնասիրուած եւ ապա գործադրութեան դրուած ծրագրի:

Արեւի ճառագայթների պայծառութեամբ փայլատակող այս փաստագրութիւնների դիմաց Ցեղասպանութեան ուրացման եւ կամ ժխտման յետեւից գնացող անգէտներն ու պատմութեան եւ պատմութեան զգացողութիւնը չունեցողները այնքան խեղճանում են, որ այդ խեղճութիւնից դուրս գալու իրենց ջանքը նմանում է այն մարդու, որ կանգնած պայծառ ու լուսաշող արեւի դիմաց՝ ձայն է տալիս նրան.

«Արեւ, արեւ, ինչի՞ յետեւից ես,
Դու արեւ չես, այլ՝ գիշերային խաւար,
Ինչո՞ւ ես իզուր փորձում լուսաւորել
Խաղաղ երկիրը մեր եւ մեզ «խաւարեցնել»:

Ամէն անգամ, երբ կարդում եմ Հայոց Ցեղասպանութեան մասին որեւէ գիրք, փաստագրական-վաւերագրական աղբիւր եւ կամ դիտում եմ աւերակները մեր հինաւուրց վանքերի ու եկեղեցիների, խռովում է հոգիս ու յուզումը պատում է ողջ էութիւնս եւ ակամայ մտաբերում եմ սաղմոսերգուի բառերը.

«Ո՛վ Աստուած, հեթանոս ազգերը
Քո տիրութիւնը մտան,
Քո սուրբ տաճարը պղծեցին,
Երուսաղէմը աւերակի վերածեցին:
Քո ծառաների դիակները
Կեր դարձրին գիշակեր թռչունների,
Քեզ հաւատարիմ մարդկանց մարմինները
Կեր դարձրին վայրի գազանների» (*Սղ*. 78:1-2):

Ընթերցողը այս փոքրածաւալ գրքում կը գտնի վկայութիւններ, պատումներ, որոնք ժամանակին մարդ միայն հեքիաթներում կարող էր գտնել, իսկ 20-րդ դարի երկրորդ տասնամեակի կէսին դրանք գտնւում են արդի պատմութեան էջերում, արդի Օսմանեան պետութեան արիւնալի պատմութեան էջերում, ու զարմանալին այն է, որ այսօրւայ Թուրքիայի ղեկավարները փորձում են ուրանալ իրական ու վաւերագրական պատմութիւնը եւ իրենք իրենց համար նոր պատմութիւն են յարմարեցնում:

Ուզում եմ վկայակոչել «Թարաֆ» թերթի գլխաւոր խմբագիր Ահմեդ Ալթանի էրդողանին տւած խիստ պատասխանից մի բաժին, որտեղ նա գրում է. «Մեր նախնի (Էջդադ) ասւած բոլոր խալիֆների եւ փադիշահների մեծ հայրերը քրիստոնեաներ են եղել: Նրանց մի մասը նոյնիսկ քրիստոնեայ հոգեւորականներ են եղել: Վստահ եմ, որ մեր միջից ո՛չ մէկը, նոյնիսկ վարչապետ Էրդողանը չի կարող ասել, թէ ինչ էր Սուլթան Սուլէյմանի մօրենական մեծ հօր անունը... Մենք մեզ համար թուրքական ու մահմեդական մի պատմութիւն ենք յարմարեցրել՝ արհամարհելով Անատոլուի բոլոր ժողովուրդներին ու հսկայ Բիւզանդիոնին: Կարծես թէ՝ Անատոլուում կեանքը սկսւեց Ալփասլանի գալուց յետոյ» *եւ ապա յաւելում է*. «Մինչեւ հիմա քեմալիստներն էին, որ պատմութիւնը յարմարեցնում էին, հիմա էլ՝ պահպանողականներն են նոյն բանն անում (նկատի է առնւել վարչապետ Էրդողանը): Ըստ նրանց՝ օսմանեան սուլթանները ձիուց վար չէին իջնում, չէին համբուրւում, սեռային յարաբերութիւն չէին ունենում, իրենց գլուխները նամազից չէին բարձրացնում: Մի հաւաքականութիւն պաշտօնական պատմութեան ստերից հոգեպէս մաքրագործւելով՝ ընդարձակւում եւ ստերից փրկւում է»:

Այս խօսքերը մի թուրք խմբագրի խօսքերն են, որոնց միտք բանին, վստահաբար, այն է, թէ մինչեւ երբ մարդ կարող է իր սեփական ժողովրդին խաբել յերիւրածոյ պատմութիւններով: Այո՛, սուտն ու կեղծիքն էլ իրենց չափն ունեն:

Հարիւրամեակի նախասեմին կանգնած՝ մեր ողջ ժողովուրդը աշխարհով մէկ առաջին հերթին պէտք է գիտակցի, որ Թուրքիան յափշտակող, զաւթող պետութիւն է, որը գրաւել է մեր պատմական Հայրենիքի եօթանասուն տոկոսը եւ որպէս յափշտակող ու գրաւող՝ փորձում է մեր պատմական երկրի տարածքում գտնւող մեր բոլոր պատմական եկեղեցիներն ու վանքերը, յուշակոթողներն ու խաչքարերը քանդել, փչացնել եւ դրանց հետքը կորցնել ու ապա յայտարարել, որ ինքը խաղաղասէր, մշակութասէր եւ քաղաքակրթութիւն ունեցող ազգ է: Ո՞րտեղ են հայոց վանքերը՝ Վարագայ վանքը, Առաքելոց վանքը, Կարմրավանքը, Վանայ լճի չորս կղզիների վանքերն ու եկեղեցիները, Նարեկայ վանքը, Ս. Բարթուղիմէոս առաքեալի վանքը եւ դեռեւս հարիւրաւոր ու հազարաւոր վանքեր ու եկեղեցիներ, այն վանքերը, որոնց «մութ ու խոնաւ» խուցերում մեր պատմիչներն ու դպիրները մեր պատմութիւնը կերտեցին:

Երկրորդ՝ կոչւած ենք՝ ոչ միայն սովորելու, ուսումնասիրելու մեր պատմութիւնը, այլ այն պէտք է ապրել ամէն րոպէ իր նւաճումներով, սխրագործութիւններով, ինչու չէ նաեւ՝ բացթողումներով: Ամէն մարդ, ժողովուրդ կոչւած է՝ ճանաչելու իր պատմութիւնը՝ իր հարազատութեան մէջ, եւ պատմութեան ճշմարտութեամբ զինւած՝ պէտք է շարունակի իր պահանջատիրական պայքարը՝ անվհատ եւ արարատանման հաւատքով ու հաստատակամութեամբ: Մարդկային կեանքի փորձը ցոյց է տւել, որ հաւատացողի, իր պահանջատիրական պայքարի արդա-

բացիութեանը եւ ճշմարտացիութեանը հաւատացողի համար անկարելի բան չկայ:

Երրորդ՝ մեր պահանջատիրական պայքարը բազմաճիւղ, բազմերես եւ բազմաճակատ է: Մեր պայքարը պէտք է մղենք զգօնութեամբ, զգուշաւորութեամբ, գիտութեամբ, ինքնաճանաչողութեամբ, շրջապատի եւ յատկապէս թշնամու յայտնի եւ անյայտ ծրագրերի ուսումնասիրութեամբ եւ ճանաչումով, որպէսզի կարողանանք մեր գործունէութիւնն ու առաքելութիւնը նպատակային դարձնել:

Որեւէ գործի, պայքարի յաջողութիւնը երաշխաւորւում է արտաքին եւ ներքին ազդակներով, տեսլներով. արտաքին ազդակը պէտք է ծառայի մեր արդար դատի, պատմական իրողութիւնների, Հայաստանի եւ հայութեան պատմութեան արտաքին աշխարհին ճանաչեցման գործին. հսկայ եւ մեծ պատասխանատուութիւն պահանջող գործ է՝ նիւթական մեծ պարտաւորութիւնների կողքին: Նոյնքան եւ կարեւոր են ներքին ազդակները՝ միասնականութիւն, համատեղ գործակցութիւն, համախմբում, ուսումնասիրուած, իմաստաւորէն ծրագրուած աշխատանք, որը Հայաստանը, Արցախը եւ Սփիւռքը պէտք է համագործակցաբար առաջ տանեն՝ ամէն մէկը իր պայմանների թոյլ տուած չափով:

Նման աշխատանքներով հնարաւոր կը լինի լուեցնել քոլոնէլ Ռամիլ Մելիքովի նման անբան մարդկանց, ովքեր առանց ամաչելու եւ մանաւանդ տեղեակ չլինելով պատմութեանը՝ տգիտաբար յայտարարում են, որ «Առաջիկայ 25 տարիների ընթացքում Հայաստան կոչուած պետութիւն գոյութիւն չի ունենայ Հարաւային Կովկասում: Կարծում եմ, որ 25-30 տարուայ ընթացքում նրա (իմա Հայաստան) երկնակամարը դարձեալ կենթարկուի Ադրբեջանի իշխանութեան». ինչպիսի անպատկառ եւ միաժամանակ՝ թունալից արտայայտութիւն: Կեղծիքի ու պատմական խախուտ հարթակի վրայ առաջ եկած այսպէս կոչուած Ադրբեջան երկրի այս «իշխանաւոր»-ը չի գիտակցում, որ Հայաստանն ու հայութիւնը պատմութեան ծնունդ են եւ հազարաւոր տարիների քաղաքակրթութեան տէր են եղել ու են եւ դեռեւս նոյն հոգով ու ոգով շարունակում են իրենց առաքելութիւնը՝ մարդկային կեանքի յարգանուտում որպէս վարար գետ ոռոգելու համար

նրանց կեանքը, ովքեր ծարաւն ունեն ճշմարիտ գիտութեան եւ քաղաքակրթութեան: Իսկ իր երկիրը՝ Ադրբեջան, լոկ պատահականութեան ծնունդ է եւ ուրիշ ոչինչ:

Դերկոմս Ջէյմզ Բրայսի վաւերա-փաստագրական երկու հատորների վերջին էջում տեղադրուած հետեւեալ պատգամով ուզում եմ ամփոփել իմ մտածումները. պատգամը Հալէպում գործող գերմանական բարեսիրական գործակալութիւնից էր փոխանցուած Գերմանիայի դեսպանատան միջոցով, որում տեղեկագրւում է իրենց գործակից-օժանդակողների այցը՝ դէպի լայնածիր անապատ, դէպի Դեր Զոր ու այլ վայրեր, որտեղ տեսան տեղահանուած հազարաւոր հայերի՝ բաց երկնքի տակ, որոնք խմբով Եփրատի եզերքով իջնում էին, ոմանք՝ նաւակներով եւ ոմանք էլ՝ հետիոտն:

Թշուառութիւնն ու յուսահատութիւնը այնքան խոր էր, ազդեցիկ ու համատարած, որ շատերը դիմում էին անձնասպանութեան: Հարիւրաւոր երեխաների հաւաքում էին դաստիարակութեան կամ խնամատարութեան պատրւակով եւ, սակայն, երկու շաբաթ յետոյ լսւում էր նրանց անհետ կորստեան մասին: Այսպիսին էր դրութիւնը այդ օրերում՝ 1916 թւականի յուլիսի 22-ի տեսլներով...

Այսօր հայ ժողովուրդը յաղթահարել է թշուառութիւնը. նա իր կեանքի բառարանից դուրս է հանել յուսահատութիւն *բառը եւ դրա փոխարէն դրել վճռականութիւն ու վճռակամութիւն, այլեւ հաստատակամութիւն՝ պատւանդանուած հաւատքի, յոյսի եւ սիրոյ անխորտակելի եւ կենսաւորիչ ճշմարտութիւնների վրայ եւ անխորտակ կամքով շարունակում է իր կեանքի ու պահանջատիրութեան պայքարը՝ միշտ տեսիլքով իր պատմական ու ամբողջական Հայրենիքի՝ իր ամբողջական ժողովրդով:*

ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
Դեկտեմբեր 2012

Թեհրան

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայ մարտիրոսագրութեան այս գլուխգործոցը համակ ուշադրութեամբ ընթերցելուց յետոյ՝ առաջին հերթին անսահման հիացմունք ու երախտագիտութիւն եմ զգում մեծանուն հայասէր, դիւանագէտ Ջէյմս Բրայսի եւ բոլոր նրանց հանդէպ, ովքեր լոյս ընծայեցին մի այսպիսի հոյակապ աշխատութիւն:

Գրքի իւրաքանչիւր տողը մի հրեղէն սիւն է, որն ընթերցողին առաջնորդում է դէպի հայկական Գեթսեմանիի դաշտերը եւ Գողգոթայի լեռները, դէպի աւազուտ անապատներ, դէպի Եփրատի եւ Տիգրիսի ծփուն ափերը եւ Սեւ ծովի դաժան ալիքները, ուր կայէնեան դիւային ոգին, մերկացած մարդկային դիմակից, այնպիսի ոճիր գործեց, ինչպիսին երբեք պատմութիւնը չէր արձանագրել:

Այդ տողերն ընթերցելով՝ աստուածային ուժ է թափանցում մեր հոգիների խորքերը: Ճշմարտութեան ու արդարութեան յաղթանակի հաւատքն ու համոզմունքն է վերահաստատւում մեր մէջ եւ ցոյց տալիս, որ մեր նահատակ ցեղի 1915-1916 *թւականների մարտիրոսութիւնը խաչելութեան ու յարութեան տիեզերական խորհրդի կրկնութիւնն է:*

Ձենք կարծում, թէ անգլիացի մեծահանճար ծերունի դիւանագէտն ու նրա ազնիւ աշխատակիցները սոսկ ջարդագրութիւն են խմբագրել. ո՛չ: Իրենց կատարած գործի մէջ երբեք նման մտայնութիւն չեն արտայայտել: Նրանք, իրենց ցեղին ընորոշ, սառնարիւն խորհրդածութեամբ ու սառնասիրտ տրամաբանութեամբ՝ ջարդերի բոլոր տեղեկագրութիւնները քննել, մաղել, ստկել (սուտը ճշտից զատել) եւ միմիայն ապացուցած իրադարձութիւններն են արձանագրել: Այնպէս որ՝ «Կապոյտ գիրք»-ը Հայոց Մեծ Եղեռնի անհերքելի ապացոյցների գիրքն է՝ դրուած աշխարհի խղճի ու դատաստանի առջեւ: Այն մի կոթող է՝ հոյակապօրէն դրուած մարդկութեան ու արդարութեան առջեւ՝ յիշեցնելու 1915-1916 *թւականներին Մերձաւոր Արեւելքում կատարուած եղեռնագործութիւնը:*

Հարիւր յիսուն վաւերաթղթեր են ամփոփուած գրքում՝ գրուած տարբեր՝ ութսունհինգից աւելի վայրերում եւ մեծաթիւ

ականատես վկաների կողմից: Վկաների մէջ կան ոչ միայն գերմանացիներ, այլ նաեւ՝ ամերիկացիներ ու եւրոպական բոլոր ազգերի ներկայացուցիչներ, ովքեր ականատեսներն են հայ ազգի սրածութեան ու առեւանգութեան, տեղահանութեան ու կողոպուտի, մանկաջարդութեան ու հրէշային սպանութիւնների եւ այն բոլոր հրէշակերտ մարդախողխողութիւնների, որոնք անգլիական աշխարհահռչակ թերթը՝ «Թայմզ»-ը, «սպիտակ ջարդ» (White massacre) *կոչեց:*

Արդարեւ, իւրաքանչիւր հայի կեանքը ջարդի սարսափներով ծեծուած է, ամէն հայ իր ոդիսականն ունի: Մեր պատմութիւնը քրոնիկ ջարդագրութեան օրագրութիւն է: Մենք գիտենք եւ զգում ու տեսնում ենք այն, ինչին օտարները, տարիներով մեր մէջ ապրելով հանդերձ, անհաղորդ են մնում: Նրանք, որոշ բացառութեամբ, մնում են իրենց յատուկ տեսութիւնների ու խորհրդածութիւնների սահմանում, ինչն իրենք անւանում են չէզոք դատողութիւն, անաչառ պատմուածք, իրողութիւնների յայտնութիւն:

Ահաւասիկ, անգլիական կառավարութեան հրատարակած «Կապոյտ գիրք»-ն այս տեսակէտով է ընդունուել անգլիացի ազգի եւ բոլոր ազգերի պաշտօնական եւ ոչ-պաշտօնական շրջանակների կողմից: Այն Հայոց Մեծ Եղեռնի ապացոյցների գիրքն է, որի պակասը մեր գրականութեան մէջ զգալով եւ ծառայութիւն մատուցած լինելու համոզածութեամբ՝ թարգմանեցինք ներկայ աշխատութիւնը:

Թարգմանիչ՝
Բ. Պ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒ

ՆԱԽԱԲԱՆ

ԴԵՐԿՈՍՍ ՋԷՅՍՍ ԲՐԱՅՍԻ

ՆԱՄԱԿՆԵՐ

-Ա -

ԴԵՐԿՈՍՍ ԲՐԱՅՍԻ ՆԱՄԱԿՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԴԵՐԿՈՍՍ ԴՐԷՅԻՆ

Սիրելի՛ Էդուարդ Գրէյ.

Ասիական Թուրքիայի քրիստոնեայ բնակչութեան տարագրութիւնների ու ջարդերի լուրերը 1915 թւականի աշնանը հասան արեւմտեան Եւրոպա եւ Միացեալ Նահանգներ՝ նախապէս համառօտ ու կցկտուր: Թէպէտ եւ թուրքական կառավարութիւնն ամէն գնով ջանաց արգելք հանդիսանալ այդ լուրերի՝ երկրից դուրս գալուն եւ տարածուելուն, սակայն դէպքերը հետզհետէ դարձան բազմաթիւ եւ առաւել մանրամասնուեցին, մինչեւ որ 1915 թւականի սկզբներին հնարաւոր դարձաւ ճշգրիտ տեղեկութիւններ ստանալ տեղի ունեցած սոսկալի ջարդերի մասին:

Այդ ժամանակ, յանուն պատմութեան եւ ի ծառայութիւն այն խնդիրների, որոնք ծագելու էին պատերազմից յետոյ, իմ պարտականութիւնը համարեցի բոլոր տեղեկագրութիւնները քննել, գնահատել ու դասաւորելով՝ ամփոփել մէկ հատորի մէջ: Այս

գործը գլուխ բերելու համար՝ պակասում էին անհրաժեշտ նիւթերը: Ուստի՝ գրեցի բոլոր նրանց, ովքեր, կարծում էի, գիտեն կամ կարող են, որպէս լրացուցիչ տեղեկութիւններ, հայթայթել ճշգրիտ տեսակներ եւ ուղարկել ինձ: Մասնաւորապէս, դիմեցի ամերիկացի բարեկամներիս, ովքեր երկար ժամանակ մօտ յարաբերութիւններ են ունեցել Արեւելքի քրիստոնեաների հետ:

Ամերիկան այն երկիրն է, որ խիստ շահագրգռուած է Արեւելքի քրիստոնեաների կեանքով եւ նրանց ընդունել է իր երկիր՝ որպէս հալածանքներից խոյս տուած քրիստոնեաների: Տարիների ընթացքում այս գաղթական քրիստոնեաներն Ամերիկայում եւ Մերձաւոր Արեւելքում դարձան յարաբերութիւններ զարգացնող կենսունակ միջոց: Նմանօրինակ խնդրանքներ յղեցի նաեւ Շուէյցարիայում գտնուող բարեկամներիս: Այդ չէզոք երկրի ժողովրդից շատերը Հայ Դատի հանդէպ բուռն հետաքրքրութիւն են դրսեւորել:

Երբ նշուած վայրերից ստացածս պատասխանները ցոյց տուեցին, որ ակնկալուած նիւթերն արդէն մեր տրամադրութեան տակ են եւ բաւարար են պատմութիւն գրելու համար, իսկոյն գործի անցայ: Բարեբախտաբար, կարողացայ ապահովել նշանաւոր ակադեմիկոս պրն. Առնոլդ Թոյնբիի (Mr. Arnold Toynbee, Ballial College Oxford) համագործակցութիւնը. նա ստանձնեց քննել ու միացնել հաւաքուած ապացոյցների պատառիկները՝ դրանք կարգով դասաւորելով եւ ի հարկին յաւելելով նաեւ մի շարք աշխարհագրական ու պատմական ծանօթութիւններ:

Ձեզ եմ ուղարկում այս նշանաւոր գիտնականի բովով անցած տեղեկագրութիւնները, որոնք, անշուշտ, անգուգական արժէք ունեն: Դրանց մեծագոյն մասն ականատեսների մանրամասն նկարագրութիւններն են, իսկ մի փոքր մասը՝ երկրորդական տեսակներ: Համառօտ ներածութեամբ փորձել եմ գնահատել դրանց արժէքը, բայց պարտաւոր եմ ասել, որ երբեք տեղ չի տրուել այնպիսի լուրերի, որոնց իսկական ճշգրտութիւնը կասկածի տեղիք են տալիս՝ խոյս տալով քաղաքականութիւնն ակնարկող ապագայ խնդիրներից:

Մենք, որոշակի մտադրութեամբ, ոչ միայն ստուգուած, փաստացի իրողութիւններն արձանագրեցինք՝ ի սպաս ապագայ պատմաբանների, այլ նաեւ պատերազմող ազգերի հանրային կարծիքի եւ, գտնուելով չէզոք երկրներում, հնարաւորութիւն ունեցանք նրանց համար եւս լուսաբանել եւ ցոյց տալ, թէ ինչե՞ր են կատարուել Փոքր Ասիայում ու Հայաստանում: Միեւնոյն ժամանակ, չմոռանանք ասել, որ այս գործը խիստ հրահանգող պիտի լինի, երբ, Ընդհանուր՝ Համաշխարհային պատերազմի աւարտից յետոյ՝ ձեռնարկի Մերձաւոր Արեւելքի քաղաքական վերակազմաւորումը:

Ձերդ անկեղծօրէն
ԲՐԱՅՍ

Բ ՆԱՄԱԿ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ՝ ԴԵՐԿՈՄՍ ԳՐԷՅԻՑ՝ ԴԵՐԿՈՄՍ ԲՐԱՅՍԻՆ

Սիրելի՛ Բրայս,

Շնորհակալութիւն եմ յայտնում Ձեզ, որ ինձ ուղարկեցիք հայոց ջարդերի փաստաթղթերի հաւաքածոն, ինչն այնքան յաջող կերպով դասաւորել է պրն. Թոյնբիին:

Ապացոյցների ու յայտնութիւնների մի սոսկալի զանգուած է այն: Սակայն, խորհում եմ, որ պէտք է այդ հաւաքածոն հրատարակւի եւ ուսումնասիրւի բոլոր նրաց կողմից, ովքեր իրենց սրտում կրում են մարդկութեան սէրն ու հետաքրքրութեան ոգին: Այն խիստ արժէքաւոր կը լինի ոչ միայն հանրային կարծիքը լուսաբանելու, անպաշտպան ժողովրդի հանդէպ թուրքական կառավարութեան վարած հետեւողական քաղաքականութեան մասին ծանօթութիւններ տալու առումով, այլ նաեւ տեղեկութիւնների հանք է՝ պատմաբանների եւ Ձեր նամակում ակնարկուած նպատակների համար:

Ձերդ անկեղծօրէն

ՖԱԼԵՏՈՆԻ ԴԵՐԿՈՄՍ ԳՐԷՅ

Գ ՆԱՄԱԿ

«ՇԵՖԻԼԴ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ ՊՐՆ. Հ. Լ. ՖԻՇԵՐԻ ՆԱՄԱԿԸ՝ ԴԵՐԿՈՄՍ ԲՐԱՅՍԻՆ

«Շեֆիլդ» համալսարան, 2 օգոստոսի 1916

Սիրելի՛ Լորդ Բրայս,

Օսմանեան կայսրութեան հպատակ հայերի ներկայ պատերազմի ընթացքում կրած տառապանքների մասին այստեղ հաւաքւած, ի մի բերւած վկայութիւնները փաստեր են տալիս այն բոլոր անկեղծ ուսումնասիրողներին, ովքեր քննում են դրանք: Այդ վկայութիւններն ամփոփում են բոլոր ճշգրիտ ու ճշմարտացի նշաններն ու նկարագրութիւնները, քանի որ գործերն արձանագրւած են տեղի ունենալուց անմիջապէս յետոյ, երբ յիշողութիւնները դեռ թարմ էին եւ կսկծացնող: Նաեւ դրանց մեծագոյն մասը պատմել են ականատեսները, իսկ մնացեալն այնպիսի անձանց տեսութիւններն են, ովքեր ճշմարտացի ու ճշգրիտ տեղեկութիւններ ստանալու պատեհութիւնն ունէին:

Ճիշտ է, վկաների մի մասը հայեր են, որոնց վկայութիւնները դոյգն-ինչ գունաւորւած ու աղաւաղւած կարող են համարւել, սակայն միայն նրանք չեն: Հայերի պատմածները համապատասխանում են ամերիկացիների, դանիացիների, շէյցարացիների, գերմանացիների, իտալացիների եւ ուրիշ օտարերկրացիների տւած տեղեկութիւններին: Եւ այս վկայութիւնները տրւել են այնպիսի տղամարդկանց ու կանանց կողմից, ովքեր, իրենց դիրքի ու կոչման շնորհիւ, արժանի են յարգանքի ու վստահութեամբ ունկնդրութեան:

Այսինքն՝ այնպիսի մարդիկ են, ովքեր իրերը դիտում են իրենց հանդարտ բնաւորութեան ու ողջ բանականութեան սահմաններում եւ չեն առաջնորդւում սոսկ մարդկային զգացմունքներով ու երբեք թուրքատեաց չեն եղել՝ հակառակ նրան, որ ակա-

նատեսները դարձան Թուրքիայում ապրող հայերի տեղահանութեան ու ջարդերի: Նրանք պատրաստ են ընդունել այնպիսի իրողութիւններ, որոնք իսլամ հասարակութեան որեւէ անդամի համար կարող են պատուաբեր ընթացք մատնանշել:

Ինձ վրայ մեծ ազդեցութիւն են թողել այս հաւաքական ապացոյցները: Ով էլ խօսի այդ նշուած գաւառների մասին, որ կողմերից էլ ստացուած լինեն այս տեղեկագրերը՝ մէկ է՝ նոյն պատմութիւններն են նկարագրում: Աչքի զարնող տարբերութիւններ ու հակասութիւններ չկան: Ընդհակառակը՝ ցիրուցան պատառիկները փոխադարձաբար լրացնում եւ համապատասխանում են միմեանց:

Երբեք չենք կարող տարակուսել այն կարկառուն ու անհերքելի իրողութեան հարցում, թէ հայ ժողովուրդն արմատախիլ է արուել իր տներից, ցիրուցան սփռուել, բնաջնջուել՝ Կ. Պոլսից ստացուած մի ընդհանուր հրամանով: Պարզ է, որ ներկայ պատմութեան մէջ նկարագրւում է այն իրողութիւնը, թէ ամբողջովին անզուգական ու աննախընթաց սպանդ է կատարուել Օսմանեան կայսրութեան մէջ գտնուած հայերի նկատմամբ: Այդ սպանդի բացայայտ ու իսկական պատասխանատուն Կ. Պոլսի կենտրոնական կառավարութիւնն է, որի պատրաստած սրածութեան քաղաքականութիւնը գաւառներում իրականացրել է Իթթիհադի կոմիտէն:

Նկատի առնելով այն իրողութիւնը, համաձայն որի՝ աւստրիական դեսպանը, տեղահանութիւնից զերծ մնալու նպատակով, մասնակի հրամաններ է ձեռք բերել կաթոլիկ հայերի համար, անխուսափելիօրէն եզրակացնում ենք, որ այս ահռելի ու սարսափազդու սրածութիւնը կարող էր եթէ ոչ ամբողջովին, գոնէ մասնակի կերպով արգելւել, եթէ Օսմանեան կառավարութեան երկու դաշնակից պետութիւններն ազդու եւ ուժեղ միջամտութիւն անէին Օսմանեան կառավարութեան մօտ: Ընդհակառակը՝ որոշ փաստաթղթեր գալիս են ապացուցելու, որ այս երկու տէրութիւնները համամիտ էին տեղահանութեան քաղաքականութեանը:

Ձերդ՝
ՀԵՐԲԵՐՏ ՖԻՇԵՐ

Դ ՆԱՄԱԿ

ՕՔՍՖՈՐԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՅՈՒՆԱԳԷՏ ՊՐՈՖԵՍՈՐ ԳԻԼԲԵՐԴ ՄԵՐՐԷՅԻ ՆԱՄԱԿԸ՝ ԴԵՐԿՈՍՍ ՋԷՅՄՍ ԲՐԱՅՍԻՆ

Օքսֆորդ, 27 յուլիսի 1916

Սիրելի՛ լորդ Ջէյմս Բրայս,

Բաւականին ժամանակ նուիրեցի՝ ուսումնասիրելու 1915 թուականի գարնան եւ աշնան ամիսներին Օսմանեան կայսրութեան մէջ տեղի ունեցած տեղահանութեան ու ջարդերի մասին պատմող փաստաթղթերը, որոնք Դուք շուտով պէտք է հրատարակէք: Գիտեմ, թէ պատմաբանը որքան խնամքով է պարտաւոր հետազօտել այդքան ցնցող դէպքերի յուշարանները, դէպքեր, որոնք կատարուել են քաղաքակիրթ Եւրոպայի աչքերից հեռու գտնուող գաւառներում:

Ընդունում եմ, որ հալածանքի ժամանակ պոռթկում են կրքե-րը, որ արեւելեան ցեղերը հակամէտ են չափազանցեալ խօսք կիրառելուն եւ որ հարստահարութեան զոհերից չես ակընկալի, որպէսզի նրանք իրենց հարստահարողների մասին անկեղծօրէն խօսեն, սակայն այս տեղեկագրերի ու նամակների ապացոյցները դիմանում են ցանկացած քննադատութեան եւ ընկճում սկեպտիկ ոգին:

Նաեւ վստահ եմ, որ այդ փաստաթղթերի հաւաստիութիւնը կասկածից վեր է: Ուստի՝ իրաւունք ունէք թաքցնել տեղեկութիւններ հաղորդած անձանց անուններն ու գտնուելու վայրերը: Ամերիկացիները, սկանդինաւցիներն ու գերմանացիները հաստատում են հայերի վկայութիւնները: Եւ անկեղծ համաձայնութիւնը, նկարագրութիւնների համապատասխանութիւնը, որ գոյութիւն ունի այդ արժանահաւատ վկաների պատմածների միջեւ, ովքեր միմեանցից հեռու գաւառներում էին գտնուում, հաստատում են, որ պատմութեան գլխաւոր, հիմնական մասերը զերծ են ամէն տեսակի կասկածից:

Ձերդ՝
ԳԻԼԲԵՐԴ ՄԵՐՐԷՅ

Ե ՆԱՄԱԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԵՐՆԱԽԱԳԱՀ ՊՐՆ. ՄՈՖԻԼԴ ՍԹՈՐԻԻ ՆԱՄԱԿԸ՝ ԴԵՐԿՈՍՍ ԲՐԱՅՍԻՆ

Սիրելի՛ տիար,

Քննեցի ուղարկածդ գրքի այն հատուածները, որոնք պարունակում են հայերի հանդէպ թուրքերի գործադրած քաղաքականութեան մասին յայտարարութիւնները, որպէսզի կարողանամ, իբրեւ փաստեր, որոշել դրանց արժէքը: Տարակոյս չունեմ, որ մանրամասնութիւնների մէջ առկայ են մի շարք անճշտութիւններ, սակայն անհերքելի է, որ նմանատիպ յայտարարութիւնները պարունակում են էական իրողութիւններ:

Հարկ է նկատի ունենալ, որ այսպիսի իրավիճակներում ականատեսների վկայութիւնները դիւրութեամբ ձեռք չեն բերւում, որովհետեւ զոհերը շատ քիչ բացառութեամբ են ողջ մնում, իսկ չարագործներն իրենց արարքները չեն խոստովանի: Պատահական ականատեսներ նոյնպէս դիւրութեամբ չես գտնի. նրանցից ոմանք կա՛մ վախենում են խօսել իրականութեան մասին, եւ կա՛մ համամիտ են չարագործների հետ:

Դատարաններ չկան, որպէսզի ստիպեն նրանց կանգնել ատեանի առջեւ՝ վկայելու կատարուածի մասին: Ընդհակառակը՝ ոճրապարտ իշխանութիւնն ամենախիստ գրաքննութիւնն էր իրականացնում՝ իրականութիւնը թաքցնելու եւ ճշմարտութեան տարածումն արգելելու համար: Թոյլ չէր տալիս նաեւ, որ անկողմնակալ անձինք հետազօտութիւն կատարեն՝ ի խնդիր ճշմարտութեան:

Ձեր հրատարակելիք յայտարարութիւնները ձեռք բերուած ամենալաւ ապացոյցներն են ներկայ իրավիճակում՝ տրուած բարձր դիրքի, ծանրակշիռ մտածողութեան ու խօսքի տէր մարդկանց եւ կեղծելու որեւէ շարժառիթ չունեցող անձանց կողմից: Անհնար է դարբնել այսչափ համադէպ ու զանգուածային ապացոյցներ:

Մինչեւ իսկ գերմանական ամենախիստ գրաքննութիւններով անցած հաւաստի վկայութիւններ ունենք: Գրաքննութիւն, որ ինքնին խոստովանութիւն է, քանզի ոչ մի պատճառ չկայ, որ գերմանացիները թաքցնեն ճշմարտութիւնը: Եթէ առկայ էլ է, ապա գրաքննութեան միակ պատճառն այն է, որ նմանատիպ յայտարարութիւններով բացայայտում է այս հարցի հանդէպ գերմանական կառավարութեան ունեցած պատասխանատուութեան մերկապարանոց լինելը:

Իմ կարծիքով Ձեր երկն այնքան վստահելի է, որքան վստահելի կարող են լինել տիեզերապէս ընդունուած պատմական տեւալները: Եւ խորհում եմ, թէ այս փաստերն աներկբայօրէն հաստատում են թուրքական կառավարութեան յայտնի նպատակը, որն է ամբողջովին բնաջնջել հայերին, ինչպէս նաեւ մէջտեղից հանել, վերացնել իրենց պատասխանատուութեան հարցն այն դիւային եղեռնի համար, որ ի գործ դրեցին դժբախտ հայ ազգի նկատմամբ:

Ձերդ անկեղծօրէն՝
ՄՈՐՖԻԼԴ ՍԹՈՐԻ

Զ ՆԱՄԱԿ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՉՈՐՍ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԸ՝ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆՆ Ի ԲԵՌԼԻՆ[1]

8 հոկտեմբերի 1915, Հալէպ

Խորհում ենք, որ մեր պարտականութիւնն է արտաքին գործոց նախարարութեան ուշադրութիւնը հրաւիրել այն իրողութեան վրայ, որ մեր դպրոցական գործն ապագայի համար կորցնելու է իր բարոյական հիմքն ու հեղինակութիւնը՝ յաչս բնիկների: Միթէ գերմանական կառավարութեան ուժերից վե՞ր է դադարեցնել այն վայրագութիւնները, որոնց ենթարկւում են կոտորուած հայերի աքսորական կանայք ու մանկիկները:

Ի տես սոսկալի տեսարանների, որ ամէն օր բացայայտւում են մեր աչքերի առջեւ՝ մեր դպրոցի մօտակայքում, մեր կրթական գործունէութիւնը դարձնում են ծիծաղելի: Ինչպէ՞ս կարող ենք ունկնդիր դարձնել մեր աշակերտներին եօթ թզուկների հեքիաթը, ինչպէ՞ս կարող ենք ուսուցանել քերականական կանոնները եւ այլն, երբ մեր դպրոցի դռների մօտակայքում մահը խլում է իրենց սովալլուկ հայրենակիցների կեանքը, ուր, գետնի վրայ, բոլորովին մերկ, տղաներ ու աղջիկներ են պառկած՝ ոմանք դիակների մէջ, իրենց գերեզման ուղեկցող դագաղների մօտ, առնելով վերջին օրհասական շունչը:

Հայկական բարձրաւանդակից այստեղ բերեցին 2000-3000 քաջառողջ կանանց եւ այժմ նրանցից միմիայն 40-50 կմախքներ են մնացել: Ամենագեղեցիկներն իրենց բռնապետերի կրքերի զոհ են դառնում, իսկ տգեղները՝ ենթարկւում տառապանքի ու տանջանքի: Նրանք պառկում են ջրերի եզերքներին, սակայն խստիւ արգելւում է նրանց յագեցնել իրենց ծարաւը, որպէսզի մեռնեն քաղցից ու ծարաւից: Եւրոպացիներին արգելւել է հաց բաշխել սովալլուկներին:

Ամէն օր հարիւրաւոր դիակներ են դուրս բերւում Հալէպից: Այս ամէնը կատարւում է բարձրաստիճան թուրք սպաների աչքերի առջեւ: 40-50 *հիւծւած ուրուականներ են խռնւել մեր դպրոցի դիմաց. խելակորոյս կանայք են, որ, ուտելու մասին մոռացած, երբ իրենց հաց է տրւում, անտարբերութեամբ մի կողմ են նետում: Նրանք ողբալով՝ մահւան են սպասում:* «Գերմանացիների մարգանքը տուէք», - *ասում են բնիկները: Մերձաւոր Արեւելքի ժողովուրդների յիշողութեան մէջ գերմանական դրօշը յաւիտենապէս աղարտւելու վտանգի առջեւ է:*

Հալէպի բնիկների մէջ լուսամիտ մտածողներ կան, որ ասում են. «Գերմանացիները համամիտ չեն այս աղէտներին. թերեւս գերմանացի ազգը բնաւ տեղեկութիւն չունի դրանց մասին: Եթէ լուր ունենային, ճշմարտութեան կողմնակից գերմանական մամուլն ինչպէ՞ս կարող էր արդարացնել, դաւաճանութեամբ ամբաստանւած հայերի հանդէպ, թուրքերի ունեցած վարմունքը: Թերեւս գերմանական կառավարութիւնը կապել է իր ձեռքերը՝ միմեանց ներքին գործերին չխառնւելու մասին թուրք կառավարութեան հետ մասնաւոր պայմանագրեր կնքելով»:

Երբ խնդիրը վերաբերում է հազարաւոր կանանց ու մանուկների սովի պատճառով մահւան մատնւելուն, այլեւս «պատեհապաշտութիւն» *կամ* «ուժերի հաւասարակշռութիւն» *բառերը կորցնում են իրենց նշանակութիւնը, եւ իւրաքանչիւր քաղաքակիրթ մարդ իրաւունք ունի միջամտել, որովհետեւ դա իր գերագոյն պարտականութիւնն է: Մեր ազդեցութիւնն Արեւելքում վտանգւած է: Կան մարդասէր արաբներ ու թուրքեր, ովքեր, ի տես այս սոսկալի տեսարանների, տխրութեամբ համակւած, տարուբերում են իրենց գլուխները. ինչպէ՞ս չցաւեն ու չմտմտան, երբ քաղաքով անցնող աքսորականների քարաւաններում տեսնում են յղի կանանց, որ ծեծւում են ու խոշտանգւում վայրենաբարոյ ժանդարմների կողմից, որպէսզի աւելի հեռաւոր վայրեր ուղարկւեն:*

Ջեմալ փաշան ամենուր հրամաններ ուղարկեց, մասնաւորապէս Բաղդադի երկաթուղային գծի վրայ աշխատող մեքենագէտ պաշտօնեաներին եւ բացարձակապէս արգելեց լուսանկարել հայ տարագիրների քարաւանները: Նա նաեւ քսանչորս պայմանաժամ տուեց, որպէսզի մինչ այդ կատարուած լուսանկարները յանձնեն զինուորական իշխանութիւններին՝ սպառնալով անհնազանդներին ուղարկել ռազմական ատեան:

Դա նշանակում էր, որ աւելի սոսկալի սրածութիւն էր տեղի ունենալու, որովհետեւ տեսել հրամանը մատնացոյց էր անում այն փաստը, թէ պատասխանատու կառավարութիւնը վախենում է կատարուածի վրայ լոյս սփռելուց եւ միաժամանակ մտադիր չէ վերջ դնել այնպիսի արարքների, որոնք մարդկութեան դէմ անարգանք էին:

Մենք գիտենք, որ արտգործնախարարութիւնը տարբեր աղբիւրներից մանրամասն նկարագրութիւններ է ստացել այս մասին: Սակայն, ոչ մի փոփոխութիւն տեղի չի ունեցել տեղահանութեան տեսել համակարգի մէջ: Մենք մեր կրկնակի պարտականութիւնն ենք համարում գրել այս տեղեկագիրը, քանզի տեսնում ենք, որ գերմանացու անունը կորստաբեր վտանգի սպառնալիքի տակ է:

ԴԵՐԿՈՄՍ ՋԷՅՄՍ ԲՐԱՅՍԻ ՆԱԽԱԲԱՆԸ

1915 թուականի ամռան լուրերը, նախ քիչ ու կցկտուր, սակայն հետզհետէ բազմանալով՝ տարածուեցին ասիական Թուրքիայի սահմաններից դուրս: Մի ամբողջ ազգ բնաջնջող ջարդերի բօթերն էին դրանք, ջարդեր, որոնք Թուրքերն իրագործում էին առանց սեռի ու տարիքային խտրականութեան: Այսպիսի խժդժութիւնների միակ պատճառն անգութ ու անխիղճ կառավարութեանը հպատակ լինելու դժբախտութիւնն էր: Թուրքերը, ազգաջինջ ու արեւելեան արնաներկ տարեգրութիւնների մէջ աննախընթաց քաղաքականութիւն ընդգրկելով, գործադրում էին իրենց ծրագիրը:

Մեզ վրայ է այլեւս ծանրանում մի աւագ պարտականութիւն. այս դէպքերի կարեւորութիւնը հասկանալով, ընկալելով՝ ջանալ հաւաքել, ի մի բերել ու դասաւորել այն բոլոր տեսլները, որոնք հանդիսանալու էին նրանց մասին հեղինակաւոր ու լիակատար պատմութիւն գրելու ատաղձը, ինչպիսին է այս գիրքը: Վերջինս պարունակում է այն բոլոր փաստերը, որ հաւաքել են մինչեւ 1916 թուականի յուլիս ամսւայ վերջերը: Դրանք Փոքր Ասիայում եւ Հայաստանում, ինչպէս նաեւ Պարսկաստանի հիւսիսային սահմաններին, արշաւող Թուրքական բանակների պատճառով, տեղի ունեցած տեղահանութիւնների եւ եղեռնագործութիւնների մասին են:

Այս գիրքը խիստ գնահատելի մի ծառայութիւն է մատուցելու նաեւ պատմութեանը եւ մասնաւորապէս նպատակայարմար միջոց է Եւրոպայի քաղաքակիրթ ազգերի համար, ինչի շնորհիւ՝ նրանք պէտք է հասկանան այն խնդիրները, որոնք ծագելու են ընդհանուր՝ Համաշխարհային պատերազմից յետոյ: Սրանից բացի՝ գիրքն օգտակար է լինելու նաեւ ներկայ Թուրքական տիրապետութեանը յաջորդող ապագայ կառավարութիւններին:

Դասաւորութիւնը կատարել է պատմական հետազօտութեանը հարազատ ոգով, այսինքն՝ անկախ նրանից, թէ ինչպիսին էին դէպքերի քաղաքական նկատառումները, ոչինչ զանց չի առնուել այն ամենից, ինչը կարող էր լուսաբանել իրողութիւնները: Նման հետազօտութեան մէջ ո՛չ ցեղային կամ կրօնական համակ-

րութիւնները, ո՛չ էլ ոճիրների պատճառով առաջացած բնական սոսկումները քննողի միտքը չեն շեղել ճշգրիտ իրականութիւնն ստուգելու պարտականութիւնից:

Ինչպէս երեւալու է յաջորդ վերլուծութիւններից, այստեղ հաւաքւած ապացոյցները վերցւել են տարբեր աղբիւրներից: Դրանց մեծագոյն մասը տրամադրել են չէզոք ականատեսները, ովքեր ապրում կամ ճամբորդում էին ասիական Թուրքիայում այս դէպքերը տեղի ունեցած ժամանակ: Նրանք պատեհութիւն ունեցան սեփական աչքերով տեսնել եւ վկայել այդ ամենի մասին: Դրանց մի մասն էլ ստացել ենք բնիկներից, գրեթէ բոլորն էլ քրիստոնեաներ, ովքեր, հակառակ թուրքական ամենախիստ գրաքննութեանը, կարողացան փախչել Ցունաստան, Ռուսաստան, Եգիպտոս եւ գրեցին իրենց տեսածների մասին:

Երկրորդ, սակայն շատ փոքր մասը պատերազմող տէրութիւնների հպատակներից, մասամբ գերմանացիներից, վերցւած տեղեկագրեր են: Վերջիններս այդ դէպքերի ընթացքում ապրում էին Թուրքիայում եւ իրենց բուն երկրում հրատարակեցին սեփական աչքերով տեսածն ու լսածը: Այս գիրքը հրատարակելու առիթով յարմար չնկատեցինք հրապարակել փաստաթղթերի (դոկումենտներ) հեղինակների անունները, որովհետեւ նրանք եւ նրանց շատ բարեկամներ ու ազգականներ դեռեւս ապրում էին Թուրքիայում եւ կամ այնտեղ կալւածներ ունէին եւ ամէն վայրկեան կարող էին ժամանակի կառավարութեան վրէժխնդիր հալածանքներին ենթարկւել:

Մինչեւ իսկ չէզոք երկրներում ապրող ականատեսներն անգամ կարող էին հալածւել սուլթանի անունով իշխող վոհմակի կողմից: Եթէ նրանց անձերին վնաս չհասցէին, ապա Թուրքիայում գտնւող կալւածները կը գրաւէին՝ հակառակ չէզոքութեան օրէնքներին: Այս անխուսափելի դժւարութիւնները նկատի առնելով՝ նպատակայարմար գտանք որոշ ժամանակով գաղտնի պահել նրանց անունները:

Երբ վստահ լինենք, որ մեր վկաներն ու ականատեսները չեն տուժի, կը հրապարակենք նրանց անունները: Այդ ժամանակ լոյս կընծայենք բացարձակ իրականութիւնը, երբ այլեւս այս վայրենի ու հրոսակային կառավարութիւնը վայր դնի իր իշխանութիւնը եւ աւարտւի Ընդհանուր՝ Համաշխարհային պատերազմը:

Թէեւ հնարաւոր չէ շատ վկաների անուններ յիշատակել, սակայն կարող եմ ասել, որ նրանց մեծագոյն մասը չէզոք կամ թշնամի երկրի հպատակներ են եւ, թէ՛ դիրքով, թէ՛ նկարագրով լինելով վստահելի մարդիկ, դէպքերը հնարելու կամ խեղաթիւրելու որեւէ երեւակայական ու դրամական շարժառիթ ունենալ չէին կարող: Եթէ, ի միջի այլոց, կարողանայի յիշատակել յատկապէս գերմանացի ականատեսների անունները, ապա անվերապահօրէն կընդունւի ու կը հաստատւի նրանց ուղղամտութիւնը:

Քննենք այս փաստերը:

1- Ականատեսները կա՛մ անձամբ են տեսել ու գրի առել, եւ կա՛մ, բերանացի պատմելով, գրել են տւել իրենց տեսածները ջարդերից անմիջապէս յետոյ, երբ դեռ թարմ էին նրանց յիշողութիւնները եւ դեռ այդ դէպքերի ազդեցութեան տակ էին:

2- Տարբեր եւ միմեանցից անկախ աղբիւրներից վերցւած ապացոյցներն են կազմում գլխաւոր ու հիմնական իրողութիւնները: Երբ միեւնոյն դէպքը տեղեկագրւած է զանազան մարդկանց կողմից, ովքեր միմեանց հետ ոչ մի առնչութիւն չունէին, միեւնոյն լեզւով չէին խօսում, հաստատում են այն, ինչը ճշմարտացի է: Վերցնենք, օրինակի համար, ութերորդ հատւածի մէջ նկարագրւած Տրապիզոնի ջարդը (Փաստաթուղթ 73): Հռոմում իր տեսածներն է նկարագրել Իտալիայի հիւպատոսը:

Օսմանեան բանկի պահակը (դաւազը)՝ իտալական պաշտպանեալը Մոնտենեգրոյից, իր տեսածների մասին պատմել է Կահիրէում եւ մի հայ աղջնակ, որ իտալական հիւպատոսարանին դրացի հայ ընտանիքի զաւակն էր եւ, որպէս հիւպատոսի աղախին, փրկւել էր, Ռումինիայում նոյնպէս պատմել է այն բոլոր ահաւոր դէպքերի մասին, որ տեղի էին ունեցել իրենց քաղաքում:

Այս երեք ականատես վկաները միմեանցից անկախ եւ իրար գրեթէ անծանօթ էին, երբ տալիս էին իրենց վկայութիւնները: Այս երեք վկայութիւններն իսկապէս երբեք չէին համեմատւել միմեանց հետ այնքան ժամանակ, մինչեւ որ տարբեր ճանապարհներով հասան այս գրքի հեղինակին: Սրանց յաւելենք նաեւ տրապիզոնցի մի օտարականի վկայութիւնը, որ մեզ է հասել Ամերիկայից: Եւ կամ նկատի առնենք Էրզրումի կուսակալու-

թիւնից տեղահանուած աքսորեալների քարաւանները, Բաբերդ եւ Էրզրում քաղաքների բնակիչներին, որոնց ճակատագրի մասին ոչ-նուազ կարեւոր տեղեկութիւններ կան յիշուած թիւ 2 փաստաթղթում, որ խիստ կարեւոր աղբիւրից ստացուած զեկոյց է:

Մի թանկագին տեղեկութիւն եւս, որ գերազանցում է առաջինները, գրի է առնուել տեղահան եղած մի տիկնոջ միջոցով (փաստաթուղթ 59): Բացի այս՝ Երզնկայում գերմանական Կարմիր Խաչի դանիացի երկու քոյրերի պատմածները նկարագրում են Բաբերդի աքսորականների անցնելը Երզնկայով (փաստաթուղթ 62): Վերջապէս, այստեղ կան երեք վկաներ՝ աքսորեալների ճանապարհից բաւականին հեռու գտնուող Հ. քաղաքից: Նրանցից մէկը դանիացի է եւ գերմանական Կարմիր Խաչի հիւանդապահուհի, միւսը հայ, իսկ երրորդն էլ՝ մի չէզոք տէրութեան հպատակ, որոնք բնակւում էին Հ. քաղաքում: Նրանք տեսել են Էրզրումից, ինչպէս նաեւ շրջակայ միւս բնակավայրերից տեղահանուած աքսորականների քարաւանները (փաստաթուղթ 64):

Այս երկու եզակի օրինակներում արձանագրուած են դէպքերի խմբաւորումներ՝ միմեանցից անկախ ու հաւաստի, սակայն պարունակում են միատեսակ ու մասնակի դէպքերի բազմաթիւ նկարագրութիւններ: Բաբերդի եպիսկոպոսին կախելու մասին յիշատակւում է թիւ 7 փաստաթղթում գրուած Կ. Պոլսում: Թիւ 12 փաստաթղթում եւս, գրուած Գերմանիայում, յիշատակուած է նաեւ թիւ 59 փաստաթղթի հեղինակը, ով բնակւում էր Բաբերդում եւ տեղահանութեան ժամանակ այնտեղ էր:

Դարձեալ նշենք, որ աքսորի ճանապարհին Էրզրումի եպիսկոպոսի անհետացումը յիշատակւում է թիւ 11 փաստաթղթում, ինչպէս նաեւ Բուխարեստում մի ձեռնահաս անձնաւորութեան կողմից պատրաստուած յիշատակագրում: Ռուսների կողմից Էրզրումը գրաւելուց անմիջապէս յետոյ՝ միեւնոյն դէպքի մասին է վկայում մի ականատես եւս (տե՛ս. փաստաթուղթ 57 եւ 76):

3- Ճիշտ նոյնատեսակ, յար եւ նման բնոյթ կրող դէպքերը, որոնց մասին վկայում են միմեանցից անկախ ականատեսները, տեղի են ունեցել տարբեր բնակավայրերում: Ուստի՝ անուրանալի պատճառներ ունենք հասկանալու, որ Կ. Պոլսից տրուած յատուկ հրամանով են կատարուել տեղահանութիւններն ու ջարդերը: Արդարեւ, այն անհատները, ովքեր պատմում էին միմիայն մէկ վայրում պատահածների մասին, որոնք ճիշտ եւ ճիշտ նման էին այլ վայրերում տեղի ունեցած դէպքերին, հաստատում են երկու բնակավայրերի մասին արուած պատմութիւնների ստուգութիւնը:

(Փաստաթուղթ 62). Երկու դանիացի քոյրեր երկու անգամ տեսել են, վայրենի ու ոճրագործ վոհմակի ձեռքով, ամենայն սառնասրտութեամբ կատարուած, գործաւորների վաշտի հայ զինուորների ջարդը՝ Սւազի եւ Երզնկայի ճանապարհների վրայ (փաստաթուղթ 7, գրուած ի Կ. Պոլիս): Դարձեալ նմանատիպ խմբակային կոտորածներ են ի գործ դրուել Ուրֆայի ու Տիգրանակերտի, Խարբերդի ու Տիգրանակերտի ճանապարհներին: Վերջինիս մասին վկայում են Խարբերդում ապրող գերմանուհիները (փաստաթուղթ 23):

Մի այլ տեղում դարձեալ յիշատակւում է սպանուածների եւ ուժասպառութիւնից մահացածների դիակների մասին՝ կոյտ առ կոյտ խճողուած ճամբաների վրայ: Եթէ այս ակնարկութիւններն արուած լինէին սովորական խօսքերով, կարող էինք ասել, որ առանձնակի դէպքեր չափազանցուել են եւ կամ էլ հալածեալ տարագիրների անհիմն զրոյցներ են: Բայց, երբ այս կարգի յայտարարութիւններ ենք գտնում լիովին տարբեր վայրերի ու ճամբաների մասին, որոնց ականատեսները յաճախ մէկից աւելի են, ուստի՝ ստիպւած՝ եզրակացնում ենք, որ ճանապարհներին տարագիր քարաւանների ջարդերը կենտրոնների կողմից կազմակերպւած եւ հրահանգւած մի ընդհանուր մեթոդ էին:

Օրինակ՝ մի իսլամ վկայում է Մալաթիայի ու Սւազի ճանապարհին իր տեսած դիակների մասին (փաստաթուղթ 7): Նոյն պատմութիւնն ենք լսում Տիգրանակերտի եւ Ուրֆայի ճանապարհների մասին (փաստաթուղթ 12): Այդ պատմութեան վկան է գերմանական հեծելազօրայինների հրամանատարներից մէկը: Ուրֆայից Հալէպ գնացող ճանապարհին կատարուածները տեսել եւ այդ մասին վկայել են մի հայ (փաստաթուղթ 9), ինչպէս նաեւ մի ազատագրւած անգլուհի (փաստաթուղթ 135):

Կարմիր Խաչի մի դանիացի հիւանդապահուհի (փաստաթուղթ 64) պատմում է, թէ ինչպէս էին դիակները յօշոտում վայրի կամ արդէն վայրենացած գազանները: Ընթերցէք թիւ 12 եւ 23 փաստաթղթերը, ուր կը գտնէք գերմանացի հեղինակների կողմից մանրամասնօրէն արւած նկարագրութիւնները՝ վերոյիշեալ ճանապարհներին եւ Բաղդադի ու Հալէպի գծի վրայ տեղի ունեցած սրտաճմլիկ տեսարանների մասին (փաստաթուղթ 108 եւ 12):

4- Տարբեր տեղերից հաւաքւած այս համընդհանուր ապացոյցների հատորը բաւական է՝ գերիվեր հաստատելու այդ իր դաժանութեամբ ու սոսկալիութեամբ մեծագոյն իրողութիւնը՝ բոլոր նկատառումներով: Մանրամասնութիւնների մէջ մի շարք սխալներ եւ բուն ականատեսների վկայութիւններում որոշ չափազանցութիւններ կարող են սպրդած լինել, սակայն դէպքերի ընդհանուր բնոյթը մնում է անխախտելի հիմքերի վրայ: Համեմատութեան համար, անգամ տարբեր տեղերից վերցւած, մի շարք երկրորդական մանրամասնութիւններ զարմանալիօրէն համընկնում են միմեանց հետ:

Օրինակ՝ Զէյթունից աքսորւած ժողովրդին Սուլթանիէում արգելւում էր տեղական կառավարութեան կողմից տրամադրւող նպաստն ընդունել: Այս պարագան հաստատւում է Կ. Պոլսից (փաստաթուղթ 4) եւ (փաստաթուղթ 123) կիլիկեան մի քաղաքից (փաստաթուղթ 125)՝ Գոնիայից: Մի այլ օրինակ՝ աքսորականներին դիւային խաղով առաջնորդում էին անանցանելի ճամբաներով, որպէսզի ստիպւած լինեն լքել իրենց իրերը: Այդ մասին արձանագրւած է միմեանցից տարբեր ու միմեանց հետ կապ չունեցող վկայութիւններում ու փաստաթղթերում (փաստաթուղթ 12 եւ 126):

Մասնաւորապէս, հարկ է նկատի առնել այն, որ ամենացնցող ու սոսկալի պատմութիւններն արւել են չէզոք վկաների կողմից: Ուրեմն՝ ամենասոսկալի վայրագութիւնների մասին միայն բնիկները չէ, որ վկայում են, այլ կան նաեւ չէզոք մարդիկ: Եթէ այդ բոլոր փաստերը, մանրամասնութիւններով հանդերձ, առ ոչինչ համարենք, դարձեալ չէզոքների կողմից արւած վկայութիւնները քննելով՝ կարող ենք ասել, որ դրանք մատնացոյց են անում այն, թէ բնիկների տեսածներն ու գրածները նւազ չափազանցւած եւ հիմնականում հաւաստի վկայութիւններ են:

Օրինակ՝ (փաստաթուղթ 7 եւ 9) բնիկների կողմից նկարագրւած եւ հռետորական ոճով են խօսւում Եփրատի ու Տիգրիսի մէջ նետւած դիակների մասին վկայութիւնները, որոնք հաստատում են չէզոք վկաները: Գերմանական աղբիւրից վերցւած մի նկարագրութիւն (փաստաթուղթ 125) ցոյց է տալիս, թէ, Տիգրանակերտի կողմերում, Տիգրիս գետում խեղդամահ են արել հայերին: Ուրեմն՝ անհերքելիօրէն հաստատւում է, որ Տրապիզոնի հայերին, խումբ-խումբ Սեւ ծովը նետելով եւ խեղդամահ անելով, բնաջնջել են:

Թիւ 12 փաստաթուղթը պարունակում է Բաղդադի երկաթուղային գծի վրայ աշխատող գերմանացի գործաւորի յայտարարութիւնը, թէ Բիրեջիկ հասնող հայ տարագիրներին ամէն գիշեր լաստերով Եփրատ գետն էին նետում. Եփրատի երկայնքով ի վեր այսպիսի ջրախեղդութեան ոճրագործութիւններ են կատարւել: Թիւ 56, 57, 59, 62 փաստաթղթերում նկարագրւում է, թէ ինչպէս են Էրզրումի վիլայէթի աքսորականների քարաւանները Գարասի Քեմախ Բողազ կոչւած վայրում գետը նետել եւ հրաձգութեամբ սպանել:

Թիւ 59 փաստաթղթի հեղինակը սեփական աչքերով է տեսել կոտորածը: Թիւ 56 եւ 57 փաստաթղթերի հեղինակը գետն է նետւել եւ լողալով՝ գաղտագողի ափ դուրս եկել: 62-րդ փաստաթղթի հեղինակը դաժան դէպքերի մասին տեղեկութիւններ է ստացել աքսորականների քարաւաններից մէկին հետեւող եւ անձամբ ջարդերին մասնակցող մի ժանդարմից: 24-րդ փաստաթուղթն արձանագրութիւնն է մի կնոջ փորձութիւնների: Նա իր ընկերների հետ աքսորւում է Մուշից եւ նետւում Արածանիի մէջ: Միայն նրան է յաջողւում խոյս տալ մահւանից, իսկ միւսները խեղդւում են:

66-րդ փաստաթուղթը նկարագրում է Քեախթէի մօտերքում գետի ծփացող ջրերի երեսին լողացող դիակների մասին: 137 փաստաթուղթը վկայում է Հալէպի ու Խարբերդի մէջտեղում գտնւող Եփրատի վտակներից մէկում խեղդւած տարագիրների մասին: Տրապիզոնից մինչեւ Գիրասոն տարագիրները նոյն ճակատագրին են արժանացել: Միեւնոյն մեթոդն է գործադրւել կայսրութեան հեռաւոր անկիւններում նոյնպէս: Հետեւաբար՝

ստիպված ենք ընդունել, որ աքսորականներին զանգվածային խեղդամահ անելը Կ. Պոլսի «Երիտասարդ Թուրքեր»-ի կողմից որդեգրված ընդհանուր ծրագրի մի որոշակի մասն էր կազմում:

Նկարագրված այս բոլոր դէպքերից ամենասոսկալին յղի կանանց ու մանուկներին բաժին հասած չարչարանքներն են: Ցղի կանայք ստիպված էին քայլել քարաւանի հետ եւ իրենց մանկիկներին ծննդաբերել ճամբէքի վրայ: Համաձայն թիւ 12 փաստաթղթի՝ մի գերմանացի վկայում է հէնց այս մասին: Սակայն, 129 եւ 137 փաստաթղթերում առկայ են նաեւ չէզոք անձանց վկայութիւնները, ովքեր անձամբ են օգնել զոհերին:

Այս դաւադրութեան ծայրայեղութիւնը եւ տեղահանութեան գազանութիւնն անգամ չափազանց փոքրիկ օգնութիւնների առիթ են հանդիսացել: Անհրաժեշտ է յիշել, որ 68-րդ փաստաթղթում մի տարագիր հայ վկայում է միակ թուրք ժանդարմի բարեսրտութեան մասին, ինչը նա դրսեւորել է իր ընկերներից մէկի հաղէպ:

5- Այս աստիճանի ընդհանրական ջարդն ու անագորոյն վայրագութիւններով կատարված տեղահանութիւնը կարող են ընթերցողի կողմից չափազանցված համարել եւ տարակոյսներ արթնացնել՝ նշված պատմութիւնների վաւերականութեան մասին: Կարող է ասել՝ միթէ մարդկային էակներն ի վիճակի՞ են այս տեսակ ոճիրներ ի գործ դնել կանանց ու մանուկների հանդէպ: Բայց, նախկին ջարդերի թէկուզ մէկ անգամ վերյիշելը բաւական է՝ ցոյց տալու համար, թէ նմանատիպ ոճիրները թուրքական կառավարութեան ի գործ դրած աւանդական եւ հինաւուրց քաղաքականութեան մէկ ու յատկապէս անբաժանելի մասն են կազմում:

Քիոսում, սրանից մօտաւորապէս մէկ դար առաջ, թուրքերը կոտորեցին գրեթէ բոլոր յոյն բնակիչներին: Եւրոպական Թուրքիայում 1876 թւականին ջարդեցին հազարաւոր բուլղարների՝ կասկածելով, թէ ապստամբելու են: Այդ ժամանակ եւս կանանց հանդէպ ի գործ դրված բռնութիւնները, թէպէտ ծաւալով փոքր, սակայն նոյնչափ սոսկալի էին, որքան այստեղ մէջբերված պատմութիւններում են նկարագրում:

1895 եւ1896 թւականներին Աբդուլհամիդը հարիւր հազարաւոր հայ քրիստոնեաներ ջարդեց: Նրանցից հազարաւորներն իրենց մահկանացուն կնքեցին իբրեւ մարտիրոսներ՝ երբեք չուրանալով քրիստոնէական հաւատքը: Եթէ ուրանային, գուցէ եւ կարողանային փրկւել դաժան կոտորածից ու ապրել:

Այս բոլոր կոտորածները ոչ միայն էջերով են արձանագրւել, այլ նաեւ գրված են բրիտանական կառավարութեան դիւանագրքում եւ հիւպատոսական արխիւների մէջ՝ այնքան ստոյգ, որքան մեր այս օրերի դէպքերը: Ուրեմն՝ չկայ անհաւանականութեան նախընթաց, որպէսզի անկարող լինենք հաւատ ընծայել այսօրւայ իրականութեանը: 1915 թւականի դէպքերը թուրքական հինաւուրց քաղաքականութեան շարունակութիւնն են: Հին եւ նոր ոճիրների միջեւ առկայ միակ տարբերութիւնը կանանց եւ մանուկների հանդէպ առաւել մեծ չափով ի գործ դրված յաւելեալ սպանդն է:

Ապացոյցներն անթերի են. դրանցից իւրաքանչիւրը լրացնում է մէկը միւսին, հաստատում հաւաստիութիւնը, քանի որ միմեանցից գերիվեր ու անկախ են, իսկ հիմնական իրողութիւնները նոյնն են, որոնք բացայայտում են կատարւող իրադարձութիւններն ու ծրագրերը: Զանազանութիւնները նոյնպէս հրահանգիչ են, որովհետեւ դրանք բացայայտում են խառնուածքների ու զգացմունքների փոփոխութիւնները, որոնք ամէն տեղ ի յայտ են գալիս մարդկային բնաւորութեան դրսեւորումների մէջ:

Թուրք պաշտօնեաներն ընդհանրապէս անսիրտ ու անզգայ են: Սակայն, երբեմն հանդիպում ենք յղկված բնաւորութեան տէր մարդկանց, ովքեր մերժում են գործադրել տրված հրամանները եւ այդ մերժման պատճառով էլ՝ հրաժարւում են պաշտօնից: Վայրագ է թուրք խուժանը: Կողոպտում է անօգնական աքսորականներին ու նրանց տները: Բայց երբեմն հանդիպում են բարեպաշտ ու կարեկից թուրքեր, ովքեր ջանում են մեղմացնել դրացի քրիստոնեաների տառապանքներն ու ազատել նրանց:

Մենք տեսնում ենք մարդկային կեանքի կենդանի պատկերներից մէկը, ուր չարութիւնը ծայրայեղօրէն ու սանձարձակաբար թոյլ է տալիս ցեղային, կրօնական ատելութեան ու կրքերի, ինչպէս նաեւ յափշտակութեան անարգ ցանկութեան դրսեւորումներ, բայց չի կարողանում մարել ազնիւ զգացմունքները, որոնք նմանւում են համատարած մթութեան մէջ կայծկլտացող լոյսի շողերի:

Հետեւաբար՝ ընթերցողին է մնում իր անձնական կարծիքը յայտնել այս փաստաթղթերի մասին: Ուշի-ուշով կարդալով՝ տեսնում ենք, որ դրանք ինքնին չեն կարող համարուել դատական ապացոյցներ՝ դատարանում երդուեալ վկաներից վերցուած ամենախիստ հարցաքննութեամբ: Բայց, դրանց մեծագոյն մասն ամենաընտիր պատմական փաստեր են, որովհետեւ զանազան ականատեսներ են այս տեղեկութիւնները հաղորդել, եւ նրանց հաղորդած նկարագրութիւնները համապատասխանում են միմեանց ու լրացնում մէկը միւսին:

Այդ նկարագրութիւնները հիմնականում վճռական են, երբ մանաւանդ նկատում ենք, որ այսքան կարկառուն իրողութիւնները, որոշ տարբերութիւններով, կրկնւում են զանազան վկաների կողմից՝ աննշան տարբերութեամբ: Դրանք նմանւում են քսան տարի առաջ, տխրահռչակ Աբդուլհամիդի կատարած ոճիրներին, թէեւ այս անգամ կան որոշ պակաս բաներ, որոնք նա՝ չարաշուք սուլթանը, կիսատ է թողել եւ փոխանցել երիտթուրքերին ու նրանց պաշտպանող գերմանացիներին, որպէսզի վերջիններս լրացնեն այդ բացը:

Որո՞նք էին այդ կիսատ թողնւած գործերը. թերեւս զանգւածային տեղահանութիւնն ու արմատախիլ ջարդերը, որոնք իրագործեցին երիտթուրքերն ու գերմանացիները՝ հաստատւած ոճրագործների խոստովանութեամբ: Գրքիս նպատակն է հաւաքական փաստերով ցոյց տալ, թէ ինչպէս 1915-1916 թւականներին, այնքան սոսկալի վայրագութեամբ, իրագործեցին հայոց ջարդերն ու տեղահանութիւնները: Կատարւածը քողարկելու եւ հերքելու թուրքերի գործադրած ջանքերն այնքան կատարեալ են, որքան կատարեալ ու անհերքելի են ի գործ դրւած անգթութիւնները:

Օրինակ՝ մի գերմանացի սպայի խօսակցութիւնը տեղեկագրւած է թիւ 108 փաստաթղթում (թուրքերի ու գերմանացիների դիրքորոշումը՝ հայկական կոտորածների հանդէպ. տե՛ս՝ գլուխ Ե, պատմական ակնարկներ)[2] :

Իմ սեփական եզրակացութիւնների արժէքն ու ամբողջականութիւնը քննելու համար՝ աշխատութիւնս յանձնեցի երեք գիտնական բարեկամներիս քննադատութեանը: Նրանք այնպիսի գիտուններ են, որոնց կարծիքները, որպէս ամենամեծ հեղինակութիւնների կողմից արւածների, յարգւում են նրանց ճանաչողների կողմից: Այդ երեք գիտնականներն են.

1 - Հռչակաւոր պատմաբան Պրն. Հ. Ա. Լ. Ֆիշեր, Շեֆիլդի համալսարանի փոխնախագահ

2 - Պրն. Գիլբերթ Մերի, Օքսֆորդի համալսարանի յունարէնի մասնագէտ

3 - Ամերիկայի հռչակաւոր եւ փորձառու օրէնսգէտ պրն. Մադֆիլդ Սթորի. մարդիկ, ովքեր իրենց ամբողջ կեանքում վարժւել են քննել ու գնահատել ապացոյցները: Վերը մեջբերւած են նրանց տեսակէտները մատնացոյց անող նամակները:

Այս նախաբանը գրեցի՝ ներկայացւած ապացոյցների ստուգութիւնը ցոյց տալու համար: Զգուշանում եմ մեկնաբանութիւններից: Եթէ կայ դիտողութիւն կամ աւելի շիտակ խնդիր, այն կարող է առաջադրել ուսումնասիրւող թեմային նւիրւած անձնաւորութիւնը միայն: Արեւելեան Թուրքիայի պատմութիւնը քառասուն տարիներ ի վեր ուսումնասիրած մարդիկ ու եւրոպացի ճամբորդները յաճախ են խօսել թուրք գեղջուկի համեստութեան ու բարեսրտութեան մասին:

Մեր զինւորները եւս հաւաստում են, թէ թուրքերը լաւ կռւողներ են: Նրանց դէմ ասելիք ոչինչ չունեմ: Մինչեւ իսկ պիտի յաւելեմ, թէ ճանաչում եմ թուրք սպաներ, որ պատւաւոր ու բարեացակամ մարդու տպաւորութիւն են թողել ինձ վրայ: Սակայն, թուրք կառավարիչները, երեք դարեր ի վեր, գահակալ սուլթանից սկսեալ մինչեւ գաւառի պարզ գաւառապետը, անիրաւութիւնների ու բռնութիւնների անջնջելի արձանագրութիւններ ունեն, որոնք յաճախ դիւային վայրագութեան են հասնում:

Երբ երիտթուրքերը գահընկէց արեցին Աբդուլհամիդին եւ հրապարակ դուրս եկան որպէս ազատութեան առաքեալներ, Օսմանեան Թուրքիայի բոլոր հպատակներին խոստացան իրաւունքի ու արդարութեան հաւասարութիւն: Այս գիրքը բաւական է՝ ցոյց տալու համար, թէ ինչպէս պահեցին նրանք իրենց խոստումները: Կարո՞ղ է թէկուզ մէկը խորհել, թէ մի այսպիսի կառավարութեան գործած չարիքները կարող են դարմանւել:

Ընդհակառակը՝ հայթայթուած եւ գրքիս մէջ տեղ գտած ապացոյցները մեզ են ներկայացնում այն համոզիչ ու հրամայական, բայց եւ միաժամանակ սոսկալի իրողութիւնը, որ այլեւս անհընար է թոյլատրել, որ թուրքական կառավարութիւնն իշխի իր քրիստոնեայ հպատակների վրայ:

ԽՄԲԱԳՐԻ ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐԸ

Այս հատորում հաւաքուած փաստաթղթերի բովանդակութիւնը քննելով եւ ուսումնասիրելով՝ ինքնաբերաբար ամէն ինչ դառնում է պարզ ու հասկանալի:

Նրանք, ովքեր փափագում են նկարագրուած դէպքերի ուղեգիծն ունենալ եւ վերահասու լինել մանրամասնութիւններին, ապա թող ընթերցեն գրքին վերջընթեր, ե հատուածում տեղ գտած, «Պատմական ակնարկ» վերնագրով գլուխը: Այս յառաջաբան-յուշագրութեան մէջ խմբագիրը ներկայացրել է մէջբերած փաստաթղթերի հիմնական աղբիւրը, նկարագիրն ու արժէքը եւ բացատրել այն սիստեմը, որով մենք խմբագրեցինք այս գիրքը:

Տարբեր են փաստաթղթերի աղբիւրները. որոշները հէնց հեղինակներն անձամբ ուղղակիօրէն յանձնեցին խմբագրին կամ իրենց բարեկամներին՝ նամակների օգնութեամբ: Նրանցից ոմանք Կովկասում նպաստների գործով զբաղւող պաշտօնեաներ էին եւ, Անգլիայի արտաքին գործոց նախարարութեան շնորհիւ, իրենց գրած նամակները մեզ հասցրին: Անհատների միջոցով եւս շատ տեղեկագրեր ստացանք եւ մասնաւորապէս վայելեցինք Լորդ Բրայսի օժանդակութիւնը, ով վերահսկեց ամբողջ գործընթացը եւ կատարուած աշխատանքում իր ամենամեծ բաժինն ունի:

Մեզ օժանդակեցին նաեւ ամերիկեան եւ հայ-սիրիական նպաստի կոմիտէի կարեւոր անդամներ՝ վերապատուելի Ջ. Թ. Սքոթը եւ Միացեալ Նահանգների Երիցական Եկեղեցու արտաքին միսիոնարութեան վարչական մարմնի քարտուղարը, Արշակ Ջորանեանը, դոկտ. Հերբերթը, Ադամս Գիբբէնը, Նիւ Եօրքի Իւնիոն Աստուածաբանական ճեմարանի պրոֆեսորներից դոկտ. Վիլլեր Եէմ Վոլթեր Դոֆէլը, Կահիրէում ամերիկեան Կարմիր Խաչի քարտուղար Վեր. Ս. Թրոբրիջը, Կահիրէի բորտընկերութեան միսիոնար Վեր. Ա. Ն. Քեմփը, Անդուրին Վիլիամսը, հայ տարագիրների եւ Լորդ քաղաքապետի ֆոնդի քարտուղար Վեր. Հարոլդ Բեքսթոնը, «Լոնդոն Թայմզ»-ի բալկանեան թղթակից Ջ. Տ. Բաւրիչտրը, Օքսֆորդից տիկին Դ. Ս. Մարքո-

լիուն, Քենթրբերիի արքեպիսկոպոսի կազմակերպած սիրիական միսիոնարութեան քարտուղար Վեր. Հ. Ն. Հենզէլը, լոնդոնաբնակ ամերիկեան քաղաքացի Ջ. Հ. Փայէլեանը:

Նիւթերի հարուստ աղբիւր է հանդիսացել նաեւ մամուլը: Գրքիս մէջ արտատպուած հեռագրերը, նամակները, յայտարարութիւնները վերցուել են անգլիական, ամերիկեան, շուէյցարական, ֆրանսիական, ռուսական, իտալական եւ գերմանական լրագրերի սիւնակներից, ինչպէս նաեւ Լոնդոն, Թիֆլիս եւ Նիւ Եօրք քաղաքներում հրատարակուող հայկական թերթերից:

«Արարատ»-ի, «Կոչնակ»-ի եւ «Նոր Հայաստան»-ի խմբագիրները հնարաւոր օժանդակութիւնները ցոյց տուեցին խմբագրիս՝ ինձ ուղարկելով իրենց բոլոր հրատարակութիւնների օրինակները:

Այստեղ բոլոր փաստաթղթերը գրուած են անգլերէնով, սակայն մեզ հասան տարբեր լեզուներով՝ անգլերէն, ֆրանսերէն, իտալերէն եւ հայերէն: Թարգմանութիւնը ֆրանսերէնից, իտալերէնից ու գերմաներէնից անգլերէնի խմբագիրը կատարել է իր կնոջ օգնութեամբ: Հայերէն թարգմանել է Հ. Փայէլեանը՝ նուիրելով իր թանկագին ժամանակը: Եթէ չլինէր նրա վեհանձն օժանդակութիւնն ու բարեացակամութիւնը, գործը չափազանց կուշանար, կը ձգձգուէր:

Փաստաթղթերի տեսակներն այնքան են տարբերւում միմեանցից, որքան գրողներն իրենք են: Ոմանք Մերձաւոր Արեւելքում ապրող նեստորական ու հայ բնիկներ են, ովքեր կա՛մ վայրագութեան զոհերից են, եւ կա՛մ նկարագրուած տեսարաններում են եղել եւ մասնաւոր դերակատարութիւն ունեցել այդ դէպքերի ընթացքում: Սակայն, վկաների մեծ մասը Պարսկաստանի Ատրպատական նահանգում եւ Օսմանեան կայսրութիւնում բնակուող օտարահպատակներից են, ինչպէս նաեւ չէզոք պետութիւնների հպատակներ:

Վկաների մէջ կան եւրոպացի եւ ամերիկացի միսիոնարներ, ուսուցիչներ, բժիշկներ, կարմիր Խաչի հիւանդապահուհիներ ու սպաներ: Նրանցից մի քանիսն այս պատերազմում Թուրքիայի դաշնակից տէրութեան հպատակներ են, որոնց տեղեկագրութիւններն ամենից աւելի շատ ծանրակշիռ են ու վստահելի:

Փաստաթղթերի արժէքաւորութիւնը, անշուշտ, կախուած է վկաների դիրքից, նկարագրից ու այն պատեհութիւններից, որոնք կարողացան օգտագործել՝ տեսնելով իրողութիւնները:

Խմբագիրը վստահ է, որ այս հրատարակութիւնները կատարուածի հաւաստի եւ ճշմարտացի դրսեւորումներ են: Անտարակոյս, երբեմն հնարաւոր է սխալներ գտնել, որոնք ակամայ են սպրդել գործի մէջ: Սակայն, դրանք մասնակի սխալներ են եւ անկարող են ազդել ընդհանուր ճշմարտութեան վրայ: Բայց, իրաւագիտական առումով, համեմատական արժէք ունեն, երբ ներկայացւում են դատարանի առջեւ: Դրանք կարող ենք դասաւորել հետեւեալ կերպ.

ա- Այն ապացոյցները, որոնք հրապարակուել են գերմանական մամուլում, թէեւ կայսերական կառավարութեան գրաքննութիւնը ջնջել է, անտարակոյս, լիովին աննպաստ են թուրքերի համար (փաստաթուղթ 12):

բ- Գերմանացի ականատեսների վկայութիւններն այն դէպքերի մասին, որոնք տեսել ու նկարագրել են դրանք (փաստաթուղթ 18, 23, 91, 145): Ինչպէս նաեւ Գերմանիայի Կարմիր Խաչի, Մարդասիրական եւ Միսիոներական հաստատութիւններում ծառայող չէզոք օտարահպատակների վկայութիւնները՝ նոյն դէպքերի մասին, ովքեր այդ ժամանակ բնակւում էին Թուրքիայում (փաստաթուղթ 62, 64, 117, 142): Դրանք երբեք չեն կարող կասկածելի համարուել՝ պատճառաբանելով, թէ իբր գրուել են հայերին կողմնակալ, իսկ թուրքերին չհամակրող անձանց կողմից:

գ- Ամերիկացի եւ շուէյցարացի չէզոք ականատեսների վկայութիւններն են, որոնց հեղինակները հանրային կամ անհատական որեւէ կապ չեն ունեցել ո՛չ համաձայնականների եւ ո՛չ էլ դաշնակիցների հետ եւ որեւէ մի կողմի համակիրներ համարուել չեն կարող: Այսպիսի հեղինակաւոր փաստաթղթերը կազմում են գրքիս հիմնական մասը եւ կատարեալ վստահութիւն են ներշնչում:

դ- Հայ եւ նեստորական բնիկների նկարագրութիւնները՝ իրենց երկրների մասին: Սրանք մի շարք խորհրդածութիւնների են առաջնորդում մեզ, որովհետեւ հեղինակներն անձնապէս են

չարչրկուել այն սոսկումների մէջ, որոնցում գտնուել են եւ հակուած են չափազանցուած նկարագրել իրենց ապրածն ու զգացմունքով առաջնորդուել: Մասնաւորապէս, սխալներ են նկատուում նրանց ներկայացրած թուերի ու մանրամասնութիւնների մէջ:

Սակայն, բուն վկաների տարաբնոյթ յայտարարութիւնները, համեմատելով միմեանց եւ տարբեր փաստաթղթերի հետ, խմբագիրս համոզուած է, որ դրանք եւս էապէս հարազատ վկայութիւններ են: Այդ իսկ պատճառով դրանք նոյնպէս ներառեցինք մեր գրքի մէջ:

Գրքիս ծաւալը ցոյց է տալիս, թէ ապացոյցները որքան շատ են: Եւ սա աւելի է ուրախացնում մեզ, որովհետեւ օսմանեան կառավարութիւնը ձեռք է առել բոլոր նախազգուշութիւնները, որպէսզի թոյլ չտայ դաժան իրադարձութիւնների մասին լուրերը դուրս գան երկրի սահմաններից: Գաւառների եւ Կ. Պոլսի միջեւ ամբողջովին արգելուել էին անհատական հեռագրերով ու նամակներով հաղորդակցութիւնները:

Ամենախիստ գրաքննութեան էին ենթարկուում արտերկրից եկած սուրհանդակները: Մինչեւ իսկ չէզոք հիւպատոսարաններին արգելել էին ծածկագիր հեռագրեր ստանալ եւ ուղարկել: Խստագոյնս խուզարկուում էին ճանապարհորդները եւ նրանցից վերցուում էին ցանկացած թղթի կտորներ՝ անկախ նրանից գրուած էին թէ՝ ոչ: 121 փաստաթղթի հեղինակը մի նամակ է գրում, երբ ապահով անցնում է Օսմանեան կայսրութեան սահմանները: Այդ նամակից արտատպում ենք մի հատուած՝ ցոյց տալու համար, թէ պաշտօնական խուզարկութիւններն ինչ աստիճան խիստ էին ճամբորդների համար:

«Այժմ, որ «ասնսիւռ»-ի ձեռքից փրկուել եմ, ինձ խնդրեցին գրել, թէ այն երկրում ինչպիսին է կացութիւնը: Իմ կարծիքով՝ գրաքննութիւնը հիմա աւելի յոռեգոյն է, քան հին օրերին, որովհետեւ այժմ գրաքննիչները վերապատրաստուել են իրենց պաշտօնի մէջ: Նրանցից մէկը հինգ տարով կրթութիւն է ստացել Նիւ Եորքի նամակատանը:

Եթէ մեր նամակները խիստ քիչ տեղեկութիւններ են հաղորդում, ապա պատճառն այն է, որ գրաքննութիւնը բացարձակապէս արգելել է գրել քաղաքական խնդիրների, պատերազմի, ինչպէս նաեւ աղքատութեան մասին: Այս խնդիրների մասին ակնարկող նախադասութիւնները նամակների միջից ջնջւում էին: Մի գերմանուհի, առանց մատնացոյց անելու թշառութեան պատճառները, Բ. Մ.-ի մէջ իր երկրում գտնուող բարեկամներից մէկին գրեց, թէ աղքատութիւն է տիրում այստեղ, նպաստ ուղարկեցէք: Բայց գրաքննիչի դանակը ջնջել էր այս խօսքերը:

Տիկին Կ.-ն Ամերիկայում բնակւող իր բարեկամին գրել էր, թէ ասէք մեր բարեկամներին, որ երբ գրում ենք նուագահանդէսների, դաշտային պտոյտների մասին, դա չի նշանակում, թէ երկիրն ապահովութեան մէջ է: Այսպիսի բաներ ենք գրում, որովհետեւ մեզ թոյլատրուած չէ ճշմարտութիւնը գրել»:

Մեր բոլոր փաստերը գրեթէ վերցուած են թուրքաբնակ վկաներից, ինչպիսին այս օրիորդն է: Նրանք բնակւում էին յատուկ նահանգում եւ, տեղի ունեցող դէպքերի պատճառով, անցան մէկ ուրիշ երկիր, ուր, առանց սեփական կեանքը վտանգելու կամ թուրքական կառավարութեան վրէժխնդրութեանը ենթարկուելու, գրեցին իրենց տեսածի մասին:

Շատերն առաջին իսկ առիթով ցանկանում են վերադառնալ Թուրքիա՝ վերսկսելու իրենց գործերը, որովհետեւ շահ, գործակիցներ եւ կամ բարեկամներ ունեն այնտեղ, ովքեր թուրքական կառավարութեան ձեռքում, այսպէս կոչուած, պատանդներ են: Ամենքն էլ գիտեն, որ այս կառավարութիւնը գործակալներ ունի թէ՛ Եւրոպայում, եւ թէ՛ Ամերիկայում: Վերջիններիս գործն է ամէն օր տեղեկագրել բոլոր նրանց անունները, ովքեր թուրքական ապականիչ արարքների մասին են հրատարակում:

Երիտթուրքերի վոհմակը, որ ղեկավարում է Թուրքիան, ո՛չ խիղճ, եւ ո՛չ էլ ամօթ ունի՝ իրեն ամբաստանողներին հալածելու հարցում, քանի որ, եղած ամբաստանութիւնների համար, անկարող է պատասխան տալ քաղաքակիրթ աշխարհի դատարանի առջեւ: Այդ իսկ պատճառով բացարձակապէս յարմար նկատեցինք թաքցնել վկաների, ինչպէս նաեւ յիշուած մարդկանց ու վայրերի անունները:

Իսկապէս մի շարք փաստաթղթեր մեզ յանձնուեցին հետեւեալ

խնդրանքով. «Խնդրում եմ, որ բարեհաճէք իմ անունը գաղտնի պահել եւ չհրատարակել Բ. Մ.-ում գտնուող միսիոնարների անունները, որովհետեւ ահաւոր «սանսիւռ»-ի կասկածներին պիտի ենթարկուենք: Օրինակի համար՝ դոկտ. Ի.-ն եւ դոկտ. Հ.-ն ենթարկուել են կասկածի եւ յոռի վերաբերմունքի: Այնպէս որ՝ ամիսներով չեն կարողացել Ամերիկայում գտնուող իրենց ընտանիքներին նամակներ ուղարկել:

Ա. Շ.-ի վիճակն այնպիսի կասկածների տեղիք է տուել, որ նրա գրած նամակները պրն. Ն.-ին բնաւ չեն հասնում: Վստահ ենք, որ պատճառն իսլամների մասին ձեզ ուղարկուած տեղեկագիրն է»:

137-րդ փաստաթղթի հեղինակը՝ օր. Ֆ.-ն, միեւնոյն նկատողութիւնները չեշտել է աւելի ուժեղ կերպով. «Յոյս ունեմ, որ ոչինչ չէք հրատարակի իմ անունով Ա. Շ. Ի.-ի մասին, որովհետեւ հետեւանքը խիստ վատ կարող է լինել մեզ համար, քանզի ապրում ենք Թուրքիայում եւ մասնաւորապէս որբերի եւ մնացած ժողովրդի համար:

Չափազանց քիչ շաբաթաթերթեր եւ օրաթերթեր նոյնպէս թոյլատրուում են երկրից ներս, այդուհանդերձ՝ ծովեզերեայ քաղաքներում երբեմն թերթերից կտրուած հատուածներ են սուղ գնով վաճառուում թուրքերին: Գործս թողեցի, որովհետեւ խորհեցի, թէ իմ ներկայութիւնը կարող է վտանգել խնամքիս տակ գտնուողների ապահովութիւնը: Եթէ իմ հաղորդած տեղեկութիւններից միայն մի մասն արձագանգ գտնի Թուրքիայում, տարակոյս չունեմ, որ կը վտանգուի ժողովրդիս կեանքը:

Դժբախտաբար, Թուրքիայից դուրս գտնուողները չեն կարող երեւակայել, թէ իրենց ուղարկուած նամակները որչա՜փ վտանգաւոր են նամակագիրների համար: Տեղական իշխանութիւնները միշտ չորս աչքով են նայում միսիոնարներիս, որպէսզի հայոց դէմ որեւէ պատճառով՝ գանգատի պատրուակներ ձեռք գցեն:

Երբ անցնում էինք այն խեղճ տարագիրների կողքով, որոնց տեսանք Բ. 7-ում, մեզանից օգնութիւն խնդրեցին: Բայց, երբ հասանք Բ. 9, միսիոնարները մեզ ասացին, որ կառավարութիւնը խստիւ արգելել են նրանց նպաստ տալ: Մի կին էին ձերբակալել. նրան տեսել էին նպաստ տալիս այնտեղի ժողովրդին, որոնց հետ միասին նա ապրել էր տարիներ շարունակ:

Բ. 7-ում շատ հիւանդներ կային. հովիւն ու բարեկամները նամակով անմիջապէս օգնութիւն խնդրեցին: Մի մարդ ինձանից պարտքով դրամ խնդրեց՝ ասելով, թէ Ամերիկայում եղբայր ունի, ումից յետոյ կը վերցնի եւ կը վերադարձնի: Վարանեցի նրան դրամ տալ՝ մտածելով, թէ այդ փոխատուութիւնը կարող էր վնասել նրան: Վերջապէս, դրամ ուղարկեցինք, բայց վախով ու երկիւղով, թէ արդեօք ինչպէ՞ս ենք կարողանալու արդարացնել ինքներս մեզ: Այսպիսին է դրութիւնը երկրի բոլոր կողմերում:

Ամէն անգամ, երբ ժողովրդին տեսնում էինք կարիքի մէջ եւ ցանկանում էինք օգնել, այս հարցն էր ծագում մեր մտքերում՝ արդեօք օգնութիւնը չէ՞ր վտանգելու նրանց կեանքը: Շարունակ նորանոր կանոններ էին հրապարակւում եւ ցցում էին մեր գլխներին: Գրուած նամակը, տեղ հասնելուց առաջ, պէտք է այս դրուած կանոնին հակառակ լինէր:

Կառավարութիւնը գրաւեց տարագիրների բոլոր գոյքերը եւ բանկերում գտնուող դրամները: Ա. Շ.-ից աքսորուածները չգիտէին սա: Մեզ շարունակ գրում էին դրամատներում գտնուող դրամները յետ վերցնելու մասին, որը մեզ առիթ տուեց հասկանալ, թէ կառավարութիւնը յափշտակութիւն է կատարել: Դժբախտաբար, չէինք կարող իրողութիւնը հասկացնել նրանց: Իսկ խեղճերը շարունակ գրում էին եւ խնդրում իրենց աւանդները:

Ամբողջ ժամանակ զգում էինք, թէ թակարդի մէջ ենք ընկել: Ամենաքաջասիրտ հայերն անգամ չէին համարձակւում գալ ու տեսնել ինձ, ոչ էլ ես կարող էի գնալ նրանց տները: Երբեմն, ի պահանջել հարկի, վախով հանդիպում էինք միմեանց հետ՝ մի որեւէ հանրային շէնքում:

Ազատութեան մէջ ապրողի համար անհնար է հասկանալ, թէ ինչ է նշանակում Թուրքիայում այսպիսի օրեր ապրել»:

Ի տես այս իրողութիւնների՝ ընթերցողը կը տեսնի, որ այս պարագաներում անունների հրատարակութիւնը վստահութեան չարաշահում կը լինէր: Հետեւաբար՝ խմբագիրը, հեղինակ-

ների ու բնակավայրերի անունների փախարէն՝ ինքնակամօրէն մի շարք խորհրդանիշեր գործածելով՝ պատրաստել է նաեւ ճշգրիտ անունների ու տեղանունների իսկական ցանկը՝ որպէս տեւալ խորհրդանիշերի կատարեալ բանալի: Այս ցանկը յանձնուել է բրիտանական արտաքին գործերի պաշտօնատուն, Լորդ Բրայսին, դոկտ. Բարթոնին եւ Վեր. Ջ. Ա. Սքօթին: Երբ այս անձանց սպառնացող վտանգը վերանայ, կը հրատարակենք սոյն ցանկը:

Դէպքերի ընթացքը ցոյց է տալիս, որ Օսմանեան կառավարութեան եւ նրա դաշնակիցների բարի անունները հոմանիշ են «օսմանեան» անուան հետ: Իրականութիւնը ցոյց է տալիս, որ ինչպէս նրանք վարժուել են վերաբերուել իրենց քրիստոնեայ հպատակների հետ, այնպէս եւ ամէն ինչ ի գործ են դրել՝ այստեղ նկարագրուած դէպքերի մասին փաստաթղթերի հաւաստիութիւնը եղծել, ինչպէս որ աղարտեցին այն ապացոյցների փաստաթղթերը, որոնք մերկապարանոց ցուցադրում էին Բելգիայում գերմանական բանակների գործած անթիւ չարիքները:

Այդ փաստաթղթերից մի քանիսը, լուրջ եւ բանաւոր պատճառներով ու վերապահութեամբ, հրատարակուել են: Այսպիսի կեղծ քննադատութիւնները մէկանգամընդմիշտ հերքելու համար՝ խմբագիրը յարմար համարեց այստեղ պարզել այն սկզբունքները, որոնց համեմատ՝ կատարուել են անունների համառօտագրութիւնները:

ա- Գրքիս մէջ չեն հրատարակուել այն անունները, որոնք կա՛մ հրապարակաւ մամուլի միջոցով չեն հրատարակուել, եւ կա՛մ խնդրոյ առարկայ մարդիկ դեռ ամբողջովին չեն ազատուել թուրքական վրէժխնդրութիւնից:

բ- Այն տեղանունները, որոնք դիւրութեամբ մատնացոյց կանեն խնդրոյ առարկայ մարդկանց, դարձեալ յարմար համարեցինք գաղտնի պահել:

գ- Ծածկանունները, այբբենական գլխագրերով եւ կամ գլխագրերը միացնելով, գրեցինք բնագրի մէջ: Սակայն, այս գրերն անձնանունների սկզբնատառեր չեն, այլ կամայական կերպով ընտրուածներ, որոնք գրուել են այն ժամանակ, երբ մեր ձեռքն են անցել տարբեր փաստաթղթեր:

դ- Ամբողջ գրքում տեղանունները «Ք» տառով ենք ներկայացրել: Այդ տեղանունները նշուած կը լինեն Ա, ԺԱ կամ ԳԱ հատուածներում: Դրանց միջեւ տարբերութիւն չկայ, ընդհակառակը՝ միեւնոյն բանն են:

ե- Անձնանունները յիշելու պարագայում՝ նոյն խորհրդանիշն ամբողջ հատուածում մատնացոյց է անում միեւնոյն անձին: Օրինակ՝ օր. Ա-ն ԺԶ հատուածում քանի անգամ էլ նշուած լինի, միեւնոյն անձն է ներկայացնում, բայց ԺԱ հատուածում օր. Ա-ն արդէն մէկ ուրիշն է:

Խմբագիրը ցանկանում է մէկ անգամ եւս յայտարարել, որ եթէ այս փաստաթղթերի վաւերականութեան եւ հաւաստիութեան մասին ընթերցողը տարակոյս ունենայ, վերոյիշեալ անձանցից կարող է ստանալ մեր ակնարկած բանալին եւ ստուգել դրանք:

Խմբագիրը ցանկանում է մէկ անգամ եւս բացատրել՝ ցոյց տալու համար, որ այս փաստաթղթերում խորհրդանշերով ներկայացուած անունները նուազ վաւերական չեն, քան այն ապացոյցները, որոնք նման կարգի փոփոխութիւններից զերծ են: Եթէ ընթերցողը ցանկանայ հաստատել դրանք, ապա յանձնարարում ենք տեսնել վերոնշուած երեք անձանց, քանի որ նրանց մօտ է գտնուում բանալին: Կան նաեւ ուրիշ փաստաթղթեր, որոնց հեղինակների անունները խմբագիրը չի նշում՝ միեւնոյն պատճառներով:

Թէ՛ վաւերաթղթերի հեղինակները, թէ՛ դրանք մեզ ուղարկողները, ինչպէս նաեւ իրական աղբիւրները գաղտնի են մնում: Խմբագիրը զգուշութեամբ, հնարաւորութեան սահմաններում, որոշ կերպով մատնացոյց է արել այս պարագան: Անծանօթ տեղանունների եւ հեղինակների անունները բաց են թողնուած այսպիսի [-] նշանով: Երբեմն հեղինակն անծանօթ է նրանց. այդ դէպքում տրուում են աստղանիշով առընթեր բացատրութիւններ:[3)]

Անշուշտ, խմբագիրը տեղեակ է, որ ստացած այս վաւերաթղթերը, որպէս ապացոյցներ, ներկայանալի վիճակի մէջ չեն: Մանաւանդ ոճրագործ կուսակցութիւնը դիւրութեամբ կարող է հերքել դրանք: Ամբողջ 150 փաստաթղթերից քսաներկուսը

ենթակայ են այսպիսի առարկութեան: Մնացածները բնաւ չեն կարող հերքուել, որովհետեւ կատարեալ, օրինական ու վճռական են: Խմբագիրը բնական կարգով ընտրել ու հրատարակել է դրանք եւ անհնար է տարակուսել դրանց հաւաստիութեան խնդրում:

Այս քսաներկու փաստաթղթերից տասնմէկը մեզ են ուղարկել Ամերիկեան՝ Սիրիայի եւ Հայկական նպաստի կոմիտէի անդամները: Որոշներն էլ ուղարկել են չէզոք երկրների պատուաւոր ու անբասիր նկարագրի տէր ազնիւ քաղաքացիներ: Սակայն, այս քսաներկու վաւերաթղթերը լիովին ներկայացնելով որպէս մի ամբողջութիւն՝ դարձեալ իրենցից էական նշանակութիւն չեն ներկայացնում: Վաւերաթղթերն աշխարհագրական կարգով խմբաւորեցինք, ինչը համապատասխանում է, հնարաւորինս ճշտօրէն, ընդհանուր ժամանակագրական ուղղուածութեամբ եւ տարբեր նահանգներում, Օսմանեան կառավարութեան իրականացրած գործելակերպին ու գործադրած ծրագրին:

ա- Վաւերաթղթերի առաջին խումբ: Պարունակում է այն վաւերաթղթերը, որոնք չեն պատկանում մի յատուկ նահանգի, այլ Օսմանեան կայսրութեան մէջ պատահած դէպքերի ընդհանուր նկարագրութիւններ են: Դրանք գրուել են աւելի կանուխ, քան՝ մասնաւոր նահանգների տեղեկագրերը: Այդ իսկ պատճառով դրանք դրուեցին գրքի առաջին էջում:

բ- Երկրորդ խումբը, աշխարհագրական կարգին հետեւելով, պարունակում է Վանի կայսրութեան հիւսիսային նահանգների եւ Կովկասի ու Ատրպատականի ուղղութեամբ կատարուած դէպքերի նկարագրութիւնները:

գ- Երրորդ խմբի վաւերաթղթերը վերաբերում են Վանի նահանգին սահմանակից Բիթլիսի կուսակալութեան դէպքերին, որոնք տեղի ունեցան Վանից անմիջապէս յետոյ:

դ- Չորրորդ խմբի վաւերագրերը ներառում են Ատրպատականը, Վանի Արեւելեան կողմը, պարսկական նահանգը, որ տակնուվրայ եղաւ 1914-1915 թւականների թուրքական արշաւանքների պատճառով:

ե- Հինգերորդի վաւերագրերը նկարագրում են ռուսական զօրքերի կողմից իրականացուած անդրկովկասեան դէպքերը: Դա այն վայրն էր, ուր ապաստանեցին Վանի ու Ատրպատականի տարագիրները՝ 1915 թւականի օգոստոսին:

զ- Էրզրումից ու Վանից դէպի Արեւմուտք, հիւսիսային նահանգները, ռուս-թուրքական սահմանները:

է- Մամուրէթ իւլ Ազիզը:

ը- Տրապիզոնը:

թ- Սեբաստիան:

ժ- X քաղաքը:

ժա- Էնկիւրին:

ժբ-. Կ. Պոլիսը:

ժգ- Կ. Պոլսի շրջակայ գաւառները (ուզում է ասել՝ Բուրսանիան):

ժդ- Բաղդադի երկաթուղային գծի աջ ու ձախ կողմերը՝ մինչեւ Ատափազար:

ժե- Կիլիկիան եւ այն նահանգները, որոնց միջով կիսովի անցնում է Բաղդադի երկաթուղին: Միայն այս առիթով ժամանակագրական ու աշխարհագրական դասաւորութիւններն են միմեանց հակասում, որովհետեւ ամենից առաջ հէնց կիլիկեցիները հարստահարեցին եւ տեղահանեցին՝ Վանի կռիւներից տասներկու օր առաջ:

ժզ- Տեղահանեցին Ջեբելի Մուսայի մէջ մտնող մի շարք հայկական գիւղերի բնակիչները: Այդ գիւղերը գտնւում էին Կիլիկիայի հարաւային կողմերում:

ժէ- Հայ գաղթականները Միջագետքում, Ուրֆա եւ A. C. քաղաքների դէպքերը:

ժը- Հալէպը, որտեղից անցան գրեթէ բոլոր տարագիրները:

ժթ- Դամասկոսն ու Դեր Զորը, ուր վերջնականապէս տեղաւորուեցին աքսորեալները:

ի- Որոշ վաւերաթղթեր, որոնք ստացել ենք այն ժամանակ, երբ արդէն գիրքը տպագրութեան ընթացքի մէջ էր, եւ որոնցում թւական է դրուած՝ առանց բացատրութեան. դա նոր տոմարի թւականն է: Իսկ որտեղ երկու թւականներ են գրուած, օրինակի համար՝ 26 սեպտեմբեր, 9 հոկտեմբեր, ապա առաջինը հին տոմարն է, երկրորդը՝ նոր տոմարը: Միայն հին տոմարով երբեք

ոչ մի թւական չի գրւել: Թուրքերին ու պարսիկներին տրւած դրամները նշանակւել են փակագծերով, իսկ դոլարները նշւել են անգլիական ստեռլինգի վերածւելուց յետոյ միայն:

Տեղանունները յատուկ մի սիստեմով սրբագրւել են: Այդ մասին ընդունւած ու կիրառական դրութիւն չկայ: Խմբագիրը ջանացել է հնարաւորինս կանոնակարգել դրանք, երբ հանդիպել է դրանց եւ կամ անհրաժեշտութիւն համարել:

Փաստաթղթերում ակնարկւած է բոլոր տեղանունները պարունակող մի ցանկի՝ անկախ նրանից, դրանք յիշատակւած են բնագրում թէ՝ ոչ: Այն կազմել է Միս Մարգարետ Թոյնբին, ինչի համար երախտապարտ ենք նրան: Այս արժէքաւոր ցանկը դրւած է գրքի վերջում: Քարտէզը պատրաստել է անձամբ խմբագիրը՝ օգտւելով զանազան աղբիւրներից:

Հիմնական աղբիւր են ծառայել Քիբերթի Փոքր Ասիա փոքրիկ քարտէզները, որոնք գտնւում են Արքայական աշխարհագրական ընկերակցութեան սրահում: Հէնց այս պատւարժան մարմնի խիստ թանկագին աջակցութիւնն ենք վայելել՝ այդ գործը ձեռնարկելիս:

Ա- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Օսմանեան կառավարութիւնն արեց հնարաւոր ամէն ինչ, որպէսզի հայոց դէմ ի գործ դրւած չարիքների լուրերը դուրս չգան երկրի սահմաններից եւ չտարածւեն: Այդ արգելքն իրականացնելու համար՝ գաւառներում եւ անհատական բոլոր թղթակցութիւնների հանդէպ սահմանւեց ամենախիստ գրաքննութիւն: Այնպէս որ՝ բոլոր գաւառները միմեանցից լիովին մեկուսացած էին:

Մեր բոլոր տեղեկութիւնները վերցրել ենք նրանցից, ովքեր, տեղահանութեան եւ ջարդերի ընթացքում, գտնւում էին Թուրքիայում, սակայն յաջողւել է իրենց հեռանալ այնտեղից եւ, հասնելով Եւրոպա ու Ամերիկա՝ գրել են իրենց ականատեսի վկայութիւնները: Այս առաջնակարգ ապացոյցները տրւել են առանձին նահանգներում ու բնակավայրերում բնակւող ականատես վկաների կողմից: Դրանք համախմբւել եւ դասաւորւել են աշխարհագրական կարգով:

Սակայն, Եւրոպա եւ Ամերիկա աւելի շուտ հասած տեղեկագրերն ու անհատ անձանց կողմից արւած պատմութիւններն ստանալով՝ դրանք տեղադրել ենք գրքի առաջին էջերում: Այսպէս վարւեցինք մասամբ ժամանակագրական առումով, մասամբ էլ՝ պատահած դէպքերի ընդհանուր գծերով համառօտագրութիւն կազմելով, որպէսզի կարողանանք ընթերցողին որոշ տպաւորութիւններ ու գաղափարներ տալ՝ գրքի մանրամասնութիւններին տեղեկանալուց առաջ:

Բացի այսքան զօրաւոր ապացոյցներից՝ ոչ նւազ կարեւոր տեղեկութիւններ են նաեւ հաղորդում այս նախնական վաւերաթղթերը, որոնց մէջ արձանագրւած են ամենասահմռկեցուցիչ, աննախադէպ ու դաժան նկարագրութիւնները, նոյնիսկ եթէ մի կողմ թողնենք առաջնակարգ վկաների տւած մանրամասները:

Առաջին հատւածում տեղ գտած ամենահետաքրքիր վաւերաթուղթը համարւում է թիւ 12-ը՝ վերցւած գերմանական աղբիւրներից: Չնայած գերմանական գրաքննութեան արգելքին՝ այն հրատարակւել է գերմանական թերթերում:

ՎԱՒԵՐԱԹՂԹԵՐ

1. ԱՄԵՐԻԿԵԱՆ «UNITED PRESS»-Ի՝ Կ. ՊՈԼՍԻ ԹՂԹԱԿԻՑ ՊՐՆ. ՀԵՆՐԻ ՈՒԴԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ՀՐԱՏԱՐԱԿՒԱԾ «THE AMERICAN PRESS« ԹԵՐԹՈՒՄ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 1915

Այնքան ծանր է կացութիւնը: Ջանգւածային ջարդերն արգելելու համար անհատապէս պայքարող դեսպան Մորգենթաուն ստիպւած՝ աջակցութիւն խնդրեց Թուրքիայի դաշնակից երկու տէրութիւնների դեսպաններից: Նրանց հազիւ յաջողւեց որոշ խոստումներ կորզել Երիտթուրքական կառավարութեան ազդեցիկ անդամներից, թէ այլեւս ջարդերի հրամաններ չեն տրւի:

Այսուհանդերձ՝ հայերի համար ամենաճգնաժամային վայրկեանները դեռ գալու էին, մանաւանդ երբ կուռող հայերը, որ արդէն տիրացել էին Վանին եւ մի շարք ուրիշ քաղաքների, եթէ առաւել յաջողութիւններ ունենային եւ կամ թուրքերը Դարդանէլում ձախորդութեան մատնւէին: Թուրքերի յայտարարութեան համաձայն՝ հայերի անկախ կառավարութիւն հաստատելու ձեռնարկն էր պատճառն ու պատասխանատուն, որ ձեռք էին առնւել խիստ միջոցներն ու ջարդերը: Միեւնոյն ժամանակ, հայերի դրութիւնը, տեղահանութեան, ցիրուցան անելու եւ բնաջնջման իրավիճակը, որ գործադրւում է ամենուր, անկարելի է նկարագրել ու բացատրել:

Հայերի ներկայ կոտորածների բացայայտ վերսկսւելը երեք ամսից աւելի շարունակւում էր գաղտնաբար: Սակայն, այժմ արդէն ներքին գաւառներից, երկրի ամենահեռաւոր անկիւններից կսկծացնող լուրեր էին հասնում այստեղ՝ Կ. Պոլիս: Ոչ մի բնակավայրում չէին խնայել հայ ժողովրդին: Հիմա ենք հասկանում, որ վայրագութիւնների հրամանը տրւել է մայիսի սկզբներին, եւ թուրքական ոստիկանական կազմակերպութիւնը ծայրայեղօրէն գործադրել է տրւած հրամանները:

Նկատելի է, որ հայ ազգաբնակչութեանը բնաջնջելու հրամանի գործադրութիւնը կարգադրւած էր այն միակ կազմակերպութեանը, որը թուրքերն ամենամեծ խնամքով կատարելագործել են: Կայսրութեան բոլոր ծայրերում գտնւող ոստիկանական բաժանմունքներ են ուղարկւել կնքւած հրամաններ՝ դրանք մասնաւոր եւ նախօրօք որոշւած օրը բացելու հրահանգով: Բացւելով եւ բովանդակութիւնը կարդացւելուն պէս՝ առանց վարանելու, գործադրւելու էին հրահանգւած մեթոդները հայերի հանդէպ՝ երկրի ողջ տարածքով:

Պրուսիայում, ուր սպասւում էր, որ, Կ. Պոլսի անկումից յետոյ, թուրքերը նոր մայրաքաղաք պիտի ընտրէին, անձամբ քննեցի այն կերպերը, որոնց միջոցով գործադրւել էին տրւած հրահանգները (փաստաթուղթ 101): Ներքին գաւառներից եկած ականատեսները միեւնոյն բանն էին պատմում: Կէս գիշերին ոստիկանութիւնը յանկարծակի պաշարում էր հայերի տները. ի մասնաւորի նրանց տները, որոնց անունները գրւած էին Կ. Պոլսից ուղարկւած անւանացանկում:

Տղամարդիկ ձերբակալւում էին, իսկ նրանց տները ենթարկւում էին մանրակրկիտ խուզարկութեան՝ հայերին ամբաստանող թղթեր գտնելու յոյսով: Նրանք յայտարարում էին, թէ իբր հայերը ճակատներում հայ յեղափոխական շարժման էին մասնակցում եւ կամ կառավարութեան դէմ դաւադրութիւն էին նախապատրաստում: Այս խուզարկութիւնների ժամանակ կտրատում էին թախտերի եւ պատերի վրայ գտնւող գորգերը, կոտրտում զարդեր ու ամանեղէն: Օրօրոցներում պառկած երեխաներին հանում էին՝ թւացեալ եւ կամ ենթադրեալ այդ թղթերը գտնելու յոյսով:

Նմանատիպ խուզարկութիւններ կատարելուց յետոյ ձերբակալւածներին, քաղաքից դուրս հանելով՝ սպանում էին: Այնուհետեւ, այդ ամենից յետոյ, սկսում էր հայաջինջ քաղաքականութեան ծայրայեղ գործադրութիւնը. տեղահանութիւն, ցիրուցան վիճակ, ջարդ: Այս ամէնն իրականացւում էր այնքան խստու-

թեամբ, որ հազարաւոր ընտանիքների անդամներ այլեւս անկարող էին վերստին միմեանց միանալ: Ոչ միայն այրերն ու կանայք, քոյրերն ու եղբայրները, այլեւ մինչեւ իսկ մայրերն ու փոքրիկ զաւակները վերստին միմեանց գտնելու յոյս բնաւ չունէին:

Կատարուող աննախընթաց ոճրագործութիւնն արդարացնելու եւ սոսկալի դրւագների իրականացումը պաշտպանելու համար՝ Կ. Պոլսի թուրքերը պատասխանատուութիւնը գցում էին հայերի վրայ: Թուրքերն ասում էին, թէ երբ յարձակումն սկսւեց Դարդանէլի վրայ, երբ թուրքերս, մեր բոլոր կենտրոնացւած ուժերով, պաշտպանում էինք Դարդանէլը, հայերին խստագոյնս ազդարարւեց, որ եթէ ապստամբեն, անպայման կը պատժւեն: Հայերը ոչ միայն ուշադրութիւն չդարձրին այդ յայտարարութեանը, այլեւ ապստամբելով՝ գրաւեցին Վանը եւ այլ քաղաքներ, ինչպէս նաեւ օգնեցին ռուսներին եւ Կովկասեան բանակի առաջխաղացմանը:

Ահաւասիկ, այսպէս է թուրքական տեսակէտը: Մէկ ուրիշ տեսակէտ եւս կայ, որը յայտնել են այնպիսի մարդիկ, ովքեր Եւրոպայում ու Ամերիկայում հանրածանօթ են որպէս կարող ու հեղինակաւոր անձինք: Նրանք երկար տարիներ ապրել են Թուրքիայում եւ ուսումնասիրել բնիկ ժողովրդին: Համաձայն այս տեսակէտի՝ Երիտթուրքերի կուսակցութիւնը նախօրօք վճռել էր Թուրքիայում ապրող հայ ժողովրդին, յիսուն տարով յետադիմական վիճակի վերածելով, ապահովել թուրք տարրի տիրապետութիւնն ու գերակայութիւնը:

Սա էր Երիտթուրքերի հիմնական սկզբունքներից մէկը: Այսպէս՝ նրանք Աբդուլհամիդի կողմից կատարւած ջարդերին յաւելում էին հայ ազգաբնակչութեան տեղահանութիւնը, նրանց ընտանիքներին ցիրուցան անելն ու բնաջնջելը: Վերջիններս՝ Երիտթուրքերը, աւելի յոռեգոյն ու վատթար էին, քան՝ առաջինը՝ Աբդուլհամիդի կառավարութիւնը:

2. 11 ՅՈՒՆԻՍԻ 1915 ԹՒԱԿԻՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ՈՒՂԱՐԿՒԱԾ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՊԱՍՏԱՀԱՒԱՔ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ՝ Կ.ՊՈԼՍԻՑ, ՔԱՋԱՏԵՂԵԱԿ ԵՒ ՉԷԶՈՔ ՄԻ ԱՂԲԻՒՐԻՑ

Բաբերդից բռնի տեղահանութիւնն սկսւել է յունիսի 1-ին (փաստաթուղթ 59): Այս թւականից մի շաբաթ առաջ արդէն հայկական բոլոր գիւղերը դատարկւել էին: 4.000-5.000 հոգուց բաղկացած երրորդ քարաւանը ճամբայ հանելուց վեց օր յետոյ՝ 15-16 տարեկան բոլոր արու երեխաներին առանձնացնելով՝ ճանապարհներին սրախողխող են արել:

Սոսկալի չարչարանքներ ու հալածանքներ են սկիզբ առել Կ. Պոլսին չափազանց մօտ գտնւող Պարտիզակ, Օւաջիկ, Արսլանբէկ, Դէհոնքէլ, Սապանջա, Քուրդբելէն գիւղերում: Եւ արդէն տասներկու հազար ընտանիքներ են աքսորւել այս գիւղերից:

3. 8 ՅՈՒԼԻՍԻ 1915 ԹՒԱԿԻՐ (ԱՐԱԲԿԻՐԻՑ՝ 25 ՅՈՒՆԻՍԻ 1915) ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂԱՐԿՒԱԾ ՄԻԵԻՆՈՅՆ ԿՈՄԻՏԷԻՆ

Հայ ժողովրդին իսլամացրել են: Եւ, արդարեւ, բռնի գաղթից ազատւելու միակ միջոցը սա էր: Իսլամները հայազգի օտարութեան մէջ գտնւող տղամարդկանց կանանց ու աղջիկներին են կնութեան առնում:

Մեզ տեղեկացրին, թէ փաղիշահը հրաման է արձակել, որ իւրաքանչիւր ոք պէտք է իսլամ դառնայ (փաստաթուղթ 82):

4. 15-28 ՅՈՒՆԻՍ 1915 ԹՒԱԿԻՐ ՆԱՄԱԿԸ ՄԻԵՒՆՈՅՆ ԱՂԲԻՒՐԻՑ Է ՈՒՂԱՐԿՒԵԼ «ԿՈՉՆԱԿ»-ԻՆ ԵՒ ՆԻՒ ԵՕՐՔ ՀԱՍԵԼ

28 ՅՈՒԼԻՍԻ 1915-ԻՆ

Ամերիկահայերդ տակաւին չէք լսել, անշուշտ, այն ճգնաժամի մասին, որով անցնում են թուրքահայերը: Խստագոյն գրաքննութիւնը եւ հայերի համար ճամբորդութեան բացարձակ արգելքն անջատել են Կոստանդնուպոլսի հայութեանը՝ գաւառից: Այսուհանդերձ՝ մեր իմացածը բաւական է՝ ձեզ գաղափար տալու այն մասին, որ թուրքաբնակ հայութիւնը ներկայումս վտանգի առջեւ է կանգնած, առկախեալ է կեանքի ու մահուան միջեւ: Ապօրինի բռնագրաւումներ, աշխատանքի արգելք, տիֆ հիւանդութեան պատճառած աւերներ, աքսոր ու բանտարկութիւն. այս ամէնը հայութեանը դէպի կորուստ ու մահ են առաջնորդում:

Ապրիլի սկզբներին, Վանի դէպքերից յետոյ, Երիտթուրքերի կառավարութիւնը հրամայեց գրաւել հայերի տները, դպրոցները, եկեղեցիներն ու եկեղեցապատկան բնակարանները: Հրամայուած էր երկրի բոլոր կողմերում գրաւել չէնքեր՝ պաշտօնապէս թոյլատրուածների հետ մէկտեղ: Շատ նկարներ, գրքեր, որոնց հրապարակաւ վաճառքը նախապէս թոյլատրուած էր, այժմ դառնում էին բանտարկութեան ու դատապարտութեան պատճառ:

Հէնց այս պատճառով՝ ներկայում Կեսարիայի բանտում 500-ից աւելի ազատազրկուած հայեր կան: Այս թւի մէջ չեն մտնում նրանք, ովքեր օրինական ամբաստանութեան, լոկ վարչական եղանակով են աքսորուել՝ լիովին իսլամաբնակ գիւղերում:

Այսուհանդերձ՝ այս ամէնը ոչինչ են՝ Կիլիկիայի եւ Կովկասի սահմանի վրայ տիրող կացութեան հետ բաղդատած: Այժմ թուրքական կառավարութիւնն իրականացնում է հայկական նահանգներից հայ ժողովրդին տեղահանելու ծրագիրը՝ օգտուելով եւրոպական պետութիւնների զբաղուածութիւնից, ինչպէս նաեւ՝ Գերմանիայի եւ Աւստրիայի անտարբերութիւնից:

Դեռեւս սրանից չորս ամիս առաջ կառավարութիւնն սկսեց գործադրել այս ծրագիրը նախ Զէյթունում (փաստաթուղթ 15)՝ բռնութեամբ տեղահանելով Զէյթունի, Դէորթ Եօլի եւ շրջակայ բնակավայրերի ողջ հայ ազգաբնակչութեանը, ինչպէս նաեւ Մարաշի ու Հասան Բէյլիի ժողովրդի մեծամասնութեանը:

Աքսորեալներից ոմանք ուղարկուեցին Գոնիայի Սուլթանիէ նահանգը: Սակայն, մեծամասնութիւնը ցիր ու ցան եղան Զորի նահանգի գիւղերում եւ Հալէպի շրջակայքում գտնուող Մամբիջ Պատ, Մասարա, Իդլիբ գաւառներում: Նմանատիպ բռնի տեղահանութիւնները տակաւին շարունակւում են Ադանա, Մերսին, Հաճըն եւ Սիս նահանգներում: Այդ մասին տեղեկանում ենք նշած բնակավայրերից մեզ հասած նամակներից:

Այս ողջ ժողովրդին տեղահան են արել՝ առանց իսկ որեւէ հնարաւորութիւն տալու, որպէսզի իրենց հետ վերցնեն որոշ անհրաժեշտ իրեր: Նրանց քշել են այնպիսի բնակլիմայական պայմաններ ունեցող վայրեր, որոնց նրանք երբեք վարժուած չեն եղել: Այնուհետեւ լքել են նրանց այնտեղ՝ առանց ապաստարանի, մերկ ու սովամահ: Տարագիր աքսորեալներն ստիպուած են եղել գոյատեւել մէկ պատառ հացով, ինչը կառավարութիւնը շատ էր համարում եւ մեծ դժկամութեամբ էր տրամադրում նրանց:

Այս մէկ պատառիկ հաց տուողն այն կառավարութիւնն է, որ իր զօրքերի համար անգամ անկարող է հաց հայթայթել: Երբ Կ. Պոլսում լսում ենք այս բռնի գաղթերի մանրամասները, արիւնաքամ ու սրտակեղեք արտասուք է քամւում մեր աչքերից: Նրանցից 1.000 ընտանիքներ գտնւում են այնտեղ՝ Սուլթանիէ նահանգում: Բռնի գաղթեալների մէջ միայն յիսուն տղամարդիկ կան:

Նրանց մեծամասնութիւնը ճամբորդել է ոտքով քայլելով: Ծերերն ու մանուկները մահացել են ճանապարհներին: Երիտասարդ կանայք ու մանուկներն առաջնորդուել են անանցանելի ճամբաներով, լքուել լեռների վրայ: Մինչեւ իսկ այժմ, երբ արդէն իրենց աքսորավայրերն են հասել, սովից, հիւանդութիւնից ամէն օր բազմաթիւ մահեր են արձանագրւում: Հալէպում օրական 350 օսմանեան ոսկի է անհրաժեշտ՝ աքսորեալներին հաց հայթայթելու համար: Այլեւս անկարող ենք երեւակայել, թէ նրանք այս անապատում ինչ վիճակում են գտնւում: Այդ վայրերում նոյնիսկ բնիկ արաբներն են սովամահ լինում:

Կոստանդնուպոլսից մի փոքր գումար է ուղարկուել Կիլիկիոյ կաթողիկոսին, ով այժմ գտնուում է Հալէպում եւ ականատեսն է իր հօտի սոսկալի թշուառութեան: Հալէպում կառավարութիւնը թոյլատրում է նպաստ բաշխել այս դժբախտներին: Ընդհակառակը՝ Սուլթանիէում գտնուող տարագիրներին անհընար է նպաստ հասցնել: Հակառակ ամերիկեան դեսպանատան ջանքերին՝ կառավարութիւնը մերժել է տալ խնդրուած արտօնութիւնը:

Միեւնոյն կացութիւնն է տիրում Էրզրումում, Բիթլիսում եւ Սղերդում: Մեր ստացած ամենաստոյգ տեղեկութիւնների համաձայն՝ Էրզրումի եւ շրջակայ բնակավայրերի տեղահանութիւնն սկսուել է դէպի Դերջան ուղղութեամբ, եւ ոմանց մի քանի օրով հանգիստ է չնորհուել: Բիթլիսից եւ Սղերդից հեռագրով նպաստ են խնդրում:

Մուշից լուր չունենք, բայց այնտեղ եւս միեւնոյն կացութիւնն է տիրում (հատ. Գ): Խնուսում ջարդեր են եղել (փաստաթուղթ 53), սակայն այդ մասին տակաւին ստոյգ տեղեկութիւն չունենք: Սւազի տարածաշրջանում, ինչպէս Կովտունը եւ Էլի մի շարք գիւղեր այրուել են:

5. Կ. ՊՈԼԻՍ 12/25 ՅՈՒՆԻՍ ԹՒԱԿԻՐ ՆԱՄԱԿԸ ՆՈՅՆ ԱՂԲԻՒՐԻՑ՝ ՀՐԱՏԱՐԱԿՒԱԾ «ԿՈՉՆԱԿ»-ՈՒՄ Ի ՆԻՒ ԵՕՐՔ

28 ՕԳՈՍՏՈՍԻ 1915

Վերջին նամակիցս ի վեր մեր ազգի վիճակը գնալով վատթարանում է, որովհետեւ ոչ միայն Կիլիկիայի, այլեւ բոլոր նահանգների հայերը տարագրուել են: Սամսոնից մինչեւ Կեսարիա եւ Ուրֆա նահանգներում գտնուած բոլոր հայերը՝ մէկուկէս միլիոն, դէպի Միջագետքի անապատներ են քշուել՝ քուրդերի ու արաբների մէջ: Ժողովուրդը չի կարողանում իրեն անհրաժեշտ գոյքերը տանել իր հետ:

Մինչեւ իսկ ամենակարեւոր իրերն անգամ հնարաւոր չէ վերցնել իրենց հետ՝ ճանապարհների անապահովութեան ու դրանք տեղափոխելու անկարելիութեան պատճառով: Այն տարագիրները, որոնց բախտ կը վիճակուի հասնել նախորոշուած վայրերը, եթէ անմիջապէս նպաստ չստանան, անօթութիւնից անպայման կը մահանան:

6. ՆԱՄԱԿ ՄԻԵԻՆՈՅՆ ԱՂԲԻՒՐԻՑ, 26 ՅՈՒԼԻՍԻ 1915, Կ. ՊՈԼԻՍ՝ ԳՐՒԱԾ ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԿՐԻՑ ՀԵՌՈՒ ԳՏՆՒՈՂ ՆՇԱՆԱՒՈՐ ՄԻ ՀԱՅԻ ԿՈՂՄԻՑ

Մայիսի 25-ից ի վեր միմեանց են յաջորդում դէպքեր, որոնք մէկը միւսից սոսկալի են: Ազգի դժբախտութիւնը հասել է գագաթնակէտին:

Էրզրումի հայերի կացութեան մասին, մի շարք դժնդակ տարաձայնութիւններից բացի, վերջերս ուրիշ ոչինչ չենք լսել, բացի Կիլիկիայի տարբեր քաղաքների եւ գիւղերի հայ բնակչութեան տարագրութեան լուրերից:

Մի ամենավստահելի աղբիւրից լսեցինք, որ Կիլիկիայի բոլոր գիւղերի ու քաղաքների հայ բնակիչները, զանգւածային տեղահանութեամբ, քշւել են դէպի Հալէպի անապատային գաւառներ: Մայիսի 1-ից ի վեր Էրզրումի նահանգի հայերին Սամսոն հաւաքելով՝ լցրել են նաւերի մէջ:

Կեսարիայի, Տիգրանակերտի, Ուրֆայի, Տրապիզոնի, Սւազի, Խարբերդի եւ Վանի նահանգների բնակիչները քշւել են դէպի Միջագետքի անապատները, մինչեւ Մուսուլ ու Բաղդադ: Հայաստանն առանց հայերի՝ ահա՛ Օսմանեան կառավարութեան ծրագիրը: Իսլամներին թոյլատրւել է տիրանալ հայոց լքւած տներին եւ ունեցւածքին:

Տարագիրներին արգելւել է որեւէ բան վերցնել իրենց հետ: Հարկ է նշել, որ զինւորների գրաւած գաւառները գրեթէ կողոպտւել են հէնց նոյն զինւորների կողմից: Նրանք տարել են այն ամէնը, ինչ կարողացել են:

Տարագիրները մէկ կամ երկու ամսւայ ճամբորդութիւնը ոտքով են կատարել: Իրենց բնակութեան համար նախատեսւած անապատի անկիւնները հասնելուց առաջ՝ շատերը մահացել են ճանապարհներին: Տեղ հասնողների համար էլ այդ նախատեսւած վայրերը, ճակատագրի բերումով, գերեզմաններ են դառնում: Արդէն լսում ենք, որ ճանապարհներն ու Եփրատի ալիքները լցւած են դիակներով: Անտարակոյս, վերապրողները եւս մահանում են, որովհետեւ ո՛չ տուն, ո՛չ գործ, ո՛չ էլ հաց են կարողանում գտնել անապատում:

Խիստ որոշ ու յայտնի է, որ հայ ազգն արմատապէս բնաջնջելու ծրագիր է իրագործւում՝ ամենասոսկալի եւ նոր մեթոդներով ջարդեր կատարելով:

Դարձեալ յիշատակելու ենք, որ 20-45 տարեկան տղամարդկանց, զէնքի ուժով, ճակատներ էին ուղարկել: 45-60 տարեկանները, զինւորական փոխադրութիւններ կատարելու համար, որպէս զինւոր էին ծառայում: Իսկ բոլոր նրանք, ովքեր, զինւորական տուրք վճարելով, ազատւել էին զինւորական ծառայութիւնից, զանազան պատրւակներով բանտարկւել կամ աքսորւել են: Այնպէս որ՝ կանանցից, մանուկներից ու ծերերից բացի՝ ուրիշ ոչ ոք չի մնացել, որ տեղահանւի:

Այս խեղճերն էլ ստիպւած են անցնել այնպիսի ճամբաներով, որ խաղաղ ժամանակներում անգամ վտանգաւոր են համարւել, քանի որ մշտապէս առկայ էր ամէն քայլափոխի կողոպտւելու վտանգը: Այժմ, երբ թուրքական յեղուզակ ժանդարմները, պաշտօնեաներն ու «չեթէները» վայելում են սանձարձակ արտօնութիւններ, կողոպտում են բոլոր տարագիրներին եւ անպատւում կանանց ու աղջիկներին:

Շատ վայրերում հայերին բռնի իսլամացնում էին: Ժողովուրդն իր կեանքը փրկելու ուրիշ միջոց արդէն չունէր: Լսած կը լինէք քսան հնչակեաններին Կոստանդնուպոլսում կախելու մասին: Նրանց դէմ արձակւած մահւան վճիռը երբեք չէր համապատասխանում Օսմանեան կայսրութեան Պատժական օրէնսգրքի յօդւածներին: Նոյն օրը Կեսարիայում եւս կախել էին տասներկու հայերի՝ նրանց ամբաստանելով, թէ հաղորդակցւում էին Բուխարեստում հաւաքւած դաշնակցական ու հընչակեան համաժողովի հետ:

Սրանից բացի՝ երեսուներկու հայեր եւս Կեսարիայում դատապարտւել են տաժանակիր աշխատանքների, որոնց մէջ կային նաեւ տասներկու տարեկան երեխաներ: Դատապարտւածների մէջ կային վաճառականներ նոյնպէս, ովքեր երբեք որեւէ յարաբերութիւն չէին ունեցել քաղաքական կուսակցութիւնների հետ: Տասներկու հայերի էլ կախել էին Կիլիկիայում: Վերջապէս, դատապարտութիւնները դարձել էին ամենօրեայ պատահարներ: Բաւական է, որ մի հայի մօտ զէնք, գիրք կամ որեւէ նկար գտնէին:

Հապա ճիպոտի հարուածների տակ որքա՜ն մարդիկ են մահացել. Տիգրանակերտում տասներկուսը, Շապին Գարահիսարում տասներեքը, Կեսարիայում վեցը, իսկ Բիւրք գիւղի քահանաներին ու նրանց ընկերներին սպանել են Սու Շեհրի եւ Սւազի ճանապարհներին՝ ձեռնակապերով միմեանց շղթայած վիճակում:

Ջանց եմ անում կրկնել այն վայրագութիւնների պատմութիւնները, որոնք լսել ենք: Ամբողջ երկրի տարածքում հայերի տներում ամենախիստ խուզարկութիւններ են կատարուել՝ զէնք եւ յեղափոխական գրութիւններ գտնելու պատրւակով: Ջեն խնայել եկեղեցիներն ու դպրոցները եւ ոչ էլ եկեղեցականներին ու նրանց յատկացուած բնակարանները: Փլցրել ու հիմնայատակ կործանել են վանքեր ու եկեղեցիներ, նահատակել եկեղեցականներին ու առաջնորդ հայրերին:[4]

Աշխարհից այնպէս ենք կտրուել, որ կարծես թէ բերդում ենք գտնուում. ո՛չ թղթակցութիւն, ո՛չ հեռագիր, ո՛չ էլ հաղորդակցութեան այլ միջոց ունենք:

Վանի եւ Բիթլիսի շրջակայ գիւղերը սրածութեամբ եւ կողոպուտով աւերուել են: Այս ամսւայ սկզբներում սոսկալի կերպով ջարդեցին Շապին Գարահիսարի ժողովրդին: Ասում են, թէ միայն մի քանի փոքրիկ երեխաներ են հրաշքով ազատուել: Դժբախտաբար, խիստ ուշացումով եւ դժւարագոյն միջոցներով ենք լսում այս դէպքերի մասին:

Ահաւասիկ, տեսնում էք, որ հազիւ թէ մի քանի օրւայ կեանք ունեն թուրքահայերը: Եթէ արտասահմանում գտնուող հայերը չաշխատեն չէզոք տէրութիւնների ուշադրութիւնը սեւեռել մեզ վրայ, ապա, մի քանի ամիս անց, Թուրքիայում գտնուող մէկ ու կէս միլիոն հայութիւնից խիստ չնչին մի մասը կը մնայ: Այն ժամանակ հայ ազգի բնաջնջումն անխուսափելի կը լինի:

7. ՆԱՄԱԿ ՄԻԵԻՆՈՅՆ ԱՂԲԻՒՐԻՑ, 2-15 ՕԳՈՍՏՈՍԻ 1915, Կ. ՊՈԼԻՍ. ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԿՐԻՑ ՀԵՌՈՒ ԳՏՆԻՈՂ ՄԻԵԻՆՈՅՆ ՀԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԳՐՒԱԾ

Ներքին գաւառների մասին քեզ գրածս վերջին նամակից յետոյ՝ առաւել լիակատար տեղեկութիւններ ենք ստացել հետեւեալ վկաներից.

ա) Բռնի իսլամացած մի հայ կնոջից, ով գաղտնի կերպով Կոստանդնուպոլիս է եկել:

բ) 9-10 տարեկան զիլէցի մի աղջկանից, ում յափշտակել էր մի թուրք սպայ եւ Կոստանդնուպոլիս բերել:

գ) Խարբերդից եկած մի թուրք ճամբորդից:

դ) Օտարահպատակ ճամբորդներից՝ Երզնկայից եկած:

Վերջապէս, այս տեղեկութիւնները կա՛մ ականատեսներից, եւ կա՛մ բուն իսկ ոճրագործների զոհերից են ստացել:

Այլեւս հաստատուած իրողութիւն է, որ Էրզրումի, Տրապիզոնի, Սւազի, Բիթլիսի, Խարբերդի եւ Տիգրանակերտի նահանգներում բնաւ հայ ազգաբնակչութիւն չի մնացել: Այս նահանգներում բնակւող մէկ միլիոն հայերը, իրենց տներից քշւելով, աքսորւել են դէպի հարաւ: Ապրիլի 1-ից սկսեալ՝ տեղական իշխանութիւնները, խստօրէն եւ առանց բացառութեան, տեղահանութիւններ են կատարել: Նախեւառաջ բոլոր գիւղերի ու քաղաքների հայ ազգաբնակչութիւնը, ժանդարմների, ոստիկանների եւ բանտից ազատ արձակւած ոճրագործների միջոցով զինաթափ էր արւել եւ այդ առիթով ենթարկւել գազանաբարոյ չարչարանքների:

Այնուհետեւ նրանք զանգւածաբար բանտարկւել են այն պատճառաբանութեամբ, թէ արգելւած գրքեր, զէնքեր եւ քաղաքական կազմակերպութիւններից ստացւած յատուկ գրութիւններ են գտել նրանց մօտ: Սակայն, իրականում բաւական էր միայն դիրքի ու հարստութեան տէր լինէին, որպէսզի նրանց տեղահանէին ու ջարդէին: Նախեւառաջ աքսոր ուղարկելու պատրւակով իրաւազուրկ արեցին այն բոլոր մարդկանց, ովքեր

երբեք բանտարկված չէին եղել եւ կամ, բանտարկելուց յետոյ, դատապարտելու հիմնաւոր փաստարկ չգտնելով, ազատ էին արձակւել:

Նրանց բոլորին էլ կոտորել են: Ճանապարհ հանելուց առաջ՝ խուզարկւում էին կառավարութեան կողմից եւ առգրաււում էին նրանց մօտ եղած դրամները, արժէքաւոր իրերը, այնուհետեւ հինգական կամ տասական մարդկանց միմեանց կապելով՝ սպանում էին: Մնացածները՝ ծերերը, կանայք եւ երեխաները, համարւում էին կորած առարկաներ: Խարբերդի նահանգում հայերին յանձնել էին իսլամ հասարակութեան քմահաճոյքին:

Ամենաբարձր պաշտօնեայից սկսեալ մինչեւ յետին գեղջուկ թուրքն իրենց հաւանած աղջկան կամ կնոջը, բռնի վերցնելով, իսլամացնում էին: Երեխաներից եւս վերցրին ըստ պահանջի, իսկ միւսներին քշեցին դէպի աքսորի ճանապարհներ՝ պարէնից ու սնունդից զուրկ, որպէսզի կա՛մ սովամահ լինեն, եւ կա՛մ ստրկացւեն սրիկաների կողմից: Տիգրանակերտի նահանգում ամենասոսկալի ջարդն էր իրականացւել, իսկ Մարտինիում բոլորովին անակնկալ կոտորեցին քրիստոնեայ ազգաբնակչութեանը՝ վերոյիշեալ միեւնոյն վայրագութեամբ:

Էրզրումի, Բիթլիսի[5], Սւազի եւ Տիգրանակերտի նահանգների ժողովրդին կառավարութիւնը տասնօրեայ պայմանաժամանակ էր տւել, որպէսզի վաճառեն իրենց գոյքերը եւ վարձեն գրաստներ ու կառքեր՝ դիւրութեամբ ճամբորդելու համար: Մի քանի օր ճանապարհ գնալուց յետոյ՝ կառապանները լքել են տարագիրներին եւ վերադարձել իրենց տները:

Այնուհետեւ իսլամ գիւղացիները, յելուզակները, կազմակերպւած «չեթէներ»-ը թալանել ու կողոպտել են նրանց: «Չեթէները», ժանդարմների հետ խօսքները մէկ արած, կոտորեցին տարագիրների մէջ գտնւող ծերերին ու երիտասարդներին, առեւանգեցին գեղեցիկ աղջիկներին, կանանց ու մանուկներին, իսկ ծեր կանանց թողեցին ճանապարհների վրայ, ովքեր, ժանդարմների անագորոյն հարւածների տակ, քշւելով՝ մեռան:

Մի ականատես պատմում է, որ էրզրումի նահանգից աքսորւած կանանց լքել էին Խարբերդի դաշտի մէջ: Նրանք բոլորն էլ

մահացան քաղցից: Ամէն օր 50-60 տարագիրներ էին հրաժեշտ տալիս կեանքին՝ սովի ու տառապանքների պատճառով: Կառավարութիւնը մտահոգ է. թաղել է տալիս բոլոր դիակները, որպէսզի չվտանգւի իսլամների առողջութիւնը:

Զիլէցի մի փոքրիկ աղջնակ պատմում էր, որ երբ Մարզւանի, Ամասիայի, Թոգաթի հայերը հասան Սարագիշլա (Կեսարիայի եւ Սւազի մէջտեղը), կառավարական շէնքի պատուհանների առջեւ մայրերի գրկից խլեցին երկսեռ երեխաներին: Ցափշտակւած մանուկներին հաւաքեցին մի հաստատութեան մէջ, իսկ ծնողներին ստիպեցին շարունակել իրենց ճամբան: Այնուհետեւ լուր ուղարկեցին շրջակայ բնակավայրերի իսլամ գիւղացիներին, ովքեր եկան եւ ընտրելով՝ իրենց մէջ բաժանեցին կանանց ու աղջիկներին:

Իրեն ու իր ընկերուհի ամասիացի Նւարդին մի թուրք սպայ է վերցրել եւ բերել Կոստանդնուպոլիս: Ամենուր երեխաների ու կանանց քարաւանները ցուցադրում էին կառավարական շէնքերի առջեւ, որպէսզի իսլամները կարողանային իրենց հաւանածներին ընտրել ու վերցնել:

Բաբերդից դուրս բերւած քարաւաններն այս կերպ նւազեցրին, իսկ մնացած կանանց ու երեխաներին, Երզնկայից դուրս գտնւող Քեմախ Բողազ կոչւած վայրում, նետեցին Եփրատ գետի ալիքների մէջ (փաստաթուղթ 59, 60. Երզնկայի ականատեսը նորւեգացի չէր, այլ՝ դանիացի): Օր. Ֆլորան, Ա. Թեթէլ Եարլեսբերգ նորւեգացի մի նշանաւոր ընտանիքի զաւակն էր եւ Երզնկայում գերմանական Կարմիր Խաչում հիւանդապահուհի էր: Նա եւ իր պաշտօնակիցը, տեսնելով այս բարբարոսութիւնները՝ այն աստիճան ընդվզեցին, որ, իրենց հրաժարականը տալով, Կոստանդնուպոլիս վերադարձան եւ անձամբ այցելեցին տարբեր պաշտօնատներ ու վկայեցին իրենց տեսած դժոխային ոճիրների մասին:

Միեւնոյն բարբարոսութիւններն են իրագործւել նաեւ բոլոր վայրերում: Ներկայում ներքին գաւառների բոլոր ճանապարհներին ճամբորդները հայերի դիակների վրայով են անցնում: Մալաթիայից Սւազ գնացող մի իսլամ ճամբորդ մշտապէս կանանց ու երեխաների դիակների վրայով է անցել: Մալաթիայի

արական սեռի ողջ հայ ազգաբնակչութեանն այս ճանապարհների վրայ են կոտորել: Իսկ կանանց ու երեխաներին իսլամացրել են:

Ոչ մի հայ չի կարող ճամբորդել այս կողմերով, որովհետեւ իւրաքանչիւր իսլամ, մանաւանդ ժանդարմներն ու չեթէները, իրենց պարտականութիւնն են համարում սպանել հայերին: Վերջերս պրն. պրն. Զոհրապն ու Վարդգէսը՝ Օսմանեան պառլամենտի հայ անդամները, Տիգրանակերտի ռազմական (պատերազմական) ատեանի առջեւ դատուելու պատրւակով, աքսորուեցին Կ. Պոլսից եւ, Հալէպից փոքր ինչ հեռու, չարաչար ու դաժան կերպով սպանուեցին:

Սոյն վայրերում ցանկացած մէկը միայն իսլամ անուան տակ կարող է ճամբորդել: Անդրադառնալով կանանց՝ ասենք, որ մանրամասնութիւններ հաղորդելու կարիք չկայ: Արդէն բաւականին խօսեցինք այն պատիւների մասին, որոնք հրամցուեցին հայազգի կանանց, տեսանք, թէ ինչպէս լիովին արհամարհեցին ու անարգեցին նրանց կեանքն ու պատիւը:

Հայ զինուորները նոյնպէս նման բախտի արժանացան: Նրանց զինաթափ արեցին եւ ուղարկեցին ճանապարհների վերաշինութեամբ զբաղուելու (փաստաթուղթ 23 եւ 62): Ստոյգ տեղեկութիւններ ստացանք, որ Էրզրում-Երզնկա ճանապարհի վրայ աշխատող հայ գործաւոր զինուորներին կոտորել են: Ջարդուել են նաեւ Տիգրանակերտի, Ուրֆայի եւ Խարբերդի ճանապարհներին աշխատողները: Խարբերդում գտնուող 1.800 հայ բանւորզինուորականներին, ուղարկելով Արղնի, ճանապարհին կոտորել են:

Սւազում իսլամանալու համար հետեւեալ պայմաններն առաջարկուեցին հայերին. նրանք իրենց տասներկու տարեկան բոլոր զաւակներին պիտի յանձնէին կառավարութեանը, որպէսզի տեղաւորէին որբանոցներում: Ապա, իրենց ցանկութեամբ, պէտք է թողնէին սեփական տները եւ հաստատուէին այն վայրերում, ուր կառավարութիւնը կորոշէր:

Խարբերդում չէր ընդունւում տղամարդկանց իսլամանալը, իսկ կանանցն ընդունւում էր այն ժամանակ միայն, երբ գտնուէր որեւէ իսլամ եւ ամուսնանալու ցանկութիւն յայտնէր: Շատ հայ

կանայք նախընտրեցին իրենց, զաւակների հետ միասին, Եփրատ գետը նետել, անձնասպան լինել իրենց տներում, քան՝ իսլամանալ: Եփրատն ու Տիգրիսը հազարաւոր հայերի գերեզման դարձան:

Սեւ ծովի եզերքի, Տրապիզոն, Կիրասոն ու Սամսոն քաղաքների իսլամացած հայ ազգաբնակչութիւնն ուղարկուել է լիովին իսլամաբնակ ներքին գաւառներ: Շապին Գարահիսարը դիմադրեց զինաթափութեանն ու տեղահանութեանը, ուստի՝ ռմբակոծուեց: Քաղաքի ու շրջակայքի բոլոր հայերը, եկեղեցականից մինչեւ ամենայետին մարդը, անգթօրէն սրախողխող արուեցին:

Մէկ խօսքով՝ Սամսոնից մինչեւ Սղերդ ու Տիգրանակերտ ոչ մի հայ չի մնացել: Մեծամասնութիւնը կոտորուել է, մի մասը առեւանգուել, իսկ միւս մասն էլ՝ իսլամացուել:

Պատմութեան մէջ երբեք այսպիսի սպանդ չի արձանագրուել: Ստիպւած ենք հաստատել, որ Աբդուլհամիդի ժամանակ հայերս աւելի բարեբախտ էինք:

Գաւառի հոգեւոր առաջնորդների մասին հասած լուրերից հետզհետէ տեղեկանում ենք, թէ ինչպէս են նրանք նահատակուել: Գեր. Անանիա Հազարապետեանը՝ Բաբերդի հայերի առաջնորդին, առանց կենտրոնական կառավարութեան մահավճռի վաւերացման, կախել են: Խարբերդի հայոց առաջնորդ Տ. Խորէնեանին ճանապարհ հանեցին իբրեւ աքսորեալ, սակայն, քաղաքից դուրս գալուն պէս, սպանեցին:

Բոլորովին լուր չունենք Սղերդի, Բիթլիսի, Մուշի, Քղիի, Բալուի, Երզնկայի, Քեմախի, Թոգաթի, Սամսոնի, Տրապիզոնի, անցած ամսից սկսեալ էլ՝ Սւազի ու Էրզրումի հայոց առաջնորդներից:[6] Աւելորդ ենք համարում խօսել այն բոլոր նահատակւած քահանաների մասին, ովքեր սպանուեցին այն ժամանակ, երբ աքսորում էին ժողովրդին, կոտորում, իսկ եկեղեցիներն ու դպրոցները վերածում մզկիթների ու ախոռների:

Այս ամենից բացի՝ Կոստանդնուպօլսում սկսել են գաղտնաբար վաճառել հայկական եկեղեցիների սրբազան անօթներն ու առարկաները: Միաժամանակ, թուրքերն սկսել են հայոց դրժբախտ մայրերի զաւակներին Կ. Պոլիս բերել:

Թւում է, թէ կոտորածները նւազ անագորոյն են եղել Կիլիկի-

այում: Եւ կամ ճշգրիտ լուրեր տակաւին չենք ստացել: Դէպի Դեր Զոր աքսորուած ժողովուրդը կորչելու է քաղցից: Մինչեւ իսկ լսել ենք, որ կառավարութիւնը հանգիստ չի թողել Հալէպում եւ Ուրֆայում գտնուող հայկական փոքրիկ համայնքները, որոնք կարող էին օժանդակել դէպի հարաւ աքսորուած իրենց եղբայրներին: Կիլիկիոյ կաթողիկոսը Հալէպում զբաղուած է մեր ուղարկած նպաստը տարագիրներին բաշխելով:

Մենք նախ խորհեցինք, թէ կառավարութեան ծրագիրն է լուծել Հայկական Հարցը՝ մէկանգամընդմիշտ հայերին հեռացնելով հայկական վեց վիլայէթներից ու Կիլիկիայից: Դժբախտաբար, այս ծրագիրը մեր պատկերացրածից աւելի ընդարձակ եւ նպատակային էր՝ ամբողջ Թուրքիայի տարածքից բնաջնջել հայութեանը: Արդիւնքը բացայայտ է՝ այն վեց վիլայէթներում, ուր կառավարութիւնը բարեկարգութիւններ պիտի անէր, հարիւր հայից մէկը ողջ չի մնացել: Մենք չգիտենք նաեւ, թէ Մուսուլ եւ կամ նրա շրջակայքի բնակավայրերը գոնէ մէկ հայ ողջ տեղ հասե՞լ է:

Այս ծրագիրը գործադրուել է մինչեւ իսկ Կ. Պոլսի արուարձաններում: Իզմիրի եւ Պրուսիայի հայերը բռնի աքսորուեցին դէպի Միջագետք: Աթափազարի, Արմաշի, Քէյլէի եւ դրանց շրջակայքի բոլոր հայերը նոյնպէս, իրենց տներն ու գոյքերը լքելով, աքսորի քշուեցին: Գոնիայում տարագիրներն իրենց փոքրիկներին պաշտպան հայերին թողեցին, սակայն կառավարութիւնը բռնի կերպով վերցրեց նրանց ձեռքից եւ տուեց իսլամներին:

Այժմ հերթը Կոստանդնուպոլսին է հասել: Ժողովուրդը զարհուրանքի է մատնուել եւ ահուդողով վայրկեան առ վայրկեան սպասում է դժնդակ վճռի իրագործմանը: Անթիւ ձերբակալութիւններ են կատարուում: Ձերբակալուածներին իսկոյն հեռացնում են մայրաքաղաքից, իսկ նրանցից շատերին կորստեան են մատնում առայաւէտ:

Ձերբակալուածների մէջ են գտնուում նաեւ շատ վաճառականներ: Ամէն ջանք ի գործ ենք դնում՝ փրկելու Կոստանդնուպոլսի հայութեանն այս ցեղաջինջ ահազանգերից, որպէսզի հետագայում Թուրքիայի դէմ յարուցելիք հայկական դատի համար գոնէ մի յենակէտ ունենանք:

8. ԱԹԵՆՔ 8/21 ՅՈՒԼԻՍ 1915 ԹՒԱԿԻՐ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՄԻ ԹՈՒՐՔԱԲՆԱԿ ՀԱՅԻ ՆԱՄԱԿԻՑ ՔԱՂՒԱԾՔ, ՈՐԸ ԳՐԵԼ Է ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԻՐ ՀԱՅ ԲԱՐԵԿԱՄԻՆ

Թուրքիայում այնպիսի դէպքեր են տեղի ունեցել, որ վախենամ, թէ Դուք լիակատար տեղեկութիւն չունէք այդ մասին՝ խիստ գրաքննութեան եւ ճամբորդների չգոյութեան պատճառով: Քանի որ ես կարողացել եմ ձեռք բերել ամենաստոյգ տեղեկութիւններ ու ծանօթութիւններ՝ իմ պարտականութիւնը համարեցի Ձերդ Վսեմութեանը հասցնել այդ լուրերը:

Պրն. Ա.-ն, որ չորս տարուց աւելի Կիլիկիայի Բ քաղաքում միսիոնար-ուսուցիչ էր, ում հետ անձնապէս ծանօթ եմ եւ կատարելապէս հաւատում եմ նրա ասածներին, երէկ ժամանեց այս քաղաք՝ պրն. Ա. Ա. դպրոցի տեսչի դուստր օր. Բ.-ի հետ:

Ըստ նրա հաղորդած տեղեկութեան՝ Կիլիկիայի հայոց կացութիւնը սոսկալի է: Դէորթ Եօլ քաղաքը դատարկուեց հայերից, իսկ թուրքերը խաղաղ ճանապարհով գրաւեցին նրանց տները՝ առանց քաղաքային ու զինուորական իշխանութիւնների միջամտութեան: Իրենց տներից ու բնակավայրերից տեղահան են արել բոլոր հայերին: Այժմ նրանք տառապում են սովից: Անընկարագրելի է տայայտանքը: Տեղահանութիւնից առաջ՝ կախեցին նշանաւոր վաճառականներին՝ ամբաստանելով, թէ հաղորդակցւում էին անգլիական նաւատորմիղի հետ եւ լրտեսում՝ յօգուտ Դաշնակիցների:

(Փաստաթուղթ 123). Ձէյթունում բնաւ հայ չթողեցին, իսկ թուրքերը տեղաւորուեցին նրանց տներում: Ձէյթուցիների գլխին եկածը ոչ ոք չգիտի. կառավարութիւնը կարգադրել եւ այնպիսի նախապատրաստական աշխատանք էր տարել, որ նրանք միատեղ ու ամփոփ չմնան: Ողջ ազգաբնակչութեանը ցրել են Մարաշի գիւղերը՝ իւրաքանչիւր գիւղ ուղարկելով երկուսից երեքական ընտանիքներ, իսլամացնելու մտադրութեամբ:

Նոյն կերպ են վարուել նաեւ Հաճըն քաղաքի հետ: Քանի որ տների կէսը ժողովուրդն արդէն լքել էր, ուստի՝ դրանք գրաւեցին թուրքերի կողմից: Թարսուսի եւ Ադանայի թուրքերը 1909 *թւականի ջարդերի ժամանակների տրամադրութիւններով էին տոգորուած:*

Բէյրութի միսիոնարները պատմում են, որ նոյն հալածանքներն են կիրառւում նաեւ Սիրիայի քրիստոնեաների դէմ:

Դոկտ. Ք.-ն՝ բազմամեայ միսիոնարը, ասում է, թէ Զմիւռնիայում վերջերս Ա. Դ.-ն եւ նրա հետ էլ երեսուն հայեր աքսորուեցին Էնգիւրի, այն ամբաստանութեամբ, թէ հնչակեաններ են եւ կամ էլ՝ համակիրներ: Դրամաշորթութիւնը, կողոպուտն ու նախատինքը սովորական բաներ են, եւ կացութիւնը Աբդուլ-համիդի ժամանակներից աւելի վատ է: Դոկտ. Ք.-ն երեսունհինգ տարի ապրել է Թուրքիայում եւ լաւ է ճանաչում թուրքերին:

Կեսարիայում ուռ եւ Կոստանդնուպոլսում միաժամանակ քսանվեց հայեր կախեցին այն ժամանակ, երբ արդէն ընդունել էին տէրութիւնների այն զեկոյցը, որ սպառնում էր հայոց ջարդերի համար պատասխանատու ճանաչել թուրք պաշտօնէութեանը: Բանտարկութիւնն ու աքսորը սովորական բաներ են: Եւ, վերջապէս, միսիոնարն աւարտեց իր խօսքը՝ ասելով. «Պարտաւոր եմ խիստ ուրախ լինել, որ ազատուել եմ բանտից ու աքսորից»:

Դոկտ. Ք. Կ.-ն, Կ. Պոլսից գալով, տեղեկութիւններ հաղորդեց այն մասին, թէ ջարդերը շարունակւում են Բիթլիսում եւ շրջակայ գիւղերում: Այս քաղաքից տեղեկութիւն է ստացւել, թէ բոլոր գիւղացիները մահմեդական են դարձել՝ սրածութիւնից ու խոշտանգումներից ազատւելու համար:[7]) Կոտորածների նպատակը միայն հայերին բնաջնջելը չէր, այլ դա չարչարանքով իրականացնելը: Մարդինից ծածկագիր հեռագրով տեղեկութիւն է հաղորդում, որ այնտեղ տիրում է 1895 *թւականի կացութիւնը:*

Կոստանդնուպոլսի ամերիկեան դեսպանը, թուրքական կառավարութեանը ջարդերը դադարեցնելու խնդրանք յղելուց յետոյ, գնացել էր Գերմանիայի դեսպանի մօտ: Սակայն, Հեր Վանքենհայմն ասել էր, որ չի կարող միջամտել թուրքերի ներքին գործերին...

Վերոնշեալ բոլոր տեղեկատուները, գործնականապէս դատողութիւններ անելով սեփական աչքերով տեսածներից, չեն թաքցում իրենց այն համոզմունքը, թէ գերմանական քաղաքականութիւնն է կանգնած այս բոլոր շարժումների ու սոսկալի իրադարձութիւնների յետեւում՝ առաջնորդելով «Զուտ մահմեդական Թուրքիա՝ թուրքերի համար» կարգախօսով:

Զերդ Վսեմութեանը մի ուրիշ զուգահեռ եւս պէտք է ցոյց տամ: 1914 *թւականի մայիսին ճամբորդում էի դոկտ. Նազիմ բէյի հետ: Նա Իթթիհադի ոգին էր: Անւանապէս յոյների, սակայն իրականում յոյների եւ հայերի դէմ բոյկոտ հաստատելու պաշտօնն ունէր: Նա, ողջ յանցանքը հին թուրքերին վերագրելով, ինձ ասաց.* «Թուրք կառավարութեան գործը հիմա խիստ կնճռոտ է: Երբ նրանք (հին թուրքերը) յաղթանակել էին Եւրոպայի եւ աշխարհի յանդէպ, այնքան էլ հեռատես չգտնուեցին՝ երկիրը մաքրագործելու քրիստոնեայ տարրերից:

Տեղի տալով իրենց ասպետական զգացմունքներին՝ թողեցին, որ իրենց մէջ ապրեն քրիստոնեաներ: Եթէ այս մաքրագործումն այն ժամանակ կատարուած լինէր, երբ ոչ ոք չէր կարող բողոքել, ապա այժմ կառավարութեան գործիչների համար խիստ դիւրին կը լինէր կառավարել երկիրը»:

Ռուսների նահանջը գինովացրել էր թուրքերին: Նրանք մտածում էին, թէ հէնց հիմա է որոնուած պատեհութիւնը եւ ապացոյցներ կան՝ ցոյց տալու, որ ամենակարող դաշնակիցը՝ Գերմանիան, քաջալերում է իրենց՝ սեփական տունը մաքրագործելու ջանքերում: Դաշնակից պետութիւնների զեկոյցը թուրքերին չարգելեց յետ կանգնել այս չարիքը գործելուց: Թուրք պաշտօնեաները վստահ չեն իրենց վերջնական յաղթանակի հարցում, թէեւ գիտեն, որ երբ կորցնեն, այլեւս Թուրքիան իրենց համար ապաստարան լինել չի կարող:

Ընդհակառակը՝ դիզած դրամների շնորհիւ՝ Թուրքիայի պատասխանատու պաշտօնեաները կարող են թաքնուել այն երկրում, ուր իրենց չեն ձերբակալի եւ չեն աքսորի: Արդէն Թալէաթի եւ Էնուերի պէս պոռոտախօսները բացէիբաց ասում են, թէ պարտութեան դէպքում իրենք յոյս չունեն, որ ապրեն եւ սպասեն Դաշնակիցների հաշուեպահանջ սպառնալիքներին:

Թուրքահայերը չկարողացան թաքցնել իրենց զգացմունքները: Ես եւս, երբ Կոստանդնուպոլսում էի, հակառակ խոհեմութեանս, չկարողացայ թաքցնել զգացմունքներս այնքան ուշիմութեամբ, որ թուրքերը չկարողանային նշմարել:

1915 թուականի սեպտեմբերին թուրքական երգիծաթերթ «Կարագեօզ»-ն այսպէս էր գրում մի օր. «Եթէ հայերն ուրախանան, նշանակում է, թէ Դաշնակիցները յաղթութիւն են տարել, իսկ ընդհակառակը՝ եթէ հայերը տրտում ու տխուր լինեն, նրանց պարտութեան նշանն է»: Թուրքերը քրիստոնեայ տարրերին Թուրքիայից բնաջնջելու քաղաքականութիւնն են որդեգրել: Մենք էլ գոնէ այս գոհունակութիւնն ունենք, որ, մեր զգացմունքները յայտնելով, նրանց մնաս հասցրած կը լինենք:

Հաւատում եմ, որ գերմանացիները չէին ուզում բնաջնջել հայերին, եթէ հայերն այս պատերազմական խաղի մէջ վտանգաւոր դերակատարութիւն չունենային: Բայց, տեսնում եմ, որ հայերս գերմանացիներին վչտացրել ենք այդ հարցում:

Թուրքիայում գտնուող գերմանացիները, վերոնշեալ պատճառով, քաջալերել են Թուրքերին՝ հայերին բնաջնջելու դերում: Սա ապացուցած է այն իրողութեամբ, որ զանգւածային տեղահանութիւններ եւ ջարդեր մասնաւորապէս տեղի են ունեցել այն նահանգներում, որոնցում բնակւող հայերը կարող էին օժանդակել արշաւող բանակներին: Օրինակ՝ Դեօրթ-Եօլը եւ Զէյթունը սքանչելիօրէն կարող էին օժանդակել, եթէ Դաշնակիցները զօրք հանէին Փայաս:

Բիթլիսը Վանի երկրորդ դուռն է: Եթէ ռուսական բանակն առաջանար դէպի Բիթլիս, բնականաբար հայերը պիտի օգնէին՝ վանեցի հայերի նման: Էրզրումում նոյնպէս, լինելով ռազմաճակատային քաղաք, թէ՝ անհատներ կախեցին, թէ՝ զանգւածային ջարդեր կատարեցին: Մինչդեռ, ռազմաճակատից հեռու[8] գտնուող Էնկիւրին, Պրուսիան, Գոնիան, Կ. Պոլիսը, թէեւ հալածանքից զերծ չմնացին, սակայն այդ վայրերում զանգւածային ջարդեր տեղի չունեցան:

9. ԿԻԼԻԿԵՑԻ ՄԻ ՀԱՅ ԿՆՈՋ ԿՕՇԻԿԻ ԿՐՈՒՆԿԻ ՄԷՋ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՈՒՂԱՐԿՒԱԾ 3/36 ՕԳՈՍՏՈՍ 1915 ԹՒԱԿԻՐ ՆԱՄԱԿԸ

Այս գեղեցիկ պատեհութիւնից օգտւելով, աճապարանօք ու գաղտնի, Ձեզ եմ ուղարկում մահասարսուռ տեղեկութիւններ: Սարսափելի ճգնաժամից վերապրողների աղաղակն եմ արձագանգում Ձեր ականջներին: Թուրքերը մեր ազգն արմատից հնձելու, բնաջնջելու գործընթացի մէջ են: Գուցէ այս աղաղակը լինի Հայաստանից ստացւած վերջին ձայնը: Այլեւս մահւանից չենք վախենում: Մահը դարձել է մեր մտերիմը, քանի որ մեր աչքերով ենք տեսնում ողջ ժողովրդի մահը:

Մենք՝ կորուսեալներս, այլեւս միակ պարտականութիւն ունենք՝ աղաղակել, օգնութիւն աղերսել մեր եղբայրների կեանքերի համար: Բայց ի՜նչ. այս տողերն անկարող են նկարագրել մեր թշւառութիւնները: Հազարաւոր նման տողեր են անհրաժեշտ: Ներկայումս.....-ում 10.000-ից աւելի տարագրւած այրիներ ու որբեր կան: Նրանց մէջ տասնմէկ տարեկանից մեծ տղայ երեխաներ չկան: Հինգ ամսից աւելի է, ինչ ճամբորդում են: Շատ անգամներ են կողոպտւել, սակայն կրկին շարունակել են իրենց դաժան ճանապարհը՝ բոկոտն, մերկ ու քաղցած:

Կառավարութիւնը նրանց ընդամէնը միայն մէկ անգամ է մէկ պատառ հաց տւել: Ոմանք հազիւ թէ երկու անգամ ստացած լինեն: Ասում են, թէ տարագրւածների թիւը հասնում է 60.000-ի: Այնքան են նրանք ուժասպառ եղել, որ ոտքի վրայ կանգնել չեն կարողանում: Մեծամասնութիւնը, բոկոտն քայլելով ոտքերի վրայ սարսափելի վէրքեր ունի:

1- Քննութեամբ հաստատեցինք, որ 1.000 մարդկանցից 400-ը տասնմէկ տարեկանից բարձր տղաներ են, որոնք կարողացել են նախանշւած վայրը հասնել: 600-ից 380-ը սրածւել, սպանւել ու խեղդամահ են արւել ճամբորդութեան ընթացքում նրանց առաջնորդող ժանդարմների կողմից: 120 կանայք ու աղջիկներ եւ 40 մանուկներ առեւանգւել են, մնացածների մէջ արդէն չկայ ոչ մի գեղադէմ կին:

2- Վերապրողների 60%-ը հիւանդ է: Նրանք էլ անմիջապէս պէտք է ուղարկուեն այնտեղ, ուր նրանց է սպասում այդ անխուսափելի մահը: Ոչ ոք չի կարող նկարագրել այն գազանային վերաբերմունքը, որին ենթարկուել են տարագիրները:

3- Հինգ ամսից աւելի ճանապարհներին են եւ քանի՛-քանի՛ անգամներ են կողոպտուել: Նրանց ոչ միայն ուտելիք կամ այլ պաշար չի տրուել, այլեւ նոյնիսկ արգելուել է գնումներ կատարել, ջուր խմել այն առուակներից ու աղբիւրներից, որոնց վրայով կամ կողքով անցել են:

Գեղեցիկ կանանց ու աղջիկների երեք չորրորդը յափշտակուել է, իսկ մնացածները դարձել են ժանդարմների կրքերի զոհերը: Հազարաւորները մահացել են ճանապարհներին: Ականջներ խլացնող, ուղեղներ պայթեցնող այդ բոլոր գազանութիւնները նկարագրելն անհնար է թւում:

4- Ամենասաստիկ կոտորածները կատարուել են արեւելեան նահանգներում, որոնց հայ ազգաբնակչութիւնը զանգուածաբար քշուել է դէպի Հորանի անապատները՝ Քերեք եւ Մուսուլ: Այս վայրերում զոհերն աւելի շուտ բնական պատճառներով են աւելանում, քան՝ ջարդերի միջոցով:

Եթէ մի պահ նաեւ խորհենք, որ այս աքսորեալները, որոշ ժամանակ առաջ, ապրում էին եւրոպականացած ու հանգստաւէտ կեանքով, դիւրին կը լինի եզրակացնել, որ նրանք այլեւս չեն կարողանալու վերապրել հեռաւոր ու օտարամերժ միջավայրում, մինչեւ իսկ եթէ սուրն ու գնդակը նախապէս իրենց գործը կատարած չլինեն:

Բարեկամնե՛ր, այլեւս երկարացնել չեմ կարող: Ոչ ոք չի կարող ասել, թէ Հայաստանում հայ է մնացել: Վաղ թէ ուշ Կիլիկիան եւս նոյն վախճանին է արժանանալու: Կեանքից, պատւից, ինչքից զրկուած հայի վերջին աղաղակն է օգնութի՛ւնը. օգնութիւն՝ փրկելու վերապրողներին: Դրա՛մ, դրա՛մ է հարկաւոր՝ հաց գնելու նրանց համար:

Խօսակցութիւններ կան, թէ կառավարութիւնը երկրից վտարելու է կանանց ու մինչեւ տասնեօթ տարեկան երեխաներին: Ինչպիսի՞ն կը լինի նրանց վիճակը, ո՛ւր են գնալու, ո՞ր նաւն է տանելու նրանց: Ո՞վ է հայթայթելու ծախսերը: Մահւանից փրկուելու համար վայրկեան առ վայրկեան օգնութիւն ենք

ակնկալում: Փութացէք, հոգ չէ, թէ ինչպէս, միայն դրամ հասցրէք: Մենք այստեղ զրկուած ենք հաղորդակցութեան միջոցներից:

Դրամ ուղարկէք ամերիկեան կառավարութեան միջոցով: Նամակաբերս արժանի է բարձր վարձատրութեան: Նա եւս կը պատմի բոլոր մանրամասնութիւնները: Զոհրապը, Վարդգէսը, Տաղաւարեանը՝ հինգ ընկերներով, Ուրֆայի եւ Տիգրանակերտի մէջտեղում, Շէյթան Դերէ կոչուող վայրում, սպանուել են: Այդտեղ հազարաւոր անգլուխ դիակներ են սոսկում առաջացնում անցորդների մօտ:

Եփրատի ալիքները հազարաւոր կանանց ու մանուկների դիակներ են տանում: 15.000 զէյթունցիներ են աքսորուել դէպի Դեր Զոր: Նրանց այնտեղ չարչարում են ամենասոսկալի վայրագութեամբ. մայրեր լքուեցին ճամբէքի վրայ, գետերը նետուեցին հազարաւոր մանկիկներ: ԴՐԱ՛Մ, ԴՐԱ՛Մ. ասացէք ամերիկահայերին, թող անմիջապէս դրամ ուղարկեն:

Հազար վեց հարիւր հայեր գլխատուեցին Տիգրանակերտի բանտում: Հոգեւոր առաջնորդին անդամահատեցին եւ, վրան ալկոհոլ լցնելով, այրեցին բանտի բակում, մի խումբ ժանդարմների առջեւ, որ դհոլ-զուռնայով զւարճանում էին: Ադիամանի, Սելեֆքէյի ու Բէնեանի ջարդերը դժոխային սաստկութեամբ իրագործուեցին: Միմեանց հետ չորսական, երեքական կապուած դիակներ տեսանք Եփրատի ալիքների մէջ՝ աննկարագրելի կերպով յօշոտուած:

Վերոյիշեալ դէպքերի նկարագրութիւնները հաւաքուել են պաշտօնական աղբիւրներից ու ականատեսներից: Ամերիկեան հիւպատոսը կարող է կարգադրել նպաստի գործը, քանի որ թուրքական կառավարութիւնն առգրաւել է մեր ազգային ու անհատական կալուածները, վանքերը, դպրոցները, եկեղեցիները: 15.000 աքսորական հայեր կան քաղաքում, ովքեր մաս առ մաս դէպի Արաբիա են ուղարկուում: Ամբողջ Հայաստանն ամայացել է, դատարկուել հայերից: Այս նամակն ստորագրում եմ արիւնով:

10. 27 ՕԳՈՍՏՈՍ 1915. Կ. ՊՈԼԻՍ. ՕՏԱՐԱՀՊԱՏԱԿ Պ. Ն.-Ի ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂԱՐԿՒԱԾ ՄԵՋ՝ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԻՑ

Պարտիզակի բոլոր հայերին աքսորեցին: Բողոքական հայերին տեղահանութիւնից զերծ պահելու համար պրն. Մորգենթաուի կողմից տրուած խոստումը չյարգեցին: Միայն թէ Իզմիթի ժողովրդին մէկ շաբաթ կայարանում բացօթեայ պահեցին՝ թուրք ժողովրդին նախատինքի նշաւակ դարձած: Ցոյս չունեմ, որ կարողանանք գոնէ բողոքական հայերին ազատել:

Տեղահանութիւններ են կատարուել՝ Նիկոմիդիայում, Ադաբազարում, Սուազում, Խարբերդում, Տիգրանակերտում եւ Կիլիկիայում: Շատերը մահացել են, իսկ այս քաղաքում ապրողներն էլ բնաւ յոյս չունեն, թէ իրենք ապահով են: Ներփակ ուղարկում եմ նամակներ, որ կարող են գաղափար տալ երկրի կացութեան մասին:

Պրոֆեսոր Ք. Ք.-ն (55, 57 փաստաթղթերի հեղինակը) այստեղ եկաւ Ք. քաղաքից: Շաբաթներ շարունակ ճամբորդում էր, իսկ Ս. քաղաքում նրան յապաղեցրել էին բաւականին երկար ժամանակ: Նա պատմում է, որ Ք. քաղաքում եւ նրա շրջակայքի բնակավայրերում բնաւ հայեր չեն թողել: Պրն. Մորգենթաուն աշխատեց Ք. քաղաքի միսիոներական հաստատութիւններում գտնուող հայերին ազատել տեղահանութիւնից, սակայն նրան տրուած խոստումները չյարգուեցին:

Արդիւնքում քոլէջում թաքնուող հարիւր աղջիկներն ու երիտասարդ կանայք նոյնպէս աքսոր քշուեցին: Միսիոնի անդամներն ամենայն համարձակութեամբ թէեւ ընդդիմացան, սակայն «գայմագամը» սպառնաց կախաղան հանել իր հրամաններին դիմադրողներին: Հրամաններ, որ ո՛չ տարիք, ո՛չ սեռ եւ ո՛չ էլ որեւէ այլ պայման են խնայում:

Հայահալած շարժումն ամբողջ երկրում հասել է գագաթնակէտին: Սպանուել են ականաւոր հայերը: Իւրաքանչիւր հայ ընտանիք արդէն ունի այս կսկծալի փորձառութիւնը: Չկայ մի տուն, որ հարուած ստացած չլինի: Դժբախտաբար, ամերիկեան դպրոցների ազդեցութիւնը չքացել է. այդ դպրոցների դասատուները, վարժուհիներն աքսորուեցին, աղջիկները տարուեցին հարեմներ: Մի անախորժ խօսակցութիւն է շրջում, թէ հերթը յոյներին է գալու: Եթէ Ցունաստանը մասնակցի պատերազմին, հաւանաբար այս ասէկոսէներն իրական կը դառնան:

11. ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ՝ ԹՈՒՐՔԱՀԱՅՈՑ ԲՆԱՋՆՋՄԱՆ ՄԱՍԻՆ, 15/28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1915, ԲՈՒԽԱՐԵՍՏ՝ ՍՏԱՅԻԱԾ ԱՄԵՆԱՅՈՒՍԱԼԻ ՄԻ ԱՂԲԻՒՐԻՑ

1- Վեզիր Քէոբրիւ - Մարզւան - աճուրդով վաճառեցին 7-45 տարեկան բոլոր հայ աղջիկներին ու կանանց: Այնուհետեւ գնորդներին անվճար կանայք տուեցին:

2- Կեսարիայում 500 հայ ընտանիքներ բռնի իսլամացրին: Իսլամացած մի հայ Կոստանդնուպոլսում գտնուող իր որդուն գրում է. «Վատ հետեւանքներից խուսափելու համար՝ հետեւիր իմ օրինակին»:

3- Նահանգներում բոլոր դատական պաշտօնեաներին ազատեցին պաշտօններից եւ պաշտպանեցին աստիճանի բարձրացումներով այն բոլոր թուրք պաշտօնեաներին, ովքեր հայերին բնաջնջելու հարցում եռանդ եւ գործունէութիւն դրսեւորեցին: Կեսարիայի Դեւելուի «գայմագամ» Զեքի բէյը, որ հայ բանտարկեալներին անձնապէս խոշտանգելու եւ սպանելու գործին էր մասնակցել, դարձել է Կ. Պոլսի կուսակալութեան «մեքթուբչի»:

4- Երիտթուրքերը, իրենց գործած չարիքներն արդարացնելու եւ հայերի դէմ ատելութիւն սերմանելու համար, «Հայոց անջատողական շարժում» վերնագրով մի գիրք են հրատարակել: Մեծաղելի դիւային մի գիրք է. ընթերցողը նրա էջերում ոչ միայն կեղծ հրատարակութիւններ է գտնում, այլ նաեւ զէնքերի ու ռազմանիւթերի պահեստների մասին տեղեկութիւններ՝ վերագրուած հայերին:

5- Քոնիայում եւ ամենուրեք հայ զինուորների չտարագրուած կանայք վերցուել են թուրքերի տները՝ որպէս աղախիններ կամ հարճեր:

6- Մարաշում ռազմական ատեանը 300-ից աւելի հայեր գլխատեց: Բազմաթիւ են նրանք, ովքեր զոհուեցին տարագրութեան մէջ:

Բանդրմայում ռազմական ատեանը մահուան դատապարտեց բազմաթիւ ականաւոր հայերի: Առաջնորդական փոխանորդ Պարգեւ վարդապետը հինգ տարուայ բանտարկութեան դատապարտուեց: Էրզրումի հայոց առաջնորդ Սմբատ վարդապետին, վալիի հրամանով Կ. Պոլիս ուղարկելու պատրւակով, ճանապարհ հանելով, Երզնկայի կողմերում սպանեցին:[9] Իթթիհադի «Ջոլիրներն» սպանել են նաեւ Տրապիզոնի, Կեսարիայի, Մուշի, Բիթլիսի, Սղերդի, Երզնկայի հայոց առաջնորդներին:

Իզմիթի Զենքիլեր գիւղում 300 հայերի հրացանով սպանեցին՝ տեղահանութեան հրամանին չհնազանդուելու համար: Մալկարայի, Զոռլուի եւ Ռոդոսթոյի հայերն ամբողջովին զրկուել են իրենց ունեցուածքից՝ 1915-ի սեպտեմբերի 13/26-ին՝ լքեալ գոյքերի առժամեայ օրէնքի համաձայն: Այս նշուած վայրերում տղամարդկանց, կանանցից զատելով, աքսորեցին՝ Իզմիթի դիկտատոր չարագործ Իբրահիմի հրամանով:

Հազարաւոր հայեր են Կ. Պոլսից վտարուել դէպի Քոնիա եւ հեռուներ: Նրանք, կողոպտուելուց յետոյ, քշուել են հետիոտն: Բոլոր նրանք, ովքեր իրենց հետ դրամ են ունեցել, երկաթուղու ծախսը վերցնելուց բացի՝ ժանդարմները յափշտակել են նաեւ նրանց մօտ մնացած բոլոր դրամները, աներեւակայելի գներով ուտելիք վաճառել տարագիրներին: Անգամ արտաքնոցների դռները բացելու համար են դրամ վերցրել:

7- Հալէպից եկող գերմանացի ճամբորդները պատմում են տարագիր հայերի աննկարագրելի թշուառութեան մասին: Նրանք բոլոր ճանապարհներին քաղցից մահացած հայերի դիակների են հանդիպել: Բաղդադի եւ Սիրիայի արաբ պատւիրակները տեղեկագրում են, որ «Հորանի անապատներ քշուած տարագիրների թշուառութիւնն աննկարագրելի է: Երկաթողու վագոններից դուրս են հանում հազարաւոր հայերի՝ թողնելով ամայի լեռների մէջ, առանց ջրի ու հացի:

Արաբները բաւականին օգնում են հայերին քաղաքներում եւ գիւղերում, սակայն նրանց իջեցնում են արաբների տներից հինգից վեց ժամ հեռաւորութեան վրայ գտնուող վայրերում: Ճանապարհներին սովամահ եղած բազմաթիւ կանանց, աղջիկների ու երեխաների դիակներ տեսանք, ովքեր, չգիտենք, թէ ուր են նայում՝ օգնութեան հայցով»:

Շատ հայեր թշուառութեամբ ապրում են արաբների մէջ՝ Բաղդադից 48 ժամ հեռաւորութիւն ունեցող վայրերում: Ամէն

օր նրանցից մի քանիսը մահանում են քաղցից: Կառավարութիւնը ոչ միայն նրանց հաց չի տալիս, այլ նոր զօրքեր ուղարկելով այնտեղ, աւելի է վատթարացնում դժբախտ աքսորականների վիճակը:

8- *Երեք յատուկ յանձնախմբեր են ուղարկուել գաւառներ՝ ցուցակագրելու հայերի լքած գոյքերը՝ համաձայն* 13/26 *սեպտեմբեր թուակիր «Լքեալ գոյքերի օրէնք»-ի:*

12. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԷՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ՀՐԱՏԱՐԱԿՒԱԾ 1915-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ «ԶՈՆՆԵՆԱՈՒՖԳԱՆԳ» («SONNENAOUFGANG») ԹԵՐԹՈՒՄ, ՕՐԳԱՆ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ ԳԵՐՄԱՆԱՑԻ ԼԻԿԻ. ՀՐԱՏԱՐԱԿՒԱԾ ՆԱԵՒ «ԱԼԳԵՄԱՅՆԷ ՄԻՍԻՈՆ ՑԱՅԹՇՐԻՖԹ»-ՈՒՄ («ALLGEMINE MISSIONS ZEITSCHRIFT»).

ՆՈՅԵՄԲԵՐ, 1915

Այս վկայութիւնը խիստ նշանակալից է, որովհետեւ գերմանական աղբիւրներից է բխում, եւ գերմանական գրաքննութիւնն ամէն ջանք ի գործ դրեց՝ ոչնչացնելու այն:

«Sonnenaufgang»-*ի նոյն թիւը հետեւեալ խմբագրականն էր հրատարակել.* «Մեր նախորդ համարում հրատարակեցինք մեր քոյրերից Շուեսթեր Մէոհրինգի ճամբորդութեան փորձառութիւնները, բայց զգուշանում ենք հանրութեան դատին յանձնել այն բոլոր մանրամասնութիւնները, որ այնքան մեծ չափով հասել են մեզ:

Ինչպէս գիտեն մեր բարեկամները, դա մեզ վրայ խիստ թանկ է նստում, սակայն մեր երկրի քաղաքական կացութիւնն այսպէս է պահանջում»:

Երբ ստացուեց «Ալգեմայնէ միսիոն ցայթշրիֆթ»-ը, գրաքննութիւնը ճնշումներ գործադրեց խմբագրութեան վրայ եւ նոյեմբերի 10-*ին գերմանական մամուլին արգելեց վերատպել այս յօդուածը եւ հնարաւոր ամէն ինչ արեց՝ բռնագրաւելու թերթի այն համարները, որոնցում տեղ էր գտել այն: Սակայն, երկու հրատարակութիւնների օրինակներն անգամ Գերմանիայից դուրս ուղարկուեցին: Այս երկու ոճրացոյց յօդուածները սովորական աղբիւրներից են վերցուել: Թէեւ համառօտագրութիւններում միմեանց չեն համապատասխանում, սակայն, կողք-կողքի դրուելով, լրացնում են իրար:*

Ստորեւ տեղ գտած բնագրում առանց փականիշի հատուածները «Sonnenaufgang» եւ «Allgemeine Mission Zeitschrift» թերթերում են հրատարակուել: Եւ անկիւնաւոր փականիշերով հատուածներն են միայն «Sonnenaufgang»-ում հրատարակուել: [....] այսպիսի փականիշերով հատուածները երեւացել են միայն «Allgemeine Mission Zeitschrift» թերթում:

Մայիսի 30-ին 674 մարդկանց լցրեցին Տիգրիս գետի վրայ գտնուող տասներեք նաւակների մէջ՝ իբր թէ Մուսուլ պիտի տարուէին: Նահանգապետի թիկնապահը, յիսուն ժանդարմներով, օգնում էր փոխադրութեանը: Ժանդարմների կէսը, ձերբակալուածների հետ, նաւակների մէջ էին, իսկ միւս կէսը գետի եզերքն ի վեր ճամբորդեց: Սակայն, ճանապարհ դուրս գալուց քիչ անց ուղեկցողները ձերբակալուածներից վերցրին դրամները (6000 օսմանեան ոսկի) եւ հագուստները, իսկ նրանց գետը գցեցին:

Եզերքն ի վեր գնացող ժանդարմները, հրացաններից արձակած համազարկերով, սպանեցին ջուրը գցուածներին: Զոհերի հագուստները վաճառուեցին Տիգրանակերտի շուկայում: 700 երիտասարդների նոյնպէս զինուորագրելով՝ Կարա Բաղչէ Հաբաշի ճանապարհի շինութեանը մասնակցելու ուղարկեցին, թէեւ նրանցից յետոյ ոչ մի լուր չստացուեց: Ասում են, թէ Տիգրանակերտում հինգ-վեց քահանաների մերկացնելով, ձուլթ են լցրել նրանց վրայ եւ քաշքշել փողոցներով:

Հալէպի կուսակալութեան մէջ Հաճընի, Շարի, Ալբուստանի, Քէոքսունի, Թաշալուքի, Զէյթունի բնակիչներին տեղահան եւ իրաւազուրկ են արել: Ինչպէս նաեւ Ալաբաշի, Քեբէնի, Շիւիլջիի, Ֆրնուզի գիւղերի հայ ազգաբնակչութեան, շրջակայ Հասան Բէյլիի, Ֆունդաջքի, Հառնիի, Լափաշլիի ու Դեօրթ Օլի եւ ուրիշ գիւղերի բնակիչների հետ, եւս միեւնոյն կերպ են վարուել:

Նրանց քարաւաններով քշել են դէպի անապատներ՝ այնտեղ հաստատելու խոստումներով: [Մուսուլի մօտ, Բաղդադի երկաթուղագծի վրայ], Թէլ Արմէն գիւղում 5.000 հայեր կոտորեցին: Մի քանի կանայք ու աղջիկներ են միայն մնացել: Մարդկանց ողջ-ողջ նետեցին հորերի ու կրակների մէջ: Նրանց խաբեցին՝ ասելով, թէ հայերն ուղարկուելու էին Բաղդադի երկաթուղուց 24-30 կիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող վայրերը՝ նոր գաղթավայրեր հիմնելու համար:

Մինչդեռ, կանայք ու մանուկներն աքսորուում էին: Տղամարդկանց, բացի ծերերից, բոլորին զինուորագրել ու պատերազմ էին ուղարկել: Զանգուածային ջարդերն ստոյգ մահ են, որովհետեւ աքսորեալ կանայք ու մանուկները ո՛չ կարող են աշխատել, ո՛չ էլ՝ երկիր շէնացնել:

Մի գերմանացի հանդիպեց իրեն ծանօթ զինուորին, ով արձակուրդից վերադառնում էր Երուսաղէմից: Մարդուկը թափառում էր Եփրատի եզերքներով՝ իր կնոջն ու զաւակներին գտնելու յոյսով: Նա կարծում էր, թէ կարող էին այդ կողմերն աքսորուած լինել: Այսպիսի դժբախտների յաճախ էինք հանդիպում Հալէպում: Նրանք թափառում էին այնտեղ՝ յուսալով, թէ կորուսեալ ազգականների մասին կարող են լուրեր ստանալ: Զափից աւելի շատ անգամներ էր պատահել, որ ընտանիքի բացակայ անդամն իր տուն էր վերադառնում եւ ոչինչ չէր գտնում այնտեղ:

Մի ամբողջ ամիս Եփրատի ալիքների մէջ դիակներ էին երեւում՝ երկուական եւ վեցական միմեանց կապուած: Տղամարդկանց դիակները գազանաբար յօշոտուած [սեռական անդամները կտրուած եւ այլն] էին: Կանանց դիակներն էլ բոլորովին մերկ էին: Եփրատի վրայ հսկող թուրք զինուորական պաշտօնէութիւնը եւ Ճարաբլուսի «գայմագամը» թոյլ չէին տալիս թաղել դիակները՝ պատճառաբանելով, թէ չեն կարող որոշել մահացածների իսլամ կամ քրիստոնեայ լինելը եւ թէ այդ մասին որեւէ հրահանգ չի տուել: Եզերքներին գտնուող դիակները գիշակեր թռչունների ու գազանների կեր էին դառնում:

Այս իրողութեան ճշմարտացիութիւնը վկայում են բազմաթիւ գերմանացի ականատեսներ:

Բաղդադի երկաթուղայինի աշխատակիցներից մէկը տեղեկութիւն հաղորդեց, թէ Բիրեջիկի բանտն ամէն օր ցերեկը լցնում են բանտարկեալներով, իսկ գիշերն արդէն բանտը դատարկում են՝ ձերբակալուածներին նետելով Եփրատ գետը: Տիգրանակերտի եւ Ուրֆայի միջեւ գերմանական հեծելազօրերի հրամանատարը ճանապարհին անթիւ անհամար անթաղ դիակներ է տեսել:

Արաբկիրից Հալէպ հետեւեալ հեռագիրն է ստացուել. «Մենք բոլորս էլ ճշմարիտ կրօնն ընդունեցինք եւ շատ հանգիստ ու ապահով ենք»: Ադեամանի մօտ գտնուող մի գիւղի բնակիչներն իսլամացան եւ դեռեւս մնում են իսլամ: Հաճընում վեց տներ ցանկացան իսլամութիւն ընդունել, բայց հետեւեալը պատասխանեցին նրանց. «Հարիւրից պակաս ընտանիքներ չեն ընդունում»:

Հալէպը եւ Ուրֆան աքսորական քարաւանների հաւաքատեղիներն էին: Ցունիս եւ յուլիս ամիսների ընթացքում 5.000 հայեր բերուեցին եւ տարուեցին դէպի անապատներ: Մինչդեռ, ապրիլ, յունիս ամիսների ընթացքում 50.000-ից աւելի հայեր էին քշուել այս հաւաքատեղիներից:

Աղջիկներին յափշտակում էին զինուորներն ու իրենց հացկատակ (ծաղրածու, որ այլոց հացով է կերակրւում) արաբները՝ առանց բացառութեան: Մայր աստիճան յուսահատութեան հասած մի հայր ինձ խնդրեց վերցնել իր տասնհինգ տարեկան աղջկան, որովհետեւ այլեւս չէր կարողանում սպառնացող վտանգից պաշտպանել իրեն ու դստերը:

Ճանապարհներին լքած մանուկների թիւն անհամար է: Ծնընդաբերութեան ցաւերը բռնած կանանց ստիպում էին շարունակել իրենց ճանապարհը՝ առանց յետաձգման ու առանց դադարի: Այնթափի մօտ մի կին երկւորեակ ծնեց: Ցաջորդ օրը նրան ստիպեցին շարունակել ճանապարհը: Նա ստիպւած մի մացառի տակ գցեց իր երկու նորածիններին եւ, մի քանի քայլ այն կողմ, ինքը նոյնպէս մահացած՝ վայր ընկաւ: Մէկ ուրիշը, որ դարձեալ ծննդաբերութեան ցաւ էր քաշում, դատապարտւեց քայլելու եւ իսկոյն մահացած՝ գետնին ընկաւ: Մարաշում եւ Հալէպում նմանատիպ շատ դէպքեր պատահեցին:

Տասնհինգ մանուկներ հաւաքեցինք: Երեխաների այդ խմբի մէջ կային երեսունվեց մահացածներ, իսկ մնացածները՝ նիհար ու դալկահար: Աննկարագրելի են մեր տեսածները... (Քաղւածք Մարաշից գրւած մի նամակից, 4 յունիսի 1915, «Souenantgang», սեպտեմբեր 1915):

Շատ գիւղացիների թոյլ տւեցին իրենց հետ վերցնել գոյքերը, սակայն ճանապարհի կէսին յանկարծ ասացին. «Հրաման եկաւ, որ լեռնային ճանապարհով ենք անցնելու»: Այդ խօսքից յետոյ՝

աքսորեալներն ամէն ինչ թողեցին բանուկ ճանապարհի վրայ՝ եզներ, կառքեր, գոյքեր եւ սկսեցին գնալ լեռան դժւարին ճամբով: Խեղճ ժողովրդին խաբել էին:

Այս տարի եղանակը բացառաբար խիստ շոգ էր, ուստի՝ շատ կանայք ու մանուկներ, չդիմանալով շոգին, մահացան հէնց ճանապարհների վրայ: 30.000-ից աւելի տարագիրներ կան, որոնց մասին բնաւ լուր չունենք: Նրանք ո՛չ Հալէպ եւ ո՛չ էլ Ուրֆա են հասել:

13. ՀԵՏԵՒԵԱԼԸ Կ. ՊՈԼՍԵՑԻ ՄԻ ՕՏԱՐԱՀՊԱՏԱԿԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ Է, ՈՐ ՆԱ ԱՐԵԼ Է ՇՒԷՅՑԱՐԱՑԻ ՄԻ ՊԱՐՈՆԻ: ԱՅԴ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԻՇԵԱԼ ՊԱՐՈՆԸ ՄԵՋ Է ՀԱՂՈՐԴԵԼ ՋԵՆՈՎԱՅՈՒՄ

Երբ 1916-ի մարտին հեռանում էի Կոստանդնուպոլսից, հայերի վիճակն այսպիսին էր. դադարել էր ընդհանուր տեղահանութիւնը, թէեւ կառավարութիւնը միջամտում էր տեղական գործերին: Տաւրոսի լեռների եւ Կ. Պոլսի միջեւ գտնուող գիւղերում ու քաղաքներում մնացած հայերը նահանգից նահանգ, վայրից վայր էին փոխադրւում: Մայրաքաղաքում ձերբակալութիւնները շարունակւում էին, իսկ ձերբակալւածներին ուղարկում էին ներքին գաւառներ՝ սպանւելու եւ կամ սովից ու խոշտանգումներից մահանալու:

Հայերից բռնի յափշտակում էին դրամ ու պաշար: Պարէնի ու հացի բաշխման մէջ նոյնպէս հայերի նկատմամբ խտրականութիւն էին դրսեւորում այնպէս, ինչպէս տարբեր քրիստոնեայ հպատակների հանդէպ:

Բոլոր հայերի չարչարանքները, մանաւանդ աքսորեալներինը, սոսկալի էին: Շատերը մահանում էին սնունդի պակասից ու հիւանդութիւններից: Իսլամների մէջ աւելանում էր հակահայկական տրամադրւածութիւնը:

Այս տարւայ յունուարի սկզբներին Հալէպից ստացւած ամենաստոյգ տեղեկութիւններին նայելով՝ տեսնում ենք, որ դէպի Մուսուլ-Դեր Զոր-Հալէպ ու Դամասկոս աքսորւած հայերի թիւը հասնում է 492.000-ի: Նրանց մեծամասնութիւնը (փաստաթուղթ 139) կանայք են, մանուկներ ու ծերեր՝ զուրկ կեանքի համար անհրաժեշտ պարագաներից: Առանց բժշկի ու դեղորայքի՝ հիւանդութիւնները տարածւել էին աքսորեալների մէջ եւ հնձում էին նրանց:

Թուրքիայի ներքին գործոց նախարարը յայտարարեց, թէ 800.000 հայեր տեղահան են եղել, 300.000-ն սպանւել եւ կամ մահացել են զանազան պատճառներով: Ուրիշներն այս թիւը հասցնում են 1.200.000-ի եւ 500.000-ի:

14. ՀԵՌԱԳԻՐ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՊԱՍՏԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ, ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՈՒՂԱՐԿՒԱԾ ՆՈՅՆ ԿՈՄԻՏԷԻՆ՝ Կ. ՊՈԼՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱԼԷՊ- Մենք մեր նպաստով պահում ենք 1.350 որբեր, ովքեր քաղաքում լքւած մանուկների մէկ մասն են միայն: Կերակուր ենք բաշխում ինը տարբեր ամայի վայրերում հաւաքւած աքսորական ընտանիքների, որոնց համար ամսական 15.000 օսմանեան ոսկի է ծախսւում: Հալէպում գտնուող որբերին տրւում է 2.500 օսմանեան ոսկի:

Բայց, դրամն այնքան քիչ է, որ Համայի, Ռագգայի, Քիլիսի, Դամասկոսի շրջակայքի ամայի վայրերում գտնուող աքսորականներն անօթութիւնից խոտ են ուտում եւ հարիւրաւորներով մահանում են սովից: Նպաստի բաշխման գործընթացին հսկում են Ամերիկայի ու Գերմանիայի հիւպատոսները:

ՀԱԼԷՊԻ կենտրոնի հայերի համար օրական 1.000 օսմանեան ոսկի նպաստ է հարկաւոր:

ՄԱՐԱՇ- 10.000 հայեր տեղահանութեան սպառնալիքի տակ են գտնւում: Նրանք բոլորն էլ կարօտ են անմիջական նպաստի, որովհետեւ կառավարութիւնն արգելել է քրիստոնեաներին առեւտուր անել եւ դադարեցրել է իսլամ ու քրիստոնեայ կարօտեալների գործ հայթայթելու ձեռնարկը: Կացութիւնը նոյնն է նաեւ Այնթափում:

ԹԱՐՍՈՒՍ.- Հիւսիսային գաւառներից եկող տարագիրների կայանատեղի է: Համաձայն կառավարութեան հաշւարկի՝ 92.000 աքսորականներ են անցել այս քաղաքով: Թիֆիւսը սոսկալի աւերներ է գործում: Ամսական 5.000 ոսկի նպաստ է անհրաժեշտ:

ԱԴԱՆԱ- Այստեղ լցւել են 25.000 տարագիրներ՝ չհաշւած բնիկ քրիստոնեաներին: Այստեղ կարելի է հաւաքել լքւած մանուկներին եւ աղջիկներին: Ամսական 5.000 ոսկու կարիք կայ:

ՍԻԱՉՈՒՄ ծովեզերեայ քաղաքներից հաւաքւել են բազմա-

թիւ մանուկներ ու կանայք, որոնց կերակրում ենք նպաստով: Այստեղ ամսական 2.500 օսմանեան ոսկու անհրաժեշտութիւն կայ:

Քոնիա, Խարբերդ, Մարզւան, Զմիւռնիա, Պրուսիա քաղաքներում եւս նպաստ ենք բաշխում կարօտեալներին:

ՎԱՆԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Վանի կուսակալութիւնը Օսմանեան կայսրութեան բոլոր նահանգներից աւելի ջախջախիչ մեծամասնութեամբ բնակչութիւն ունէր:

Ռուսաստանին ու Պարսկաստանին սահմանակից այս նահանգը 1914-1915 թւականներին վերածւեց հիւսիսարեւելեան ռազմաճակատային գծի: Այդ իսկ պատճառով նշած թւականներին, թուրքերի Կովկասեան յարձակումը ձախողւելուն պէս, ռուսներն ամենից առաջ արշաւեցին այս՝ հիւսիսարեւելեան ռազմաճակատային գծի ուղղութեամբ:

Այս հատւածում տեղ գտած վաւերաթղթերը մանրամասն ու կատարելապէս փաստւած ու ամբողջական պատմութիւն են՝ վերցւած հինգ տարբեր աղբիւրներից: Վանայ դէպքերը խիստ կարեւոր լինելով՝ անհրաժեշտ է դրանք ուսումնասիրել խորին հետաքրքրութեամբ, որովհետեւ Օսմանեան կայսրութիւնում հայ-թուրքական յարաբերութիւնների խզման եւ տարագրութիւնների ու սրածութիւնների առիթ հանդիսացան:

Մեզ դարձեալ մատնացոյց են անում որոշ ապացոյցներ, համաձայն որոնց՝ Վանում տեղի ունեցած հայկական ապստամբութիւնը կանխակալ պատրաստւածութեամբ չէր կատարւել, ինչը ճգնում է պաշտօնապէս հաստատել Օսմանեան կառավարութիւնը: Հայերը զէնքի դիմեցին ինքնապաշտպանութեան համար: Ուստի՝ նախայարձակման ամբողջ պատասխանատուութիւնը ծանրանում է Ջեւդէթ բէյի վրայ: Նա կազմակերպեց ջարդեր՝ ուղղակի հրաման ստանալով Կոստանդնուպոլսից:

15. ՎԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻՍԻՈՆԻՑ ԱԿԱՆԱՏԵՍ ՕՐ. ՌԷՅՍ ՀԻԳԼԻ ՆԵՊԻ[10] 1915-Ի ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝ ՀՐԱՏԱՐԱԿՒԱԾ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Ասիական Թուրքիայի ամենագեղեցիկ քաղաքներից մէկն էր Վանը: Այն գտնւում է Վանայ լճի եզերքին եւ լեռնադաշտի մէջտեղում՝ զարդարւած այգիներով ու հրաշք պարտէզներով՝ շրջապատւած հոյակապ լեռներով: Պարսպապատ քաղաքում էին գտնւում հանրային շէնքերն ու շուկան, որի վրայ տիրաբար վեր էր խոյանում մի հսկայ ժայռ՝ ցցւած դաշտի մէջտեղում: Ժայռը յայտնի է իր դիրքով ու բազմաթիւ բեւեռագրերով:

Պարսպապատ քաղաքից դէպի արեւելք՝ չորս մղոն հեռաւորութեան վրայ, գտնւում է Այգեստան կոչւող եւ իր գեղեցկութեամբ յայտնի թաղամասը: Երկու մղոն լայնութեամբ թաղամասն ունէր ընդարձակ ու փարթամ այգիներ եւ գեղատես պարտէզներ, որոնք մեծ տարածութիւն էին զբաղեցնում:

Բնակչութեան թիւը յիսուն հազար էր, որի երկու հինգերորդը թուրքեր էին, իսկ երեք հինգերորդը՝ հայեր: Հայերն առաջադիմական էին ու փառասէր եւ թուրքերի նկատմամբ ունէին թէ՛ թւական, եւ թէ՛ բարոյական առաւելութիւններ: Ռուսաստանի մօտենալով՝ յեղափոխական կուսակցութիւնը բաւականին նկատելի ուժ էր դարձել: Կային երեք գլխաւոր առաջնորդներ՝ Վռամեանը, որը Օսմանեան կայսրութեան Պատգամաւորական ժողովի անդամ էր, քաջավարժ ռազմագէտ Իշխանը եւ ղեկավար Արամը, որոնց մասին յետոյ ենք խօսելու:

Կուսակալը յաճախ էր բարեկամաբար խորհրդակցում նրանց հետ: Ամերիկեան միսիոնարութեան շէնքերը գտնւում էին Այգեստանի հարաւարեւելեան կողմի միջնամասում, գետնից մի փոքր բարձրացրած, տեսանելի դիրքում: Այս շէնքերը բաղկացած էին երկու նորակերտ մեծ եկեղեցիներից, ինչպէս նաեւ երկու փոքր դպրոցներից, ասեղնագործութեան արհեստանոցից, հիւանդանոցից, դեղատնից եւ չորս միսիոնարների տներից:

Հարաւային կողմում կար մի ընդարձակ դաշտ: Այստեղ էին գտնուում զօրանոցները: Զօրանոցների ու ամերիկեան կալւածների միջեւ ոչինչ չկար: Դէպի հիւսիս ու նաեւ մօտակայքում տներով ու փողոցներով միմեանցից բաժանուած, ուրիշ մեծ զօրանոցներ եւս կային: Դարձեալ դէպի հիւսիս Թոփրաք-Ղալայի բլուրն էր գտնուում, որն ամերիկացիները «Պղպեղի տուփ» էին անւանում: Մեզանից հինգ վայրկեան հեռու՝ դէպի արեւելք, գտնուում էր գերմանական որբանոցը, որը ղեկավարում էին Շուէյցարիայում բնակւող գերմանացի Հեր Սթորրին, նրա կինը, դուստրը եւ էլի երեք օրիորդներ:

1914-1915 թւականներին ամերիկացի հետեւեալ անձինք՝ վետերան միսիոնար տիկին Ռէյնոլդսը (դոկտոր Ռէյնոլդսը մէկուկէս տարուց աւելի դրամ էր հաւաքել Ամերիկայում Վանի Ամերիկեան կոլէջի համար: Սակայն, երբ դրամը տեղ էր հասցրել, սկսւել էր պատերազմը, եւ այդ պատճառով՝ նա չէր կարողացել վերադառնալ հայրենիք), հիւանդանոցի բժիշկ ու կառավարիչ դոկտոր Քլերենս Իշերը (Ըշրը), տիկին Իշերը, որը զբաղւում էր բարեգործական եւ ասեղնագործական արհեստանոցի գործով, տղաների վարժարանի եւ ընդհանուր գործերի վարիչներ տէր եւ տիկին Էռնեստ Եէրօները, աղջիկների վարժարանի տեսուչ օր. Քարթրիստ Ռոջերսը, նախակրթարանի տեսուչ օր. Քարոլին Սիլեմէն էին գտնուում Վանում:

Այստեղ էին նաեւ երկու հայ եւ մէկ թուրք մանկապարտիզպանուհիներ, ովքեր ստանձնել էին մանկապարտէզի հոգսը: Անգլուհի օր. Լուիզ Բոնդը ղեկավարում էր հիւանդանոցի գործը: Օր. Էլիզաբեթ Էլէնը երաժշտութիւն էր դասաւանդում, իսկ օր. Գրիզէլ Մագրալէն շրջիկ միսիոնարուհի էր: Վանում, թւարկածս անձանց հետ էի նաեւ ես, որ այստեղ էի եկել Բիթլիսից: Ամերիկացիների ընդհանուր թիւը հասնում էր 10-ի:

ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ՄԷՋՏԵՂՈՒՄ

Աշնան եւ ձմռան զօրաշարժերի ժամանակ բոլոր հայերը՝ հարուստ թէ աղքատ, անխնայ կողոպտւել էին՝ զինուորականների գրաւումների պատրւակով: Թուրքական բանակում գտնւող հայ զինուորները լքած էին, քաղցած կամ կիսակուշտ՝ դատապարտւած խրամատներ փորելու եւ ձեռքի աշխատանքներ կատարելու: Սակայն, ամէն գիշեր, զրկւելով իրենց զէնքերից, յանձնւում էին իրենց դարաւոր թշնամու՝ մահմեդական ընկերների քմահաճոյքին: Ուստի՝ կամ փախչում էին, կամ, «բեդել» վճարելով, առժամանակ ազատւում: Իսկ նրանք, ովքեր այս երկուսից ո՛չ մէկն էին կարողանում անել եւ ո՛չ էլ միւսը՝ բնաւ չէին յանձնւում եւ մնում էին փախստական:

Զգում էինք, որ հաշւեյարդարի օրը մօտ է, եւ վաղ թէ ուշ՝ երկու հակառակորդ ուժերի բախումն անխուսափելի էր: Բայց, յեղափոխականները, հիանալի խոհեմութեամբ եւ սեփական անձերի վրայ ճիգ գործադրելով, զսպում էին իրենց տաքգլուխ երիտասարդութեանը: Պահակներ էին շրջում փողոցներում՝ ընդհարումներն արգելելու համար: Նրանք գիւղացիներին պատւիրեցին լռել ու համբերել: Հրկիզւած գիւղերի բնակիչներին յորդորեցին վրէժխնդիր չլինել՝ լաւագոյնս համարելով մի քանի գիւղերի կործանումը, քան դրանք փոխադարձելն ու թուրքերին հայերի ջարդն սկսելու պատրւակ տալը:

Էնւեր փաշայի փեսան՝ Ջեւդէթը, Թուրքիայի ընդհանուր պատերազմին մասնակցելու ընթացքում, Վանի կուսակալն էր: Բաւականին ժամանակ բացակայելով քաղաքից՝ գնացել էր սահմանագլուխ՝ պատերազմելու: Գարնան սկզբներին քաղաք վերադարձաւ: Այն ժամանակ ամէն ոք զգաց, որ «մի բան պէտք է անի»: Հայերից 3.000 զինուորներ պահանջեց: Ի սէր անդորրութեան՝ հայերը խոստացան գոհացնել այս պահանջը:

Սակայն, այդ ընթացքում Շատախի հայերի ու թուրքերի միջեւ տագնապ առաջացաւ: Ջեւդէթը խնդրեց, որ, Իշխանը եւ էլի ուրիշ յեղափոխական լիդերներ, որպէս խաղաղութիւն հաստատող պատւիրակներ, այդ բնակավայրը գնան՝ ժողովրդին հանդարտեցնելու համար: Ճանապարհին նա չորսին էլ դաւաճանա-

բար սպանել տուեց ապրիլի 16-ի ուրբաթ օրը: Խաբէութեամբ կանչեց նաեւ Վռամեանին եւ ձերբակալելով՝ ուղարկեց Կոստանդնուպոլիս:

Հայ յեղափոխականներն այլեւս չէին կարող վստահել Ջեւդէթին: Նրանք որոշեցին չյանձնել պահանջած 3.000 զինուորներին՝ պատճառաբանելով, թէ միայն 400-ին կարող են տալ, իսկ միւսների համար փրկագին վճարել: Վալին (նահանգապետը) այս պատասխանն իրաւախոհութիւն չհամարեց: Հայերը խնդրեցին դոկտ. Իշերին եւ տիկին Եէրոյին՝ միջնորդել նահանգապետի մօտ եւ համոզել նրան: Սակայն, նա պահանջեց անպայման հնազանդուել իր հրամանին: Այս ապստամբութիւնն ամէն գնով խեղդելու էր Շատախն ու Վանը: Այդ միջոցին, եթէ ապստամբները հրացան վերցնէին, ամենքն էլ կը սպանուէին: Նախ այրերն ու կանայք, իսկ յետոյ արդէն ծեր ու մանուկ էին անխնայ պատժուելու:

Մեր ողջ ուժով շեշտում ու հաւաստիացնում էինք, թէ ապըստամբութիւն չի նախապատրաստուում, թէ յեղափոխականներն անդորրութիւն պահպանելու հաստատ մտադրութիւն ունեն եւ իրենց ամբողջ ուժով ու հնարաւորութեան սահմաններում զգուշանալու էին ապստամբութիւնից: Սակայն, Թուրքերը գաղտնաբար հայոց Այգեստան թաղամասի շուրջ խրամատներ սարքեցին: Փոխադարձաբար՝ յեղափոխականները նոյնպէս խրամատների պաշտպանողական գիծ պատրաստեցին եւ որոշեցին իրենց կեանքը հնարաւորութեան սահմաններում թանկ վաճառել:

Ջեւդէթ բէյը ցանկութիւն յայտնեց, ամերիկեան կալւածների պաշտպանութեան համար, յիսուն զինուոր ուղարկել: Կա՛մ պարտաւոր էինք ընդունել պահակազօրը եւ կա՛մ գրաւոր յայտարարութիւն պիտի տայինք, թէ արւած առաջարկը մերժուել է, որպէսզի մեր ապահովութեան համար Ջեւդէթ բէյը պատասխանատուութիւն չկրէր: Նա անմիջական պատասխան պահանջեց, բայց վերջում համաձայնեց սպասել մինչեւ առաջիկայ կիրակի:

Մեր մի շարք հայ բարեկամներ համամիտ էին պահակազօր ընդունելու առաջարկին: Սակայն, յեղափոխականները յայտարարեցին, որ այսպիսի մի ուժ նման կենտրոնում կը սպառնար

հայկական ուժերի ապահովութեանը եւ բնականաբար, երբեք թոյլ չպիտի տային, որ այսպիսի մի ուժ ողջ ու առողջ տեղ հասնէր մեր հաստատութիւններ:

Մենք ցանկանում էինք հինգ մարդուց բաղկացած պահակախումբ ունենալ, սակայն Ջեւդէթ բէյը կա՛մ յիսուն հոգի պիտի տար, եւ կա՛մ ոչ մի հատ: Ցիրաւի, երկու կրակի մէջտեղում էինք. եթէ երկուսն էլ՝ թէ յեղափոխականները, եւ թէ՛ նահանգապետը պնդէին իրենց խօսքերը, ապա, պահակներ ուղարկուէին թէ ոչ, ծագելիք վտանգի պատճառը մենք կը լինէինք: Պաշտօնական կողմից որեւէ վստահութիւն չէինք ունենալու՝ մեր ապահովութեան եւ հազարաւորների փրկութեան առումով, ովքեր ապաստանել էին մեր կալւածներում: Երկու կողմից էլ կը մեղադրուէինք նաեւ ծագած դժբախտ հետեւանքների համար:

Երկուշաբթի օրը դոկտ. Իշերը դարձեալ տեսաւ նահանգապետին: Նա խիստ վարանոտ էր եւ հարցրեց՝ ուղարկի՞ պահակներ թէ՝ ոչ: Դոկտ. Իշերը որոշումը թողեց նրան՝ ասելով, թէ կարող է վտանգ ծագել, եթէ այդպիսի ուժ ուղարկուի:

Միեւնոյն ժամանակ Ջեւդէթ բէյը օր. Մարքարին եւ Շուսթեր Մարթային խնդրեց, ովքեր ամբողջ ձմեռ թուրքական զինուորական հիւանդանոցում հիւանդապահներ էին, շարունակել իրենց գործը: Նրանք համաձայնեցին գնալ հիւանդանոց:

ՊԱՏԵՐԱԶՄ «ԻՇԻՄ ԵՕՔ, ՔԷՅՖԻՄ ՉՈՔ»

Ապրիլի 20-ի երեքշաբթի օրը, առաւօտեան ժամը 6-ին, թուրք զինուորները փորձեցին բռնել մի կին՝ գիւղացի կանանց խմբից: Երկու հայ զինուորներ ցանկացան միջամտել, բայց թուրք զինուորներն իսկոյն սպանեցին նրանց, իսկ թուրքական խրամատներից էլ սկսեցին կրակ բացել:

Պաշարումն սկսւել էր: Կրակը շարունակւեց ամբողջ օրը: Բուն քաղաքի եւ Այգեստանի կապն ու յարաբերութիւնները դադարեցին: Բերդի վրայից թնդանօթի նշանառութեան տակ էին վերցրել քաղաքի տները, որոնք, կրակի բոցերով բռնկւած, այրւում էին: Մենք լսում էինք այդ մշտատեւ թնդանօթաձգութիւնը:

Այգեստանի բոլոր հայերը՝ 30.000 հոգի, որովհետեւ միջնաբերդի հայ ազգաբնակչութիւնը քիչ էր, հաւաքւած մէկ քառակուսի մղոն տարածութեան վրայ, ութսուն դիրքերով պաշտպանւում էր՝ չհաշւած պարիսպն ու խրամատները: Հայոց մարզւած զինուորական ուժի 1.500 հոգուց միայն երեք հարիւրը հրացան ունէին: Ռազմանիւթի առատ պաշար էլ չունենալով՝ ստիպւած էին խիստ խնայող լինել եւ ամէն տեսակ խորամանկութեամբ խաբում էին թշնամուն, որպէսզի վերջինս չռայլօրէն վատնէր իր ռազմամթերքը:

Շատ կարճ ժամանակ անց սկսեցին օրական 2.000 հատ վառօդ, գնդակ ու փամփուշտ պատրաստել: Պատրաստեցին նաեւ ռմբարձակ խորտակիչներ: Այս ռազմական իրերը պատրաստելու համար նախանիւթը խիստ քիչ էր, իսկ գործիքներն ու միջոցները՝ շատ նախնական: Սակայն, թշնամուն նեղելու եւ իրենցից հեռու պահելու գործում յուսալից էին ու կարող: Ունէին հետեւեալ զինուորական կանոնները՝ լինել մաքուր, չհարբել, ճշմարտութիւնն ասել, թշնամու կրօնը չհայհոյել:

Թուրքերին յայտարարեցին, որ իրենց միակ վէճը Ջեւդէթ բէյի հետ է, այլ՝ ոչ թէ թուրք հարեւանների: Նահանգապետերը կարող էին գալ ու գնալ, սակայն երկու ցեղերը պէտք է միասին ապրէին: Հայերը յոյս ունէին, թէ Ջեւդէթի մեկնելուց յետոյ՝ պէտք է վերահաստատւէին բարեկամական յարաբերութիւնները՝ հայերի եւ թուրքերի միջեւ: Թուրքերը նոյնպէս միեւնոյն ոգով պատասխանեցին՝ ասելով, թէ ստիպւած են կռւել: Մի շարք երեւելի թուրքեր այս պատերազմի դէմ յայտարարութիւն հրատարակեցին, սակայն Ջեւդէթ բէյը բանի տեղ չդրեց:

Հայերը գրաւեցին ու այրեցին մեր կալւածների հիւսիսային կողմում գտնւող զօրանոցները, թէեւ յետոյ լքեցին դրանք եւ աւելի առաջ չտարան իրենց յարձակողական գործողութիւնները, որովհետեւ թւով խիստ քիչ էին եւ կռւում էին ոչ թէ յարձակողական նպատակներով, այլ՝ իրենց տներն ու կեանքը պաշտպանելու համար: Մենք անկարող էինք չհամակրել նրանց, թէեւ ամէն կերպ ջանացինք չեզոք մնալ: Թոյլ չտւեցինք, որ զինւած հայերից որեւէ մէկը ներս մտնի մեր կալւածները:

Նրանց լիդեր Արամը, մեր կալւածների չեզոքութիւնը պաշտպանելու համար, արգելեց իրենց վիրաւորներին մեր իսկական հիւանդանոցներում տեղաւորել: Դոկտ. Իշերն օգնում էր հիւանդներին բուժել իրենց հիւանդանոցներում: Ջեւդէթ բէյը դոկտ. Իշերին գրեց, թէ զինեալ մարդիկ են տեսել մեր կալւածներում եւ թէ ապստամբները խրամատներ են փորել: Եթէ յարձակման ժամանակ այս խրամատներից յանկարծ գնդակ արձակւէր, ապա «ցաւով ստիպւած» պիտի լինէր թնդանօթաձգութեամբ քանդել-կործանել մեր կալւածները: Վստահաբար, գիտէինք դա եւ նրան պատասխանեցինք, որ ամէն կերպ պահպանում ենք ամերիկեան կալւածների չեզոքութիւնը, եւ որ ոչ մի օրէնքով, մեր կալւածներից դուրս, մենք պատասխանատու չէինք անհատների ու կազմակերպութիւնների արարքների համար:

Նահանգապետի հետ մեր պաշտօնական թղթակցութեան ներկայացուցիչն Իտալիայի դերհիւպատոս պրն. Սպորտոնն էր, իսկ թղթատարը մի պառաւ կին, որ սպիտակ դրօշով էր շրջում: Երբ երկրորդ անգամ գնում էր, ոտքը սահեց եւ ընկաւ մի փոսի մէջ: Ոտքի կանգնելիս՝ չհասցրեց բարձրացնել սպիտակ դրօշը եւ վայրկենապէս սպանւեց թուրք զինուորների կողմից: Մի ուրիշ կին գտանք, որ դարձեալ վիրաւորւեց մեր շրջափակում հէնց իր դռան առջեւ նստած ժամանակ:

Դա իմանալով՝ Արամն ասաց, որ այլեւս թղթակցական կապ

իրականացնել թույլատրել չէր կարող, մինչեւ նահանգապետը չպատասխանէր Սպորտոնի նամակին: Հիւպատոսն այդ նամակով Ջեւդէթ բէյին ասել էր, թէ վերջինս իրաւունք չունէր սպասել, որ հայերն անձնատուր լինեն, որովհետեւ հայերի դէմ պայքարը ջարդի բնոյթ էր ստացել:

Ջեւդէթը մեզ չէր թոյլատրել թղթակցել օր. Մակլարէնի հետ եւ նրան գրած մեր նամակներն անպատասխան էր թողնում, թէեւ երկու շաբաթ անց գրեց «Herr Sporri»*-ին, թէ ինքն ու օր. Մարթան արձակուրդում էին: Դոկտ. Իշերը մանկութիւնից ի վեր ճանաչում էր նահանգապետին եւ միշտ բարեկամական յարաբերութիւններ ունէին միմեանց հետ: Սակայն, գերմանական կալւածներում ապաստանած աւստրիացի դրամատիրոջն ուղղած մի նամակում գրում էր, թէ սպաներից մէկը ռուսներից թնդանօթներ եւ մի քանի գերիներ է առել եւ թէ դրանցով «նո-ին վեհափառութեան»՝ դոկտ. Իշերի պատնէշների առջեւ մի անցք պիտի բացել տար, որպէսզի նա, որ «ապստամբների» հետ միշտ ռուսների գալստեանն էր սպասում, «տեսնէր նրանց ու հրճւէր»:*

Այս նամակը հետեւեալ բառերով էր վերջանում. «Իշիմ եօք, քէյֆիմ չոք»: *Այն ժամանակ, երբ գրում էր այս խօսքերը, իբր թէ ինքը գործ չունէր եւ շատ «քէյֆ» ունէր. իր զինուորներն ու վայրագ քուրդերն ամբողջ գաւառն աւերում էին՝ ջարդելով տղամարդկանց, կանանց ու երեխաներին եւ այրելով նրանց տները: Մանկիկներին սպանում էին իրենց մայրերի գրկերում: Փոքրիկ տղաները սոսկալիօրէն անդամահատւում էին: Կանայք մերկացւելով դանակոծւում էին:*

Գիւղերը պատրաստւած չէին յարձակմանն ընդդիմանալու, եւ շատերը չկարողացան դիմադրել: Ուրիշները դիմադրեցին՝ մինչեւ վերջացաւ իրենց ռազմամթերքը: Ապրիլի 25-ի կիրակի օրը գիւղացի փախստականների առաջին քարաւանը հասաւ քաղաք: Առաւօտ կանուխ լսեցինք, որ շարունակ բախում էին մեր դուռը: Դոկտ. Իշերը գիշերանոցով դուրս եկաւ՝ լսելու նրանց աղեխարշ պատմութիւնը, եւ վիրաւորներին ուղարկեց հիւանդանոց:

ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ՝ ՏՈՒԺՈՂՆԵՐԻՆ

Այգեստանից վեց հազար հոգի, առաջին իսկ պատեհ առիթով, լցւել էին մեր կալւածները: Իրենց բոլոր ունեցւածքներով՝ եկեղեցին, դպրոցը, սենեակները, մինչեւ իսկ միսիոնարաց տները խճողւել էին: Մի կին այսպէս ասաց օր. Սիլիմէնին. «Առանց այս տեղի՝ ի՞նչ պիտի կարողանայինք անել. երեք ջարդերից ազատւելու համար երեք անգամ այստեղ եմ ապաստանել»: *Այս ժողովրդի մեծ մասին պէտք էր կերակրել, որովհետեւ աղքատ, օրահացով ապրող մարդիկ լինելով՝ այժմ այս հացից էլ էին զրկւել:*

Նրանց պատսպարել, կերակրել, կառավարել, առողջապահական հոգսը տանել, յեղափոխականների հետ յարաբերութիւն հաստատել. ահա այսպիսի առեղծւածային խնդիրները լուծելու համար պահանջւում էր մեծ կենցաղագիտութիւն եւ վարչական կարողութիւն: Հայերն անկարող էին այս դժւարութիւնները հարթել, ուստի՝ միսիոնարների օգնութեանը դիմեցին:

Պրն. Եէրօն կազմակերպչական սքանչելի տաղանդ ունէր: Նա շատ արագ ամէն ինչ կարգի բերեց: Ամէն ոք, իրեն համապատասխանող յարմար գործի անցնելով, անմնացորդ աշխատում էր: Քաղաքային կանոնաւոր կառավարութիւն կազմւեց 30.000 *բնակիչների համար՝ դատաւորներով, ոստիկաններով ու քաղաքապետով, այնպէս որ՝ քաղաքը սրանից առաջ երբեք այսքան լաւ չէր կառավարւել: Մասնախմբեր կազմւեցին՝ դիմադրելու որեւէ պատահարի: Ցորեն գնւեց ունեցողներից՝ հասարակութեան կարիքների համար: Շատերն անձնուրաց ոգի դրսեւորեցին:*

Մի մարդ, իր ընտանիքի համար մէկ ամսւայ պաշար վերցնելուց յետոյ, մնացած ամբողջ ցորենը նւիրեց ժողովրդին: Մի հասարակաց փուռ կառուցւեց, հացի համար շրջաբերութեան մէջ մտան տոմսեր, եւ ապուր պատրաստելու համար հասարակաց խոհանոց բացւեց: Առօրեայ պարէն էր տրւում մեր կալւածներում ապաստանած իւրաքանչիւր հայի, ինչպէս նաեւ դրանցից դուրս գտնւողներին, ովքեր սնունդի կարիք ունէին:

Օր. Ռոջերսն ու օր. Սիլիմէնը կաթ հայթայթեցին, եւ աշակերտուհիները տաքացնելով՝ ամէն օր բաժանում էին 190 մանկիկների: Նեւիլ Իշերը՝ 13-ամեայ պատանին, իր ջանքերով Բոյ Սկաուտ կազմակերպեց եւ յառաջապահի ծառայութիւն էին կատարում՝ շէնքերը մաքուր պահելով ու պաշտպանելով հրդեհի վտանգներից, վիրաւորներին պատգարակներով փոխադրելով եւ շաբաթուայ չորրորդ օրը կաթ ու հաւկիթ բաժանելով մանուկներին ու հիւանդներին, ովքեր մեր կալւածներից դուրս էին գտնւում:

Մեր հիւանդանոցում, որ հազիւ թէ յիսուն մահճակալ կարող էր պահել, 167 մահճակալ յարմարեցրինք՝ փոխառնւած անկողիններով: Այն վիրաւորները, ովքեր կարող էին քայլել, կանոնաւորապէս գալիս էին հիւանդանոց՝ բուժւելու: Շատ դժւար վիրաբուժական միջամտութիւններ էին կատարւում՝ թշնամու կողմից աներեւակայելի վայրագութեամբ կատարւած անդամահատութիւնները բուժելու համար: Դոկտ. Իշերը, պաշարւած քաղաքի միակ վիրաբոյժը, ոչ միայն իր սեփական հիւանդանոցի հոգսն էր կրում իր ուսերին կամ վիրաւոր զինւորներին եւ ապաստանողներին բուժում, այլ նաեւ ստիպւած էր մեր կալւածներից դուրս գտնւող բազմաթիւ հիւանդներին եւս հետեւել:

Բացօթեայ բնակւելն ու զրկանքները քաղաքում ապաստանողների մէջ առաջացրին թոքաբորբ, տիֆ (թանչք) հիւանդութիւններ, իսկ փոքրիկ մանուկների մօտ տարածւեց հարսանիթի համաճարակ: Օր. Սիլիմէն ստանձնեց հարսանիթով հիւանդների յատուկ տաղաւարի խնամքը: Օր. Ռոջերսը եւ օր. Իշերն օգնեցին հիւանդանոցին, ուր օր. Բոնդն ու հայ հիւանդապահուհի ընկերներն աշխատում էին արդէն իրենց կարողութեան չափով:

Որոշ ժամանակ անց՝ տկն. Իշերն ու օր. Ռոջերսը, մի հայ դրպրոցից տարագիրներին դուրս հանելով, այն հիւանդանոցի վերածեցին: Խիստ դժւարութեամբ կարողացան հայթայթել անկողին, դեղորայք եւ այն ամէնը, ինչն անհրաժեշտ էր հիւանդանոցին: Դժբախտաբար, նոյն տարին Վանի միսիոնարական հաստատութիւնների համար դեղորայքն ու վիրաբուժական յանձնարարութիւններն ու համապատասխան գործիքներն Ամերիկայից ճանապարհել էին, եւ դեռեւս մնում էին Իսկենդերունում:

ՄՈՒԹ ՕՐԵՐ

Երկու շաբաթ անց բերդաքաղաքում գտնւող ափաչափ հայ ժողովրդին յաջողւեց մեզ լուր ուղարկել, թէ քաջաբար դիմադրութիւն են ցոյց տալիս եւ գրաւել են կառավարական մի քանի շէնքեր՝ հակառակ գիշեր-ցերեկ անդադար շարունակւող թնդանօթաձգութեանը: Թնդանօթների ու «շրափնէլ»-ի 16.000 գընդակներ էին արձակւել նրանց վրայ:

Հին ձեւով սարքւած գնդակները, առանց վնասելու, ծակում էին երեք ոտնաչափ հաստութեան աղիւսապատերը: Միայն երեք անձանց կորուստ ունեցանք, որովհետեւ ժողովուրդը ներքեւի յարկերում էր ապաստանում: Այգեստանի տարբեր կողմերից եւս թնդանօթաձգութիւն սկսւեց, սակայն վնասները մեծ չէին: Այնպէս էր թւում, թէ թշնամին իր ծանր թնդանօթները վերջին գործողութեան համար էր վերապահել:

Առաջին շաբաթուայ ընթացքում մեր կալւածների վրայ թընդանօթի երեք գնդակներ ընկան. մէկը դոկտ. Իշերի տան դռան առջեւ եւ սպանեց մի մարդու, տասներկու հոգի էլ թեթեւ վիրաւորւեցին: Մեր կալւածները գտնւում էին կենտրոնական դիրքի վրայ: Այդ իսկ պատճառով՝ երբ բզզալով անցնում էին թուրքերի գնդակները, շատ սենեակների մէջ էին մտնում, կոտրատում տանիքների կղմինդրները եւ ծակծկում պատերը:

Այնքան վարժւեցինք հրացանի գնդակների սուլոցներին ու թնդանօթների հարւածներին, որ այլեւս ցերեկները շատ քիչ ու շաղրութիւն էինք դարձնում դրանց, սակայն գիշերային սաստիկ հրաձգութիւնները ցնցում էին մեր նեարդերը:

Արճեշից եկած մի փախստական մեզ պատմեց այդ քաղաքին հասած աղէտի մասին: Արճեշը, Վանից յետոյ, վիլայէթի կարեւոր ու բազմամարդ քաղաքն էր: Գայմագամն ապրիլի 29-ին բոլոր դասակարգի արական սեռի ներկայացուցիչներին կանչել էր իր մօտ: Լինելով հայերի բարեկամը՝ վերջիններս վստահաբար գնացել էին, ու երբ բոլորն արդէն հաւաքւած են եղել, նա իր զինւորներին հրամայել է ջարդել նրանց:

Մեծ թւով գիւղացի փախստականներ, քաղաքից քիչ հեռու, Շուշանաց գիւղում էին հաւաքւել: Արամը նրանց հրամայեց այն-

տեղ մնալ: Մայիսի 8-ին տեսանք, որ այդ գիւղը բոցերի մէջ էր: Վարագայ վանքը նոյնպէս այրուեց՝ իր թանկարժէք հին ձեռագրերով հանդերձ: Այս գիւղացիները քաղաք լցուեցին: Թուում էր, թէ Ջեւդէթ բէյը փոխել է իր գործելակերպը: Հարիւրաւոր կանայք ու մանուկներ խռնուեցին քաղաքում, որպէսզի, այնտեղի պաշարուած ժողովրդի հետ, սովամահ լինեն:

Նախորդ աշնանը, զօրաշարժի պատճառով, Այգեստանում ցորենի պաշարը սովորականից շատ աւելի քիչ էր: Հիմա 10.000 փախստականների օրական պարէն էր տրւում, թէպէտեւ տրւածը հազիւ թէ չմեռնելու համար էր բաւականացնում: Ռազմամթերքի հետ ուտելիքի պաշարը նոյնպէս սպառւելու վրայ էր: Ջեւդէթ բէյը թուրքերի համար ուզածի չափ ռազմանիւթ, մարդիկ եւ ուտելիքի պաշար կարող էր բերել տալ ուրիշ քաղաքներից:

Եթէ Ռուսաստանից օգնութիւն չգար, անկարելի էր այլեւս երկար դիմադրել: Այսպիսի օգնութեան յոյսը խիստ թոյլ էր: Արտաքին աշխարհի հետ որեւէ յարաբերութիւն չունէինք: Պաշարումից առաջ՝ մեր դեսպանատուն ուղարկելու համար մի հեռագիր պատրաստեցինք: Ցեղափոխականներն էլ շրջակայքում գտնւող ռուսահայ կամաւորներին շարունակ օգնութեան կոչեր էին ուղարկում, սակայն բնաւ լուր չէինք ստանում՝ տեղ հասնո՞ւմ էին արդեօք դրանք թէ՝ ոչ:

Միայն գիտէինք, որ եթէ թուրքերը պաշարումը խստացնէին, պաշարուած քաղաքի ամբողջ բնակչութիւնը, իբրեւ վերջին յոյս, մեր կալւածներն էին խուժելու: Հնարաւո՞ր էր յուսալ, թէ կատաղած Ջեւդէթ բէյը կը խնայի մարդկանց, յատկապէս կանանց ու երեխաներին: Երբեք ոչ. այդպիսի ակնկալիք ու հաւատք չունէինք: Նա թերեւս խնայէր մեր՝ ամերիկացիներիս կեանքը, եթէ լքէինք մեր կալւածները: Սակայն, մենք նախընտրում էինք լինել մեր ժողովրդի բախտակիցը: Թերեւս Ջեւդէթ բէյը երաշխաւորէր մեր ապահովութիւնը՝ համոզւած լինելով հանդերձ, որ մենք օգնում ենք ապստամբներին:

Ցիրաւի, մութ օրեր էին: Ամերիկացիներս շաբաթական երկու անգամ հաւաքներ էինք ունենում եւ ընթացիկ խնդիրների մասին վիճում կատակախառն: Միեւնոյն ժամանակ, հետեւում էինք մի քանի քայլ այն կողմ լսւող սաստիկ հրաձգութեանը: Գիտէինք, որ հերոսական, սակայն տկարացող դիմադրութիւնը վերջապէս կարող է խորտակւել, եւ մեր գլխին պայթելու էր դժոխքը: Գիտէինք նաեւ, որ ականատես ենք լինելու մեր սիրելիների հանդէպ գործադրւելիք խոշտանգումներին, ինչն զգալու էինք մեր մարմինների վրայ: Ուստի՝ աղօթում էինք Աստծուն, որ, եթէ կարող է, մեզ ազատի առիւծների երախից:

Շաբաթ առաւօտեան, թուրք կանանցով ու մանուկներով լեցուն, նաւեր երեւացին Վանայ լճի վրայ: Ժողովուրդը բարձրացել էր քաղաքի տների տանիքներին եւ այդ տեսարանն էր դիտում՝ զարմացած ու շւարած: Մի անգամ էլ նմանատիպ փախուստ էր տեղի ունեցել այն ժամանակ, երբ ռուսներն առաջացել էին դէպի Սարայ: Իսկ երբ նահանջեցին, թուրք ընտանիքները կրկին վերադարձան:

Այդ օրը, կէսօրից յետոյ, երկինքը դարձեալ մթագնեց: Դաշտում գտնւող մեծ զօրանոցի թնդանօթներն սկսեցին մեր ուղղութեամբ կրակ բացել: Նախ սկզբում չկարողացանք հասկանալ, որ պատճառը մեր դրօշակն է: Բայց, այդ մասին տարակուսել անհնար էր: Եօթը ռումբեր ընկան մեր կալւածների վրայ: Դրանցից մէկն ընկաւ օր. Ռոջերսի, իսկ միւսը՝ օր. Սիլեմէնի տան տանիքին՝ մեծ անցք բացելով: Երկու ուրիշ ռումբեր տղաների ու աղջիկների դպրոցի տանիքը ծակեցին: Կիրակի առաւօտեան դարձեալ սկսւեց հրաձգութիւնը եւ մինչեւ կէսօր քսանվեց ռումբեր ընկան մեր կալւածների վրայ:

Երբ ծանր թնդանօթաձգութիւնն սկսւեց, դոկտոր Իշերը գտնւում էր իր հիւանդանոցում: Իսկոյն մեր սեփական հիւանդանոցից վազեցի նրանց տուն եւ իրենց փոքրիկ զաւակներին տան ամենաապահով տեղը՝ առաջին յարկի նրբանցքի մէջ տեղաւորեցի: Այնտեղ լսում էինք «չրաբնէլ»-ի հարւածների բզզոցը եւ սարսռում դրանց պայթիւնից:

Ցանկարծ խլացուցիչ մի աղմուկ ցնցեց տունը: Վազելով սենեակս գնացի: Այնպէս էր ծխով լցւել, որ մի քայլ առաջ տեսնել չկարողացայ: Մի ռումբ երեք ոտնաչափ հաստութեան պատը ծակեց ու պայթեց՝ փլցնելով սենեակի պատերը: Վայր ընկաւ նաեւ դիմացի սենեակի դուռը: Ռումբերից մէկը տկն. Ռէյնոլ-

դսի սենեակում պայթելով՝ սպանեց մի հայ աղջնակի:

Կէսօրից անց մեր տարածք արդէն տասից աւելի ռումբեր էին ընկել: Ջեւդէթ բէյը մեր կալւածները ռմբակոծելու սպառնալիքն էր ի գործ դրել: Սա ապացուցում էր, որ եթէ քաղաքը գրաւած լինէր, իրենից որեւէ գթութիւն չէինք կարող յուսալ:

ԶԵԿՈՅՑ

Արարատի վերեւում մռնչացող փոթորիկները եւ կամ Համաշխարհային պատերազմի ամենամեծ ճակատներում որոտացող թնդանօթները նւազ ահաւոր պայթիւններ չարձակեցին, քան այն ցաւի աղաղակը, որ պոռթկաց հայութեան կրծքից՝ իր միլիոնաւոր զաւակների ահասարսուռ սպանդին ի տես:

Ձայրացաւ բարի մարդկանց խիղճը: Եւ թուրքերի, վայրագութեամբ ի գործ դրած, աներեւակայելի տանջանքներից ազդուած մարդասէր անգլիացի ազնւական ԼՈՐԴ ՋԷՄՍ ԲՐԱՅՍԸ գրիչը ձեռքն առաւ եւ արձանագրեց Հայոց Մեծ Եղեռնի ամենադառն ու ողբալի եղելութիւնները:

Ազնւական ու մեծանձն լորդի այս գործը, հեռու ամէն տեսակի կանխակալ ու միակողմանի տեսութիւններից եւ դատաստաններից, ամենաիրական ու ճշգրիտ վկայութիւնների վրայ հիմնւած, մեր մարտիրոսագրութեան սգատխուր յիշատակարանն է:

Խորի՜ն մեծարանք նրա հեղինակին:

Իսկ ես մտովի թռչում եմ Բոսֆորի ափերով՝ հիացմունքով ու երախտագիտութեան խորին զգացմունքով եւ խոնարհւում եմ Ալբիոնի այս մեծափառ զաւակի առջեւ՝ համբուրելու նրա ձեռքերը, որոնք ստեղծեցին այս անզուգական գործը:

Բարեբախտ է նաեւ մեր ազնիւ բարեկամ պատւելի տիար Բենիամին Պետրոսեանը, ում ահա յաջողւում է հայերէն թարգմանութեամբ լոյս ընծայել այս անմահանուն երկասիրութիւնը, անբաղդատելի ու անմրցելի ցարդ հրատարակւած նմանօրինակ հրատարակութիւնների մէջ եւ, որպէս այդպիսին, ջերմ քաջալերանքի արժանի ժողովրդի բոլոր խաւերից՝ այդ քաջալերանքը նկատելով ազգասիրական պարտականութիւն:

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

---

1)- Այս նամակից մէկ օրինակ տրւել է «Բեռներ թաքւախթ»-ին՝ շւէյցարացի պատմաբան Ֆորսէլի կողմից եւ արտատպւել «Ջուռնըլ դը Ժնեւ»-ում, 17 օգոստոսի 1916-ին: Ստորագրել են

չորս անձինք՝ շուէյցարացի պատմաբան Գրեթերը, գերմանացի պատմաբան Նիփափը, միւս երկուսի անունները դոկտ. Ֆորսէլը չի յայտնել:

2)- 11 յունուարի 1916, Ռայխստագում, Լիբնեխտի հարցապնդման ժամանակ, վերջինս հետեւեալ պատասխանը տուեց՝ Գերմանիայի արտաքին գործոց նախարարութեան քաղաքական դիւանատան պետը, Հեր Ֆոն Սթիմանը, վարչապետը տեղեկութիւն ունե՞ն մեր թշնամիների կողմից կազմակերպւած յեղափոխական ցոյցերի մասին, որ տեղի են ունեցել Հայաստանում եւ պատճառ դարձել, որ թուրք կառավարութիւնը տեղահան անի հայերին՝ նրանց համար յատուկ տեղեր հայթայթելով (փաստաթուղթ 123): Այս մասին հակազդելու համար՝ խորհրդակցում ենք թուրքական կառավարութեան հետ:

3-Այլ խօսքով՝ երբ վաւերաթղթի վերնագրի հետ կցւած չէ որեւէ ծանօթութիւն, թէ խմբագիրը հեղինակի անունը գիտի, խորհրդանշող մի սկզբնատառով ցոյց է տրւում այս կէտը:

4)- Այո՛, առանց դաւանական խտրականութեան՝ 70-ից աւելի հայ հռոմէական եկեղեցականներ, մինչեւ իսկ քոյրեր, 50-ից աւելի հայ բողոքական ձեռնադրւած երէցներ եւ քարոզիչներ: Նահատակւած հայ լուսաւորչական կղերականների թիւն անցնում է 700-ից: Ծ. Թ.:

5)- Բիթլիսի ժողովրդին երբեք այսպիսի դիւրութիւն չի տրւել: Մազապուրծ ազատւած կանայք ու աղջիկները պատմում են, թէ, տնից դուրս հանելուց անմիջապէս յետոյ, իրենցից վերցրել են ճամբորդութեան համար վերցրած ողջ պաշարը՝ ասելով. «Դուք մեռնելու էք գնում, պաշարն ի՞նչ պիտի անէք»: Ծ. Թ.:

6)- Այս վայրերում գտնւած հայ բողոքական ու կաթոլիկ կղերականները եւս նահատակւել են, սակայն նամակագիրը մոռացել է այդ մասին յիշատակել: Ծ. Թ.:

7) -Բիթլիսի կուսակալութեան մէջ բոլոր հայերն անխնայ կոտորւել են. բնաւ պատեհութիւն չի տրւել հայերի մահմեդական լինելուն: Միայն Մոտկան լեռնագաւառի քուրդերն են պաշտպանել տեղացի հայերին: Սակայն, կառավարութիւնը, պրոպագանդիստներ ուղարկելով, քուրդերին համոզել է ջարդել այդ խլեակներին: Քուրդերից ոմանք կոտորել են հայերին, ինչպէս Քասախ մեծ գիւղում, ոմանք էլ, դրամի դիմաց յանձնել են ռուսներին:

8) -Էնկիւրիի զանգւածային ջարդը, քաղաքից դուրս, սարսափելի է եղել կուսակալ.....: Ծ. Թ.:

9)-Հայ բողոքականների հովիւ Վեր. Գ. Գրքաշարեանին եւս նրա հետ միասն են նահատակել: Ծ. Թ.:

10)- Այս ազնիւ ամերիկուհին մի հայ-ամերիկուհի է՝ եանկիական ու հայկական առաքինութիւններով օժտւած: Ծնւել է Բիթլիսում, Քուշինգ Նէփի միսիոնարի դուստրն էր եւ քոյրը Ջորջ Քուշինգ Նէփի, «մեր Ջորջի», ինչպէս նրան անւանում էին բիթլիսցիները, որը նահատակւեց 1915 թւականին, Բիթլիսի եղեռնի ժամանակ: Ծ. Թ.:

Բովանդակություն

Կեղծիքն էլ իր չափն ունի....5

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ....11

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆԱԽԱԲԱՆ....13

Բ ՆԱՄԱԿ....16

Գ ՆԱՄԱԿ....17

Դ ՆԱՄԱԿ....19

Ե ՆԱՄԱԿ....20

Զ ՆԱՄԱԿ....22

ԽՄԲԱԳՐԻ ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐԸ....37

Ա- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ....49

ՎԱՒԵՐԱԹՂԹԵՐ....50

2. 11 ՅՈՒՆԻՍԻ 1915 ԹՒԱԿԻՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ՈՒՂԱՐԿՒԱԾ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՊԱՍՏԱՀԱՒԱՔ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ՝ Կ.ՊՈԼՍԻՑ, ՔԱՋԱՏԵՂԵԱԿ ԵՒ ՉԷՋՈՔ ՄԻ ԱՂԲԻՒՐԻՑ....53

3. 8 ՅՈՒԼԻՍԻ 1915 ԹՒԱԿԻՐ ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂԱՐԿՒԱԾ ՄԻԵՒՆՈՅՆ ԿՈՄԻՏԷԻՆ....53

4. 15-28 ՅՈՒՆԻՍ 1915 ԹՒԱԿԻՐՆԱՄԱԿԸՄԻԵՒՆՈՅՆ ԱՂԲԻՒՐԻՑ ԷՈՒՂԱՐԿՒԵԼ «ԿՈՉՆԱԿ»-ԻՆ ԵՒ ՆԻՒ ԵՕՐՔ ՀԱՍԵԼ....54

5. Կ. ՊՈԼԻՍ 12/25 ՅՈՒՆԻՍ ԹՒԱԿԻՐ ՆԱՄԱԿԸ ՆՈՅՆ ԱՂԲԻՒՐԻՑ՝ ՀՐԱՏԱՐԱԿՒԱԾ «ԿՈՉՆԱԿ»-ՈՒՄ Ի ՆԻՒ ԵՕՐՔ....57

6. ՆԱՄԱԿ ՄԻԵՒՆՈՅՆ ԱՂԲԻՒՐԻՑ, 26 ՅՈՒԼԻՍԻ 1915, Կ. ՊՈԼԻՍ՝ ԳՐՒԱԾ ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԿՐԻՑ ՀԵՌՈՒ ԳՏՆՒՈՂ ՆՇԱՆԱՒՈՐ ՄԻ ՀԱՅԻ ԿՈՂՄԻՑ....58

7. ՆԱՄԱԿ ՄԻԵՒՆՈՅՆ ԱՂԲԻՒՐԻՑ, 2-15 ՕԳՈՍՏՈՍԻ 1915, Կ. ՊՈԼԻՍ. ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԿՐԻՑ ՀԵՌՈՒ ԳՏՆՒՈՂ ՄԻԵՒՆՈՅՆ ՀԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԳՐՒԱԾ....61

8. ԱԹԷՆՔ 8/21 ՅՈՒԼԻՍ 1915 ԹՒԱԿԻՐ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՄԻ ԹՈՒՐՔԱԲՆԱԿ ՀԱՅԻ ՆԱՄԱԿԻՑ ՔԱՂՒԱԾՔ, ՈՐԸ ԳՐԵԼ Է ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԻՐ ՀԱՅ ԲԱՐԵԿԱՄԻՆ....67

9. ԿԻԼԻԿԵՑԻ ՄԻ ՀԱՅ ԿՆՈՋ ԿՕՇԻԿԻ ԿՐՈՒՆԿԻ ՄԷՋ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՈՒՂԱՐԿՒԱԾ 3/36 ՕԳՈՍՏՈՍ 1915 ԹՒԱԿԻՐ ՆԱՄԱԿԸ....71

10. 27 ՕԳՈՍՏՈՍ 1915. Կ. ՊՈԼԻՍ. ՕՏԱՐԱՀՊԱՏԱԿ Պ. Ն.-Ի ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂԱՐԿՒԱԾ ՄԵՋ՝ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԻՑ....74

11. ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ՝ ԹՈՒՐՔԱՀԱՅՈՑ ԲՆԱՋՆՋՄԱՆ ՄԱՍԻՆ, 15/28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1915, ԲՈՒԽԱՐԵՍՏ՝ ՍՏԱՑՒԱԾ ԱՄԵՆԱՅՈՒՍԱԼԻ ՄԻ ԱՂԲԻՒՐԻՑ....76

12. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԷՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ՀՐԱՏԱՐԱԿՒԱԾ 1915-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ «ԶՈՆՆԵՆԱՈՒՖԳԱՆԳ» («SONNENAOUFGANG») ԹԵՐԹՈՒՄ, ՕՐԳԱՆ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ ԳԵՐՄԱՆԱՑԻ ԼԻԿԻ. ՀՐԱՏԱՐԱԿՒԱԾ ՆԱԵՒ «ԱԼԳԵՄԱՅՆԷ ՄԻՍԻՈՆ ՑԱՅԹԾՐԻՖԹ»-ՈՒՄ....79

13. ՀԵՏԵՒԵԱԼԸ Կ. ՊՈԼՍԵՑԻ ՄԻ ՕՏԱՐԱՀՊԱՏԱԿԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ Է, ՈՐ ՆԱ ԱՐԵԼ Է ՇՒԷՅՑԱՐԱՑԻ ՄԻ ՊԱՐՈՆԻ: ԱՅԴ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԻՇԵԱԼ ՊԱՐՈՆԸ ՄԵՋ Է ՀԱՂՈՐԴԵԼ ՋԵՆՈՎԱՅՈՒՄ....84

14. ՀԵՌԱԳԻՐ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՊԱՍՏԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ, ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՈՒՂԱՐԿՒԱԾ ՆՈՅՆ ԿՈՄԻՏԷԻՆ՝ Կ. ՊՈԼՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ....85

ՎԱՆԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ.....86

15. ՎԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻՍԻՈՆԻՑ ԱԿԱՆԱՏԵՍ ՕՐ. ՌԷՅՍ ՀԻԳԼԻ ՆԵՊԻ 1915-Ի ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝ ՀՐԱՏԱՐԱԿՒԱԾ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ.....87

ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ՄԷՋՏԵՂՈՒՄ.....89

ՊԱՏԵՐԱԶՄ «ԻՇԻՄԵՕՔ, ՔԷՅՖԻՄՉՈՔ».....92

ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ՝ ՏՈՒԺՈՂՆԵՐԻՆ.....95

ՄՈՒԹ ՕՐԵՐ.....97

ԶԵԿՈՅՑ.....101